

**«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՏԱՐԱԾՍՇՐՁԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՁԻ  
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ  
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

**Երևան - 2021**

## ՆԱԽԱԲԱՆ

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի (այսուհետ՝ ՎՁՏՊՔ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվել և իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից, որոնցից մեկն ուսանող է:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթական գործընթացի իրականացման վրա:

Զեկույցը պարունակում է ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ ..4	
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....	13
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎՋՊՔ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	17
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ .....	19
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ .....	19
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ .....	22
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ .....	29
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ .....	39
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ .....	43
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄ .....	50
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ .....	54
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....	60
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՅՈՒՄ .....	63
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ .....	68
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ .....	74
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b> .....	75
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ .....	75
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԸ .....	76
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ .....	79
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ .....	83
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ .....	84
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ .....	85

ՎՁՏՊԹ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից<sup>1</sup>: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է. **Գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:**

Փորձագիտական խումբը հաշվի է առել ՎՁՏՊԹ-ի, որպես միջին մասնագիտական ուսումնական հաստատության, կապերը ինչպես ԿԳՄՄՆ-ի և, մասնավորաբար, ՄԿՈՒԶԱԿ-ի հետ, այնպես էլ նշանակությունը Վայոց Ձորի մարզի և, դրանով իսկ, ՀՀ-ի համար: Փորձագիտական խումբը հաշվի է առել նաև այն հանգամանքը, որ ՎՁՏՊԹ-ն առաջին անգամ է անցնում հավատարմագրման գործընթաց:

ՎՁՏՊԹ-ն անփոխարինելի դերակատարություն ունի տարածաշրջանում վերջինիս աշխատաշուկայի միջին մասնագիտությամբ պայմանավորված պահանջարկը լրացնելու հարցում, միաժամանակ այն շահակիցների կողմից դիտվում է որպես բուհերում շարունակական կրթության ապահովման օղակ: Սակայն ՎՁՏՊԹ-ն դեռևս չի կարողացել լիարժեք ներգրավել շահակիցներին, իր «նշանակության վետորի», «առաջնահերթությունների կոորդինատների», ինչպես նաև դրանց հասնելու հստակ կորերի նախագծման և իրագործման հարցում:

ՎՁՏՊԹ-ն կարևորում է ռազմավարական կառավարումը և այս տեսանկյունից նկատելի է որակի ապահովման մեխանիզմների դրական ազդեցությունը դրան ուղղված քայլերի ձեռնարկման և մեխանիզմների ներդրման տեսանկյունից, սակայն դեռևս չի հաջողվել ռեսուրսների և հնարավորությունների հստակ հաշվառում և դրանց հիման վրա պլանավորում իրականացնել: Միաժամանակ առկա է խզում պլանավորման և իրականացման գործընթացների միջև: Քոլեջը անկանխատեսելի է համարում նաև համագործակցությունները և դրանց շրջանակները, ուստի չի կարողանում նաև այդ հենքով հստակ երկարաժամկետ և միջնաժամկետ պլանավորումներ իրականացնել, գլխավորապես առաջնորդվում է պահի ստեղծված հնարավորություններով: Քոլեջը կարևորում է որակի ապահովման գործընթացները, ներդրել է բավականին մեխանիզմներ, հարցումներ են անցկացնում տարբեր շահակիցների շրջանում: Չնայած հետազոտությունների մեթոդաբանությունը և որոշումները հետազոտահենք ու տվյալահենք դարձնելու գործընթացը դեռևս կայացման անհրաժեշտություն ունի: Միաժամանակ դեռևս որակի կառավարման սկզբունքը գործընթացների կառավարման համար մշակույթի

<sup>1</sup> Հավելված 1. Փորձագիտական խմբի անդամների ինքնակենսագրականներ

վերածելու անհրաժեշտություն կա: Քուլեջը կարևորում է շահակիցների և հասկապես գործատուների կարծիքները և հաշվի է առնում առանձին գործատուների զարգացման միտումները, սակայն նրանց լայն շրջանակի ներգրավված չլինելը կարող է խոչընդոտել քուլեջի հնարավորությունների լիարժեք իրացմանը: Ռազմավարական տարբեր նպատակների իրագործման համար մարդկային ռեսուրսների սուղությունը խնդիր է քուլեջի համար, ինչը քուլեջը լուծել է տարբեր հանձնախմբերի և աշխատանքային խմբերի ստեղծմամբ, այս մեխանիզմը հաջողել է առանձին դեպքերում կառավարման համակարգում նվիրյալ աշխատակիցների կատարած աշխատանքի արդյունքում, սակայն վերջինս հետագա ինստիտուցիոնալացված երաշխիքներ չի տալիս գործընթացների շարունակական իրականացման համար:

Վերոնշյալի արդյունքում փորձագիտական խումբը եզրակացնում է, որ որակի ապահովման և կառավարման բավականին մեխանիզմներ են ստեղծված, որոնք հնարավորություն են ընձեռում ապահովելու կառավարման համակարգի շարունակական բարելավումը և արդյունավետության ապահովումը, սակայն դեռևս գործընթացների և զարգացման պլանավորումը չի բխում հնարավորությունների, ռեսուրսների և ռիսկերի հստակ հաշվառումից, և առկա է խզվածք պլանավորման ու իրականացման գործընթացներում:

ՎՁՏՊՔ-ի ՄԿԾ-ները կազմված են ՈԱՇ-ին և ՊԿԶ-ներին համապատասխան, սակայն աշխատաշուկայի ուսումնասիրման հստակ մեխանիզմների և գործընթացների բացակայությունը խոչընդոտում է ՄԿԾ-ների՝ աշխատաշուկայի հարափոփոխ զարգացումներին և գործատուների պահանջներին համապատասխանեցնելուն: Առկա է գիտելիքի գնահատման, դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչպես նաև այդ մեթոդների մանրամասն նկարագիր, սակայն պրակտիկ և վերլուծական կարողությունները երաշխավորող մեթոդները դեռևս անկատար են: Քուլեջը կարևորում է նաև ՄԿԾ-ների իրականացման գործընթացի գնահատումը և ներդրել է որոշ մեխանիզմներ, որոնք դեռևս ոչ լիարժեք արդյունավետությամբ են գործում: Քուլեջը կարևորում է գործատուների ներգրավվածությունը ՄԿԾ-ների մշակման, իրականացման և բարելավման գործընթացներում, սակայն դեռ ցանկալի և արդյունավետ կերպով չի հաջողվում դա ապահովել:

ՎՁՏՊՔ-ն դասախոսական կազմի ընտրության ժամանակ առաջնորդվում է ՊԿԶ-ներով ներկայացվող հիմնական պահանջներով: Գնահատելի է քուլեջի ձգտումը՝ ուղղված դասախոսական կազմի կատարելագործմանը, փորձի փոխանակման և լավագույն փորձի տարածման ներքուլեջային գործընթացները, սակայն դեռևս առկա չեն կարիքների հենքով միջոցառումների կազմակերպման կանոնակարգված գործընթաց: Փորձագիտական խումբը համարում է, որ գործատուների հետ համագործակցությունը կարող է ուղղվել և ծառայեցվել նաև դասախոսների կատարելագործմանը: Մարդկային ռեսուրսների և դասախոսական կազմի ռեզերվի խնդիրները լուրջ խոչընդոտ կարող են լինել ինչպես ՄԿԾ-ների իրականացման, այնպես էլ ՌԾ-ի այլ նպատակների իրագործման համար: Միաժամանակ փորձագիտական խումբը լուրջ խնդիր է համարում քուլեջներում դասախոսական կազմի առաջընթացի մեխանիզմների բացակայությունը (ինչը համապետական խնդիր է և առկա է բոլոր քուլեջներում), ինչը խոչընդոտում է նրանց կատարելագործմանն ու մոտիվացվածությանը: Այս ամենով հանդերձ փորձագիտական խումբը համարում է, որ քուլեջի բազմաթիվ հաջողությունները

պայմանավորված են ինչպես վարչական, այնպես էլ դասախոսական կազմերում նվիրյալների աշխատանքով:

ՎՋՏՊՔ-ն կարևորում է ռեսուրսների մշտական համալրումն ու թարմացումը և այդ կարիքները բավարարելուն հաջողությամբ կարողանում է ծառայեցնել տարբեր ազգային և միջազգային ծագրերի ընձեռած հնարավորությունները՝ ինչպես օգտագործելով տարածաշրջանի յուրահատկությամբ պայմանավորված առաջադրված հնարավորությունները, այնպես էլ ընդառաջ գնալով և ներգրավելով նոր հաջողություններ սեփական ջանքերի և կարողությունների արդյունքում: Արդյունքում քոլեջը բավական հազեցրել է սեփական ռեսուրսները, միաժամանակ որոշ կրթական ծրագրերի ուղղությամբ հաջողությամբ կիրառում է գործատուների ռեսուրսները: Սակայն առկա են նաև կրթական ծրագրեր, որոնց շրջանակում ռեսուրսները բավարար չեն, բացի այդ համապատասխան գործատուների բացակայությունը թույլ չի տալիս խնդրի արդյունավետ լուծում իրականացնել: Առկա է նաև ռեսուրս, որը, չնայած քոլեջի ռազմավարական նպատակների իրականացման մաս է կազմում, սակայն չի գործածվում մարդկային համապատասխան ռեսուրսների բացակայության պատճառով: Չնայած ներդրել են ռեսուրսների կարիքների վերհանման մեխանիզմներ, սակայն դրանք դեռևս լիարժեք արդյունավետ չեն, միաժամանակ դեռևս առկա չեն ռեսուրսների կիրառման արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ:

Առանձին որոշ խնդիրներով հարդերձ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում, միաժամանակ ռիսկային է համարում հատկապես մարդկային ռեսուրսների խնդիրը, ինչը կարող է խոչընդոտել գործընթացների շարունակականությանը:

Քոլեջն ունի ուսանողների ընդունելության հստակ ընթացակարգ, նաև կիրառում է դիմորդների հավաքագրման համապատասխան մեխանիզմ, որը փորձում են հմտորեն վերափոխել՝ ուղղված արդյունավետության ապահովմանը, չնայած, որ դրանց արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ չունեն: Ուսանողների կրթական կարիքների բացահայտման տարբեր մեխանիզմներ են առկա քոլեջում, սակայն կարիքների վերհանումը գլխավորապես ուսանող-կուրսդեկ վստահելի կապի միջոցով է ապահովվում: Դեռևս բավականին թույլ է արտահայտված ուսանողների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը, անկատար են ուսանողների վերլուծական կարողությունների զարգացման մեխանիզմները:

Քոլեջն արժևորել է հետազոտության ոլորտը և նպատակներ է առանձնացրել, սակայն հետազոտության ուղղությամբ հստակ պլանավորումներ դեռևս առկա չեն: Թույլ է ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, նաև այդպիսի հնարավորությունները սակավ են: Քոլեջում ներդրված սեմինարների անցկացումը գործում է որպես լավ փորձի տարածման կարևոր մեխանիզմ: Ուսանողների վերլուծական կարողությունների զարգացման մեխանիզմները բավականին անկատար են, միայն առանձին հաջողված արդյունքներ են առկա: Հետազոտության ոլորտում խնդիրները կարող են խոչընդոտել նաև ուսումնական գործընթացի կատարելագործմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջներում այնպիսի մեխանիզմների ներդրումը, որոնք կապահովեն դասախոսի առաջընթացը հետազոտական արդյունքների հիման վրա, որում կարևոր կլինի նաև համապետական մոտեցման ներդրումը:

Գործատուների հետ համագործակցության շրջանակները դեռ բավարար կերպով չեն նպաստում ուսանողների կարիերայի աջակցմանը, հետազոտությունների իրականացմանը և ուսանողների վերլուծական կարողությունների զարգացմանը:

Քոլեջը գիտակցում է իր առանձնակի կարևորությունը տարածաշրջանում, դրանով պայմանավորված էլ՝ հասարակական պատասխանատվությունը: Քոլեջում առկա է ներքնից վերև հաշվետվողականության համակարգ, քոլեջն ապահովում է հաշվետվողականություն ներքին և արտաքին շահակիցների առաջ: Քոլեջը նաև աշխատանքներ է կատարում հասարակությանը արժեքների և գիտելիքի փոխանցման ուղղությամբ: Սակայն դեռևս անկատար են հաշվետվությունները վերլուծական լինելու տեսանկյունից, ինչպես նաև գործընթացների թափանցիկության ապահովման մեխանիզմները:

Քոլեջը, չունենալով առանձին պատասխանատու վարչական կառույց և ձևավորելով պատասխանատու աշխատանքային խումբ, նկատելի աշխատանքներ է իրականացնում արտաքին կապերի հաստատման և դրանց միջոցով ռեսուրսների զարգացումն ապահովելու ուղղությամբ: Քոլեջը կարողանում է ներգրավվել նաև միջազգային ծրագրերում, որոնք ևս նպաստել են քոլեջի զարգացմանը, առկա է նաև դրանով պայմանավորված միջազգային փորձի ուսումնասիրման, ինչպես նաև՝ նոր ԿԾ-ների ներդրման նախադեպեր: Սակայն համագործակցության շրջանակների հաստատումը և դրանցով պայմանավորված պլանավորումները երկարաժամկետ չեն և հստակ կառավարելի չեն քոլեջի համար, քոլեջը կարողանում է այս բացը լրացնել ճկուն գործելակերպի միջոցով: Միաժամանակ հարկ է նշել, որ համագործակցության շրջանակը (հատկապես՝ գործատուների) լիարժեք չի ծածկում քոլեջի ակնկալիքների և պահանջների ծածկույթը, սա կարող է խոչընդոտող հանգամանք լինել զարգացման շարունակականությունն ապահովելու ճանապարհին: Միաժամանակ քոլեջը խնդրահարույց է համարում օտար լեզվի իմացության խնդիրը:

Ելնելով վերոնշյալից՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՎՁՏՊԲ-ն ձգտում է ապահովել իր երկարաժամկետ զարգացումը, քայլեր է կատարել և շարունակում է կատարել այս ուղղությամբ, սակայն հատկապես հետազոտության ոլորտում առկա խնդիրները կարող են խոչընդոտել երկարաժամկետ զարգացմանը:

#### **Հաստատության ուժեղ կողմերն են.**

- 1) ՎՁՏՊԲ-ի առանձնակի դերը տարածաշրջանի համար և միակ միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատություն լինելը:
- 2) Ռազմավարական կառավարման և հաշվետվողականության մեխանիզմների՝ որպես որակի կառավարման մեխանիզմների առկայությունը և որակի ապահովման գործընթացների կարևորումը:
- 3) ՄԿԾ-ների համապատասխանությունը ՈԱՇ-ին և ՊԿԶ-ներին:
- 4) Գիտելիքի գնահատման, դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության առկայություն:
- 5) Փորձի փոխանակման և դասավանդման լավագույն փորձի տարածման ներքոլեջային մեխանիզմ և գործընթացներ:

- 6) Կրթական և գործընկերային համապատասխան միջավայրի և նվիրյալ աշխատակիցների առկայություն:
- 7) Ռեսուրսների շարունակական համալրումն ու դրա արդյունքում առկա ռեսուրսային բազան:
- 8) Ուսանողների ընդունելության հստակ ընթացակարգի և դիմորդների հավաքագրման բազմազան մեխանիզմների առկայություն:
- 9) Քոլեջի կողմից ուսանողների կրթական կարիքների կարևորումը:
- 10) Ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության համակարգի առկայություն:
- 11) Կարճաժամկետ ծրագրերի իրականացման փորձի և ռեսուրսների առկայություն:
- 12) Ազգային և միջազգային ծրագրերի իրականացման փորձ:

**Հաստատության թույլ կողմերն են.**

- 1) Գործընթացների (այդ թվում՝ աշխատաշուկայի ուսումնասիրման, գործող քաղաքականությունների և ընթացակարգերի) մշտադիտարկման, գնահատման և բարելավման մեխանիզմների անկատարություն:
- 2) Ներքին և արտաքին շահակիցների (հատկապես՝ գործատուների և շրջանավարտների) թույլ ներգրավվածությունը ռազմավարական պլանավորման, ՄԿԾ-ների մշակման, մշտադիտարկման և որակի ապահովման գործընթացներում:
- 3) Որակի ապահովման համակարգի, ռեսուրսների կիրառման արդյունավետության գնահատման և կատարելագործման համակարգված գործընթացի բացակայություն:
- 4) Պրակտիկ և վերլուծական կարողությունները երաշխավորող մեթոդների անկատարություն:
- 5) Կարիքների վերհանման հիման վրա դասախոսական կազմի կատարելագործման կանոնակարգված գործընթացի բացակայություն:
- 6) ՌԾ նպատակներին համապատասխան մարդկային ռեսուրսների սղությունը:
- 7) Դասախոսական կազմի առաջընթացի մեխանիզմների բացակայություն:
- 8) Որոշ կրթական ծրագրերին համապատասխան գործատուների բացակայություն:
- 9) Ուսանողների թույլ ներգրավվածությունը հետազոտական, վերլուծական աշխատանքներում:
- 10) Հետազոտությունների իրականացման խրախուսման և խթանման մեխանիզմների բացակայությունը:
- 11) Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի անկատարություն:
- 12) Արտաքին համագործակցության ոլորտում և համագործակցությունից բխող երկարաժամկետ պլանավորման բացակայություն:
- 13) Դասախոսների և ուսանողների օտար լեզվի իմացության ոչ բավարար մակարդակ:



## **Խորհրդատվություններ**

### **Առաքելությունը և նպատակները**

1. Հստակեցնել ՎՁՏՊՔ-ի գերակայություններն ու նպատակները, թիրախավորել աշխատաշուկան և շրջանավարտների հնարավորությունները՝ հիմնվելով ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակի կարիքների և քոլեջի վերագնահատված հնարավորությունների վրա, ընդլայնելով գործատուների հետ համագործակցության շրջանակը:
2. Բարելավել ՌԾ-ի իրականացման ընթացիկ և ամփոփիչ գնահատման մեխանիզմները՝ միաժամանակ ապահովելով ՌԾ-ով սահմանված գործողությունների իրագործելիություն և չափելիություն:

### **Կառավարումն ու վարչարարությունը**

3. Ուսումնասիրել և գնահատել քոլեջի ֆինանսական (այդ թվում՝ ծրագրերով պայմանավորված), մարդկային և նյութական ռեսուրսային հնարավորությունները և ռազմավարական նպատակները համապատասխանեցնել և պայմանավորեցնել դրանցով ապահովելով հստակ պլանավորում ակնկալվող չափելի արդյունքներով:
4. Հստակեցնել վարչական աշխատակիցների գործառնության շրջանակները:
5. Խթանել դասախոսների և ուսանողների ակտիվ ներգրավվածությունը իրենց վերաբերող որշումների կայացման գործընթացներում և նախաձեռնողականության դրսևորումը՝ նաև կառավարման կոլեգիալ մարմինների արդյունավետ և ակտիվ գործունեության ապահովմամբ:
6. Ապահովել ռազմավարական նպատակների իրագործման մշտադիտարկման և ամփոփիչ գնահատման գործընթաց, այդ թվում՝ պլանավորման հստակեցմամբ՝ ըստ պատասխանատուների, ժամկետների, ռեսուրսների, ցուցիչների և երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումների փոխկապակցմամբ:
7. Ապահովել քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների համընդհանուր, բազմակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն՝ հետազոտության արդյունքներով պայմանավորեցնելով կառավարման և որոշումների կայացման գործընթացը:
8. Ապահովել ներդրված քաղաքականությունների և ընթացակարգերի գնահատում՝ նպաստելով դրանց բարելավմանն ու գործառնականությանը:
9. Ապահովել տարբեր գործընթացների վերաբերյալ տեղակատվության հավաքագման, դրա կիրառման և հրապարակման գործընթացների բարելավում՝ հենված ուսումնասիրությունների և վերլուծությունների վրա:

### **Մասնագիտության կրթական ծրագրերը**

10. Ապահովել ՄԿԾ-ների մշտադիտարկման և բարելավման գործընթաց՝ հիմնվելով հավաստի, արժանահավատ և հստակ վերլուծված տվյալների վրա:
11. Ներդնել աշխատաշուկայի ուսումնասիրման գործուն մեխանիզմներ (արտաքին շահակիցների հետ հստակ համագործակցություն)՝ դրանց արդյունքները ՄԿԾ-ներում ներառելու նպատակով:
12. Վերլուծել քոլեջի հնարավորություններն ու հեռանկարները և գործուն քայլեր ձեռնարկել բենչմարքինգի իրականացման և շարժունության ապահովման նպատակով:

13. Ներդնել գրագողությունը կանխարգելող և ակադեմիական ազնվությունն ապահովող գործուն մեխանիզմներ:
14. Քոլեջի բոլոր մասնագիտություններում ներդնել դասավանդման արդիական մեթոդներ, որոնք կապահովեն սահմանված վերջնարդյունքներով նախատեսված ոչ միայն գիտելիքերի ձեռքբերումը, այլև կարողությունների ու հմտությունների ձևավորումը:
15. Զարգացնել գնահատման բազմագործոնային համակարգը և այն տարածել բոլոր ՄԿԾ-ների վերջնարդյունքների վրա՝ հատկապես շեշտադրելով գործնական հմտությունների գնահատումը:
16. Ներդնել պրակտիկաների անցկացման արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ:

### **Ուսանողները**

17. Մշակել գործուն մեխանիզմներ դիմորդների ընդունելության և հավաքագրման գործընթացների արդյունավետությունը գնահատելու համար՝ նպաստելով դրանց բարելավմանը:
18. Գնահատել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների արդյունավետությունը և վերանայել այդ մեխանիզմների կիրառելիությունը:
19. Հստակեցնել ՈւԽ-ի գործունեությունը՝ որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին, խթանել ուսանողների ներգրավվածությունը իրենց առնչվող որոշումների կայացման մեջ:
20. Ուսանողներին ընդգրկել հետազոտական աշխատանքներում՝ զարգացնելու նրանց վերլուծական մտածողությունը, ներդնել հետազոտական գործունեության և ուսումնառության փոխկապակցման մեխանիզմներ:
21. Ներդնել շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման գործուն մեխանիզմներ, բարելավել նրանց վերաբերյալ տվյալների հավաքագրման մեխանիզմները:

### **Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը**

22. Քայլեր ձեռնարկել ինչպես ՎՋՏՊԲ-ի կողմից արդեն սահմանված, այնպես էլ այլ մեխանիզմների ներդրման ուղղությամբ՝ ուղղված աշխատակիցների խրախուսմանն ու առաջընթացի ապահովմանը:
23. Ապահովել դասախոսական կազմի շարունակական կատարելագործման գործընթաց (նաև գործատուների հնարավորությունների ներգրավմամբ) և խրախուսել համապատասխան գործունեությունը՝ համապատասխան իրագործելի և թափանցիկ մեխանիզմների ներդրմամբ:
24. Մշակել և ներդնել այլընտրանքային լրացուցիչ մեխանիզմներ, որոնք կնպաստեն պրակտիկ ոլորտի մասնագետների ներգրավմանը դասավանդման գործընթացում:
25. Կարիքների վեր հանման արդյունքներով պայմանավորված՝ ապահովել ՄԿԾ-ների իրականացման անհրաժեշտ դասախոսական կազմ՝ ստեղծելով նաև ռիսկերի կառավարման երաշխիքներ:
26. Ապահովել ՌԾ նպատակների իրագործելիության անհրաժեշտությամբ պայմանավորված վարչական և ուսումնաօժանդակ կազմ՝ ստեղծելով ՌԾ նպատակների իրագործման երաշխիքներ:

### **Հետազոտությունը և զարգացումը**

27. Սահմանել հետազոտական հետաքրքրություններ և զարգացման ուղղություններ՝ հաշվի առնելով տարածաշրջանի և քոլեջի կարիքները:
28. Ներդնել ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցման մեխանիզմներ՝ ուսումնառության և պրակտիկայի գործընթացներում՝ ապահովելով ուսանողների վերլուծական և ստեղծագործական կարողությունների զարգացման երաշխիքներ:
29. Ներգրավել բյուջետային և արտաբյուջետային ֆինանսական նոր միջոցներ հետազոտական և գործնական աշխատանքների իրականացման համար (այդ թվում՝ գործատուների հնարավորությունների կիրառմամբ):
30. Մշակել և ներդնել դասախոսների հետազոտական գործունեության խթանման և խրախուսման մեխանիզմներ՝ նպաստելով դասախոսների կողմից հետազոտական արտոնված արդյունքների ապահովմանը (այդ թվում՝ ուսումնական գործընթացում կիրառելի):

### **Ենթակառուցվածքը և ռեսուրսները**

31. Գնահատել քոլեջի ռեսուրսային բազան ու հնարավորությունները և ներդնել հստակ գործիքակազմ դրա պահպանման, արդիականացման, ինչպես նաև ամբողջական կիրառման համար:
32. Ներդնել մեխանիզմներ ֆինանսական նոր միջոցներ ներգրավելու ուղղությամբ:
33. Բարելավել առկա ուսումնական միջավայրը՝ հատուկ ուշադրություն դարձնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

### **Հասարակական պատասխանատվությունը**

34. Ներդնել ներկայացվող հաշվետվությունների գնահատման մեխանիզմներ՝ շեշտադրելով դրանցում վերլուծական բաղադրիչի առկայությունը:
35. Համակարգել տեղեկատվության տրամադրման, թափանցիկության ապահովման և շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման գործիքները, տեղեկատվության տրամադրման համար կիրառվող հարթակներում կատարվող աշխատանքները՝ հաշվի առնելով շահակիցների կարիքները:

### **Արտաքին կապերը և միջազգայնացումը**

36. Վերլուծել և գնահատել քոլեջում առկա համագործակցային փորձը, հստակեցնել ՎՁՏՊՔ ակնկալիքները արտաքին կապերի և միջազգայնացման տեսանկյունից:
37. Մշակել գործուն մեխանիզմներ նոր գործընկերային (հատկապես գործատուների հետ) կապերի հաստատման և երկարաժամկետ համագործակցության ապահովման համար՝ հաշվի առնելով քոլեջի առկա կարիքները և տարածաշրջանային առանձնահատկությունները:
38. Քայլեր ձեռնարկել քոլեջում մշակված արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտը կարգավորող փաստաթղթերի բարելավման և դրանցում ամրագրված գործիքակազմի լիարժեք գործարկման ուղղությամբ:
39. Բարձրացնել ներքին շահակիցների շրջանում օտար լեզվի իմացության մակարդակը՝ օգտագործելով ինչպես Խաղաղության կորպուսի, այնպես էլ այլ հնարավորություններ:

### **Որակի ներքին ապահովման համակարգը**

40. Ապահովել որակի ապահովման գործընթացների հստակ պլանավորում, մշտադիտարկում, գնահատում՝ նպաստելով դրանց շարունակական կատարելագործմանը:
41. Ապահովել մարդկային ռեսուրսների կոմպետենցիաների կատարելագործումը՝ ուղղված որակի ապահովման գործընթացների իրականացմանը:
42. Բարելավել և կատարելագործել հետազոտությունների և վերլուծությունների իրականացման մեթոդաբանությունն ու միջոցները՝ ապահովելով դրանց արժանահավատությունն ու կիրառելիությունը:
43. Մշակել և ներդնել շահակիցների շարունակական ակտիվ ներգավմանն ուղղված հստակ մեխանիզմներ:
44. Ապահովել որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատման և կատարելագործման համակարգված գործընթաց՝ այդ թվում նաև ազգային և միջազգային փորձի ուսումնասիրման, համեմատական վերլուծության իրականացմամբ:
45. Ապահովել քուլեջի գործընթացների որակի վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն ներքին և արտաքին շակիցների համար՝ բարելավելով հաշվետվողականության և հրապարակայնության գործընթացները:

---

**Արմենուհի Սարգսյան**  
**Փորձագիտական խմբի ղեկավար**

**30 դեկտեմբերի 2021 թ.**

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Արմենուհի Սարգսյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շիրակի պետական համալսարանի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
2. **Աշոտ Ավետիսյան՝** Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի պրակտիկայի բաժնի վարիչ, դասախոս,
3. **Աննա Պարսյան՝** տնտեսագիտության թեկնածու, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի կառավարման ամբիոնի դասախոս,
4. **Լիդա Գրիգորյան՝** ՀՀ Արարատի պետական քոլեջի «Ֆինանսներ» մասնագիտության ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Քաղաքականության մշակման և իրականացման բաժնի մասնագետ Մերի Բարսեղյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

### ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔԸ

#### Դիմում պետական հավատարմագրման համար

Պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ՎՁՏՊՔ-ն 10.02.2021թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը:

Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո ՎՁՏՊՔ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Քոլեջի ինքնավերլուծությունն իրականացրել է ՎՁՏՊՔ-ի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը:

#### Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով, որ ՎՁՏՊՔ-ն առաջին անգամ էր անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը, և նպատակ ունենալով նախապատրաստել քոլեջին ինքնավերլուծության իրականացմանը և հավատարմագրման գործընթացին՝ ՈԱԱԿ-ը որոշակի

աշխատանքներ է իրականացրել ուսումնական հաստատության հետ: 2021 թ. փետրվար ամսին ՎՋՊՔ-ն 2 շաբաթվա ընթացքում իրականացրել է SWOT վերլուծություն՝ հավատարմագրման 10 չափանիշներին համապատասխան: SWOT վերլուծության ներկայացումից հետո քոլեջն առաջադրել է 2 աշխատակից, որոնց հետ միասին ՈԱԱԿ աշխատակիցները 1 ամիս դիտարկել են քոլեջի կողմից ներկայացված SWOT վերլուծությունը, դուրս են բերել հիմնական խնդիրները: ՈԱԱԿ համակարգողները այդ ընթացքում քոլեջի աշխատակիցներին ուղղորդվել են, թե SWOT վերլուծությունն ինչպես պետք է կատարել, և ինքնավերլուծության ընթացքում քոլեջը հատկապես ինչին պետք է ուշադրություն դարձնի չափանիշների շրջանակում: SWOT վերլուծության դիտարկումից հետո քոլեջի աշխատակիցները՝ որպես ներքին փորձագետներ, ՈԱԱԿ աշխատակիցների հետ միասին 2021 թվականի մարտի 9-ին իրականացրել են առցանց այց ՎՋՏՊՔ-ում:

ՎՋՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 08.06.2021թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 10 աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնասօժանդակ համակազմի կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները և ներքին շահակիցները՝ ուսանողները, չեն մասնակցել:

Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում եղել է նկարագրական և ընդհանրական, որը երբեմն հնարավորություն չի տվել փորձագետներին նախնական գնահատման ժամանակ պատկերացում կազմել քոլեջում տիրող իրական վիճակը:

### **Նախապատրաստական փուլ**

ՎՋՏՊՔ-ի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զեկույցը և կից փաստաթղթերը ներկայացնելուց հետո ՈԱԱԿ համակարգողն ուսումնասիրել է դրանք՝ ՈԱԱԿ-ի պահնաջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ինքնավերլուծությունը և կից բոլոր փաստաթղթերը նախնական գնահատման նպատակով տրամադրվել են փորձագիտական խմբին, որի կազմը նախօրոք համաձայնեցվել էր քոլեջի հետ և հաստատվել ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով:

Փորձագիտական խմբին՝ աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈւ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձնահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով քոլեջի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում՝ ըստ ձևաչափի պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև

խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Նախատեսված ժամկետներում փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները, և համակարգողը կազմել է փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը<sup>2</sup>: Առաջնորդվելով ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, զուգահեռ հանդիպումներ և այլն: ՈԱԱԿ-ը քոլեջի փորձագիտական այցերի ընթացքում որպես նորույթ ավելացրել է մասնագիտական հանդիպում-քննարկումներ ունենալու հնարավորությունը: Փորձագիտական խմբի անդամները մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի կրթական ծրագրի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող հանձնարարականները՝ հասկանալու, թե այդ հանձնարարականները որքանով են միտված մոդուլում սահմանված կատարման չափանիշների ձեռքբերմանը:

### **Նախնական այց**

Հաշվի առնելով ՎՁՏՊԲ-ի հեռավորությունը մայրաքաղաքից՝ քոլեջի նախնական այցը կատարվել է առցանց եղանակով փորձագիտական այցից երկու շաբաթ առաջ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

### **Փորձագիտական այց**

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2021թ. հոկտեմբերի 18-21-ն ընկած ժամանակահատվածում: Ժամանակացույցով նախատեսված այցից մեկ օր առաջ (17.10.2021թ.) փորձագիտական խմբի բոլոր անդամները և համակարգողն այցելել են քոլեջ, դիտարկել քոլեջի երկու մասնաշենքերի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները<sup>3</sup>: Այնուհետև փորձագետներն ու համակարգողն ունեցել են փակ հանդիպում: Հանդիպման նպատակն էր դուրս բերել քոլեջի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ չափանիշների, հստակեցնել թիրախային խմբերին տրվող հարցադրումները, քննարկել իրականացվող հանդիպումների ընթացակարգը և հետագա քայլերը:

Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով:

Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ: Մասնակիցներն ընտրվել են նախօրոք

<sup>2</sup> Հավելված 2. Փորձագիտական այցի ժամանակացույց

<sup>3</sup> Հավելված 4. Փորձագիտական խմբի կողմից դիտարկված ռեսուրսներ

տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները, ըստ նախատեսվածի, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ: Այցի ընթացքում փորձագիտական խումբն իրականացրել է փաստաթղթերի ուսումնասիրություն և ֆոկլուս խմբային հանդիպումներ:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

### **Փորձագիտական զեկույց**

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ դեկտեմբերի 3-ին: Այնուհետև նախնական զեկույցը տրամադրվել է քուլեջին:

Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քուլեջն իր արձագանքն ուղարկել է ՈԱԱԿ 20.12.2021 թ.-ին: ՈԱԱԿ-ը քուլեջի դիտարկումները տրամադրել է փորձագետներին: 27.12.2021թ.-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է քուլեջի և փորձագիտական խմբի առցանց հանդիպում, որի ժամանակ քննարկվել են հաստատության դիտարկումները փորձագիտական նախնական զեկույցի վերաբերյալ: Հաշվի առնելով այդ դիտարկումները՝ փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 30.12.2021թ.-ին:

---

**Մերի Բարսեղյան**

**Փորձագիտական խմբի համակարգող**

**30 դեկտեմբերի 2021 թ.**



## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎՁՏՊՔ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Պատմություն.** Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջը հիմնադրվել է 1971թ.-ից Եղեգնաձորում գործող Երևանի Էլեկտրամեխանիկական տեխնիկումի Եղեգնաձորի մասնաճյուղի հիման վրա, որը 1993թ.-ից դարձել է Երևանի ֆինանսատնտեսագիտական քոլեջի Եղեգնաձորի մասնաճյուղ, և որի հիման վրա 2001թ. այն առանձնացել է որպես առանձին ուսումնական հաստատություն՝ կոչվելով Եղեգնաձորի պետական քոլեջ, այնուհետև 2011թ. վերանվանվել է որպես Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ:

2007թ. ՀՀ Վարչապետի որոշումով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի որոշմամբ քոլեջը մրցութային կարգով ընդգրկվել է Եվրոպական միության բյուջետային աջակցության ծրագրով նախատեսված 12 բազմագործառութային քոլեջների ցանկում:

**Կրթություն.** Քոլեջի բազմագործառութային բնույթը հնարավորություն է տվել գործունեությունն ուղղելու նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստմանն ու աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանը, կրթական ծրագրերի համապատասխանեցմանը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշների համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության և մատչելիության ապահովմանը: Քոլեջում ներկայումս ուսուցանվում են հետևյալ մասնագիտությունները՝ «Զբոսաշրջություն», «Հաշվապահական հաշվառում», «Իրավագիտություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Ֆինանսներ», «Խոհարարական գործ», «Փայտագործություն», «Գինեգործություն և հյութերի արտադրություն»:

**Հետազոտություն/ստեղծագործ մտածելակերպի ձևավորում.** ՎՁՏՊՔ-ն իր ռազմավարական նպատակների և առաքելության շրջանակներում կազմակերպում և փորձում է խթանել հետազոտական գործունեությունը՝ մշակելով այնպիսի քաղաքականություն, որով հնարավոր կլինի գնահատել կատարվող հետազոտությունների արդյունավետությունն ըստ արդիականության և կիրառելիության, խրախուսել ուսանողներին և դասախոսական կազմին և ավելացնել նրանց ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում: Հետազոտական աշխատանքներ կատարվում են արտադրական, ուսումնական և նախաավարտական պրակտիկաների, դիպլոմային աշխատանքների, ռեֆերատ աշխատանքների և զբոսաշրջային փաթեթների մշակման շրջանակներում:

**Արտաքին կապեր.** Քոլեջը մասնակցում է Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) կողմից կազմակերպված աշխատանքի վրա հիմնված ուսուցման (ԱՀՈԻ) միջազգային գործընթացներին որպես հայաստանյան կողմ: ETF նախաձեռնության շրջանակներում տարբեր երկրների համապատասխան ոլորտի մասնագետների մասնակցությամբ Գերազանցության կենտրոնի հայեցակարգի մշակման գործընթացին՝ որպես Հայաստանի ներկայացուցիչ, մասնակցում է ՎՁՏՊՔ՝ ներկայացնելով համապատասխան տեղեկատվություն և փորձ, որը հիմք

կհանդիսանա Հայաստանի Հանրապետությունում կիրառելի հայեցակարգի մշակման համար, ինչպես նաև «Գինեգործություն և հյուրերի արտադրություն» մասնագիտության փորձարարական (դուալ) ծրագրի հաջողված փորձը, որի հիման վրա մշակվել է աշխատանքային հատուկ պլան գինեգործության և գինու տուրիզմի զարգացման համար: Քննարկվել են նաև ՎՁՏՊ քոլեջի օրինակով մի շարք ծրագրերի իրականացման հնարավորությունները ողջ տարածաշրջանում:

Համագործակցության պայմանագրերի շրջանակներում գործատուների հետ համատեղ իրականացվում են ուսուցման և վերապատրաստումների տարբեր ծրագրեր՝ ամրագրելով մարզի հեռանկարային զարգացմանը համահունչ մասնագիտության ուսուցման և քոլեջի առաքելության ու նպատակների ընդհանրությունը:

**Որակի ապահովում.** Որակի ապահովման համակարգի ներդրումն ու աստիճանական զարգացումը բարեփոխումների մի շրջանակ է ձևավորել ՎՁՏՊԲ-ում, որը նպաստում է ուսումնական հաստատության կարողությունների վերլուծությանը, արժևորմանը, արդյունավետության բարձրացմանը, ուսումնական, վարչական, ֆինանսական գործունեության բարելավմանը: Մշակվել և կիրառություն են գտել բոլոր գործընթացները կարգավորող իրավական փաստաթղթերը: ՎՁՏՊԲ-ի Ռազմավարական պլանի գերակա ուղղություններից մեկը կրթական ծառայությունների որակի ապահովման մշակույթի ձևավորումն է:

***Աղբյուր.** վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր.՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

**Փաստեր**

ՎՋՏՊԲ-ն առաջնորդվում է կանոնադրությամբ, որը նոր խմբագրությամբ հաստատվել է 2012 թ. -ին, իսկ 2019 թ. -ին իրականացվել են փոփոխություններ և լրացումներ: Կանոնադրության մեջ ներկայացվում են քոլեջի գործունեության հիմնական ութ նպատակները, ըստ որոնց մասնավորաբար ձգտում է դառնալ գերազանցության և տարածաշրջանային ռեսուրսային կենտոն՝ ստանձնելով բարեփոխումներն առաջնորդողի, տարածողի դերը:

ՎՋՏՊԲ-ն ունի 2016-2021 թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագիր, ըստ որի քոլեջի հիմնական առաքելությունն է՝ գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

Որպես զարգացման գերակա ուղղություններ առանձնացվում են 4 նպատակներ՝

- Ուսումնառության որակի շարունակական բարելավում:
- Միջազգային համագործակցության ընդլայնում:
- Ուսումնառության համար նպաստավոր ենթակառուցվածքների ապահովում:
- Որակի մշակույթի տարածմանը նպաստող միջավայրի ձևավորում:

Քոլեջն ուսումնառություն է կազմակերպում ՈԱՇ-ի 3-րդ և 5-րդ մակարդակներում՝ նախնական և միջին մասնագիտական կրթություն:

ՎՋՏՊԲ-ն հանդիսանում է միջին և նախնական մասնագիտական կրթություն իրականացնող միակ հաստատությունը մարզում:

Քոլեջը 2014 թ. -ին մշակել և ներդրել է Շահակիցների կարիքի գնահատման կարգ և Ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության քաղաքականություն և ընթացակազ փաստաթղթերը:

Քոլեջը կարևորում է գործատուների հետ համագործակցությունը, քայլեր է ձեռնարկում դրանց ընդլայնման համար, առանձին անձնական կապերի շրջանակներում տեղի են ունենում առանձին հարցերի անհատական քննարկումներ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քննարկումները չեն կրում համընդհանուր ներգրավվածություն: Գործատուների շրջանում անցկացվում են հարցումներ, սակայն դրանց իրականացումը հաջորդել է վերոնշյալ ռազմավարական ծրագրի մշակմանը: Գործատուների կարծիքները որոշակիորեն հաշվի են առնվում կրթական ծրագրերի մշակման ժամանակ ուղղակի կամ անուղղակի կերպով: Գործատուներ ընդգրկված են նաև խորհրդի կազմում, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ նրանք ակտիվ ներգրավված չեն եղել ռազմավարական ծրագրի մշակման

գործընթացին, նաև՝ լավատեղյակ չեն դրանից: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց նաև, որ գործատուների ակնկալիքները քուլեջից և նրա շրջանավարտներից չի արտահայտվում կրթությունը պարտադիր շարունակելով և բարձրագույն կրթություն ստանալու պահանջներով, այլև ուղղակիորեն և գլխավորապես դրսևորվում է նրանց պրակտիկ կարողությունների կարևորմամբ: Մինչդեռ ուսանողները և դասախոսները մեծապես քուլեջը դիտում են որպես դեպի բուհ գնալու հարմար ճանապարհ՝ չնայած այն հանգամանքին, որ առանձնակի կարևորություն են տալիս քուլեջում տրված գիտելիքին:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ՎՁՏՊՔ-ն չունի հստակ ուսումնասիրություններ, թե քուլեջի շրջանավարտները աշխատաշուկայում ըստ մասնագիտության ինչ տեղ են զբաղեցնում կամ աշխարհագրական որ մասում: Բավականին ցուցանիշ են կազմում ոչ իրենց մասնագիտությամբ աշխատող և ոչ նույն մասնագիտությամբ կրթությունը շարունակող շրջանավարտները: Քուլեջը հստակ չի թիրախավորել աշխատաշուկայի շրջանավարտների համար, սակայն կարծում է, որ չի կարող սահմանափակվել Վայոց Ձորի մարզով, դրանում աշխատաշուկայի խիստ սահմանափակության պատճառով: Միաժամանակ նշենք, որ աշխատաշուկայի համապարփակ վերլուծություն չի իրականացվել: Շրջանավարտները ներգրավված չեն ռազմավարական ծրագրի մշակման գործընթացում:

Դասախոսական կազմի ներկայացուցիչները և ուսանողները ներգրավված են խորհրդի կազմում, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ նրանց ներգրավվածությունը ռազմավարական գործընթացներին թույլ է, միաժամանակ քուլեջի ղեկավար կազմը կարևորում է տարբեր կարծիքներ և պատրաստակամ է հնարավորինս ներգրավելու շահակիցների լայն շրջանակ:

2016-2021 թթ.-ի ռազմավարական ծրագրի համար առկա է իրականացման ժամանակացույց, որում որպես գործողությունների իրականացման ժամանակահատված հիմնականում նշված է ռազմավարական ծրագրի ամբողջ ժամանակահատվածը: Նշված են պատասխանատուներ և ակնկալվող արդյունքներ, սակայն վերջիններս հիմնականում ոչ միշտ են միարժեք ընկալելի և չափելի (օրինակ՝ գործող նոր կառուցվածք, ցուցակների, միջոցառումների իրականացման վերաբերյալ փաստերի առկայություն, լրացուցիչ աշխատանքներ ուսանողների կողմից և այլն): Կազմվել են նաև ստրատեգիաների ռազմավարական ծրագրեր, տարեկան աշխատանքային պլաններ:

Ստրատեգիաների ղեկավարները և տնօրենը յուրաքանչյուր ուսումնական տարի հաշվետվություն են ներկայացնում քուլեջի խորհրդին:

Առկա է 2016-2021 թթ.-ի ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվություն, որը կազմվել է որակի ապահովման հանձնաժողովի կողմից:

Քուլեջը սահմանել է որոշ ԳՀՑ-ներ (Գնահատման մեխանիզմների հիմնական ցուցիչներ) և ԳԱՑ-եր, սակայն դրանք չեն փոխկապակցվել ՌԾ-ով նախատեսված գործողությունների, խնդիրների և նպատակների հետ, միաժամանակ առկա չեն ըստ դրանց հաշվետվություններ:

Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ շահակիցները հստակ գնահատական չունեն, թե ռազմավարական ծրագիրը որչափով է իրականացված, նույնիսկ այս տեսանկյունից պատկերացումները տարբեր են՝ լիովին իրականացված կամ թերի իրականացված:

Այժմ մշակվել է քուլեջի 2021-2026 թթ.-ի զարգացման ռազմավարական ծրագրի նախագիծը, որին անմիջական մասնակցություն չեն ունեցել շահակիցների լայն շրջանակ: Սակայն քուլեջի ղեկավարությունը կիրառել է տարբեր անուղղակի ազդակներով ստացված տեղեկատվություն գործատուներից, ուսանողներից, դասախոսներից: Միաժամանակ կարևորվում է տարածաշրջանի զարգացման միտումները: Այս տեսանկյունից մասնավորաբար կարևորություն է ստացել նախնական կրթության «Գինեգործություն» մասնագիտությունը՝ գինու արտադրման հնարավորությունների զարգացմամբ, հեռանկարներ են տեսնում գյուղատնտեսության զարգացմանն ուղղված մասնագիտությունների համար:

**Դասողություններ:** ՎՋՏՊԲ-ի հիմնական և շարունակական նպատակներն ամրագրված են կանոնադրությամբ: Միաժամանակ քուլեջն ունի գործունեության ՌԾ, որում ներկայացնում է իր առաքելությունն ու նպատակները, որոնց հասնելու համար առաջադրել է խնդիրներ և գործողություններ: Քուլեջի նպատակները և առաքելությունը համահունչ է ՈԱՇ-ի համապատասխան մակարդակներին: ՎՋՏՊԲ-ն, անխոս, առանձնակի և անփոխարինելի դեր ունի մարզի, դրանով իսկ՝ ՀՀ-ի համար, և սա միանշանակ է բոլոր շահակիցների համար: Քուլեջի ՌԾ-ի մշակմանը ներգրավված չէ ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակ: Դրական է, այն, որ քուլեջի ղեկավար կազմը պատրաստակամ է և տարբեր ազդակներով շահակիցներից ստացված տեղեկատվությունը փորձում է ծառայեցնել քուլեջի զարգացմանն ու կատարելագործմանը՝ այդ թվում նաև քաղաքի և մարզի հեռանկարներով առաջնորդվելով, տարբեր գործատուների ակնկալիքների հաշվառմամբ:

Դրական է նաև այն, որ քուլեջը առանձին ազդակների ձկուն կերպով է արձագանքում, ինչը նպաստել է միջազգային տարբեր կապերի հաստատմանը՝ ուղղված քուլեջի զարգացմանը: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ քուլեջի համար աշխատաշուկայի շրջանակների ոչ հստակ լինելը, դրա համընդհանուր ուսումնասիրությունների բացակայությունը և շրջանավարտների հնարավորությունների ոչ լիարժեք թիրախավորումը կարող է խոչընդոտել քուլեջի գերակա ուղղությունների և նպատակների ճշգրիտ սահմանմանը՝ ուղղված քուլեջի աներկբա զարգացմանը: Այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է նաև շահակիցների (այդ թվում՝ շրջանավարտների, գործատուների) լայն շրջանակի որոշակի ներգրավմանը համընդհանուր քննարկումների, ինչը կարող է նաև նպաստել նոր հնարավորությունների առաջադրման:

Փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում որոշ մասնագիտությունների ուղղությամբ գործատուների հետ համագործակցության բացակայությունը, այսինքն ուսանողների պրատիկ կարողությունների ձևավորման պահանջի ծածկույթը չի բավարարվում գործատուների հետ համագործակցության շրջանակի ծածկույթով: Սա ևս, թերևս, բխում է վերոնշյալ խնդրից:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ, չնայած սա քուլեջի՝ ինստիտուցիոնալ հավաստարմագրման առաջին փորձն է, սակայն դեռևս 2016 թ. -ից ունեցել է ՌԾ, ունի վերջինիս ամփոփիչ հաշվետվություն և ձեռնարկել է նոր ՌԾ-ի մշակման գործընթաց: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ ՌԾ-ում ոչ հստակ և ոչ չափելի ձևակերպումները խոչընդոտում են դրա լիարժեք գործառնական փաստաթղթի վերածվելուն և ընթացիկ

գնահատումներին: Միաժամանակ տարեկան հաշվետվությունների առավելապես նկարագրական բնույթը և ՌԾ-ի հետ փոխկապակցվածության արտահայտված չլինելը կարող են վտանգել ՌԾ-ով նախատեսված վերջնական նպատակների իրագործելիությունը: ԳՀՑ-ների և ԳԱՑ-երի՝ ՌԾ-ի հետ փոխկապակցվածության բացակայությունը, ինչպես նաև ըստ դրանց հաշվետվությունների բացակայությունը խոչընդոտում է կատարելագործելու ՌԾ-ի իրականացման գնահատման և ընթացիկ մշտադիտարկումների գործընթացը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ ՎՁՏՊՔ-ն ունի առանձնակի առաքելություն տարածաշրջանի համար, ունի ռազմավարական ծրագիր, որն արտահայտում է քոլեջի հիմնական նպատակները, որոնք համահունչ են ՈԱՇ-ին, առկա է հաշվետվողականության մեխանիզմ, որը ձգտում է բարելավել՝ ուղղված ՌԾ-ի հաշվետվողականության ապահովմանը, ինչպես նաև կարևորում է ներքին և արտաքին շահակիցների կարիքները, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՁՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է բավարար:

## II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈւՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

### Փաստեր

ՎՁՏՊՔ-ն ՊՈԱԿ է, որը կառավարվում է կոլեգիալ և միանձնյա ձևերով: Քոլեջի հիմնադիրը ՀՀ Կառավարությունն է, լիազոր մարմինը՝ ՀՀ ԿԳՄՄՆ-ն: Քոլեջի կառավարման կոլեգիալ մարմինը կառավարման խորհուրդն է, որը լսում և գնահատում է քոլեջի տնօրենի և ստորաբաժանումների հաշվետվությունները, հաստատում է ՌԾ-ն, տարվա բյուջեն, ընտրում է տնօրենին և այլն: Միաժամանակ քոլեջում գործում են մանկավարժական, ուսումնամեթոդական, դաստիարակչական և տնօրինական խորհուրդներ, ընդ որում վերջինս խորհրդատվական մարմին է: Քոլեջը՝ միանձնյա կառավարվում է տնօրենի կողմից, ով ընտրվում է ըստ համապատասխան կարգի: Կոլեգիալ և միանձնյա կառավարման մարմինների գործառնության շրջանակները սահմանվում են քոլեջի կանոնադրության և համապատասխան աշխատակարգերի միջոցով: Տնօրենն ունի երկու տեղակալ՝ ուսումնական աշխատանքների գծով և կազմակերպատարակչական աշխատանքների գծով: Ընդ որում, ուսումնական աշխատանքների գծով տեղակալը միաժամանակ կրթության որակի պատասխանատուն է և Որակի հանձնաժողովի նախագահը:

ՎՁՏՊՔ-ում առկա է Որակի ապահովման բաժին, Կարիերայի կենտրոն, Ուսումնական մաս, Արխիվ, Գրադարան, 3 ամբիոն՝ Տնտեսագիտության, Տեխնիկական մասնագիտությունների, Արհեստագործական մասնագիտությունների: Քոլեջում ստորաբաժանումներում առկա է

մեկական հաստիք, միաժամանակ նաև՝ իրավախորհրդատուի, հաշվապահի, կադրերի բաժնի տեսուչի, մեթոդիստի, գործավարի, լաբորանտի, օպերատորի, ուսումնական գծով քարտուղարի և այլ հաստիքներ: Ընդ որում որակի ապահովման պատասխանատուի, գնումների համակարգողի և մեթոդիստի հաստիքները վերջերս են ավելացրել: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ առկա է մարդկային ռեսուրսների խնդիր (մասնավորաբար՝ լաբորանտի, հետազոտական աշխատանքների համակարգողի): Պրակտիկաների գործընթացի կազմակերպումն իրականացվում է ամբիոնների և Ուսումնական մասի կողմից: Ամբիոնների համար առանձին հատկացված տարածք առկա չէ, նրանք փաստաթղթերը պահպանում են Ուսումնական մասում, աշխատելիս օգտվում են համակարգչային լսարանների համակարգիչներից, նիստերն անցկացնում են ազատ լսարաններում: Տարբեր գործընթացների հետ կապված առանձին պատասխանատուներ չունեն, այդ հարցերը փորձում են կարգավորել հանձնախմբերի միջոցով, աշխատանքային խմբերի միջոցով (տեղեկատվության և վերլուծության աշխատանքային խումբ, քոլեջի ուսանողների և աշխատողների անվտանգ միջավայրի ապահովման հարցերով զբաղվող աշխատանքային խումբ, ՈՆԱՀ մշտադիտարկման և վերլուծության աշխատանքային խումբ, արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու աշխատանքային խումբ՝ քոլեջի տնօրենի ղեկավարությամբ և այլն):

Քոլեջում գործում է 2011թ.-ին հաստատված «ՎՁՏՊՔ-ի ներքին կարգապահական կանոններ» փաստաթուղթը: 2014թ.-ին հաստատվել է «Էթիկայի կանոնները, սկզբունքները, նորմերը» փաստաթուղթը:

Քոլեջում 2012թ.-ից որոշ ժամանակաընթացք ներքին փաստաթղթաշրջանառության համար ներդրվել և կիրառվել է Mulberry էլեկտրոնային համակարգը, ինչը, ըստ ինքնավերլուծության, զգալիորեն բարձրացրել է աշխատանքների արդյունավետությունը, սակայն հետագայում այն այլևս չի կիրառվել, կիրառվել է միայն ԿԳՄՄՆ-ի հետ արտաքին փաստաթղթաշրջանառության ժամանակ:

Քոլեջն համարում է, որ ֆինանսական միջոցները բավարար չեն անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման համար, միաժամանակ քոլեջը ներդրում է բոլոր հնարավոր ջանքերը տարբեր ծրագրերում ընդգրկվելու և այդկերպ նյութական ռեսուրսների համալրման և նորացման համար:

Քոլեջում գործում է ՈւԽ, որն ունի հաստատված կանոնադրություն, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ ՈւԽ-ի՝ քոլեջի տարբեր գործընթացներում ներգրավվածությունը և մոտիվացվածությունը այդքան էլ լիարժեք արտահայտված չէ: ՈւԽ-ի միջոցով կարող են հարցեր բարձրացվել, սակայն այցից պարզ դարձավ, որ գլխավորապես տեխնիկական բնույթի հարցեր են բարձրացվում: Միջոցառումներ կազմակերպելիս փորձում են այնպիսի միջոցառումներ կազմակերպել, որոնք հավելյալ ֆինանսական ծախսեր չեն պահանջի կամ ծախսերն այնպիսիք են, որ կկարողանան ինքնուրույն՝ սեփական միջոցներով հոգալ: Միաժամանակ այցից պարզ դարձավ, որ ՈւԽ-ի կողմից իրականացվող գործընթացները հիմնականում իրականացվում են՝ ելնելով կարճ ժամանակահատվածում եղած հնարավորություններից, և դժվարանում են ուսումնական տարվա կամ կիսամյակի համար պլանավորում իրականացնել:

Կառավարման խորհրդում ընդգրկված են դասախոսներ և ուսանողներ, ուսանողներն ընտրվում են ՈւԽ-ի կողմից: Սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ

կառավարման խորհրդի անդամները նախաձեռնողականությամբ հանդես չեն գալիս, միաժամանակ դասախոսները և ուսանողները համապատասխան շրջանակներում չեն քննարկում կառավարման խորհրդում ընդգրկված հարցերը կամ իրազեկում որոշումների մասին այդ շրջանակներին: Կառավարման խորհրդի անդամների մոտ տեղեկացվածության մակարդակի և նախաձեռնողականության պակաս կա: Դասախոսները ընդգրկված են նաև տնօրինական, ուսումնամեթոդական և այլ խորհուրդներում և ըստ պարտականությունների՝ նաև ընդհանուր գործընթացներում, ուստի առավելապես այդպես են տեղեկացված:

Ամբիոնների նիստերում քննարկում են ուսումնական գործընթացում ծագած խնդիրները, որոնք լուծումներ են ստանում: Փորձագիտական այցից պարզվեց, որ ուսումնական մասի և ամբիոնների կապը սերտ է:

Հարցումներ են անցկացվում դասախոսների և ուսանողների շրջանում, սակայն նկատելի չէ դրանց ազդեցությունը որոշումներ կայացնելու վրա:

Քոլեջն ունի 2016-2021 թթ. -ի ՌԾ, որի համար կազմվել է իրականացման ժամանակացույց, սակայն դրանում գործողությունների իրականացման ժամկետային տիրույթները բավականին լայն են, գործողությունները հստակ և չափելի չեն (օրինակ՝ կրթական գործընթացի կազմակերպման, վերահսկման բարեփոխում, կատարելագործում, նյութատեխնիկական բազայի հարստացման նոր միջոցների որոնում և նպատակաուղղում կրթական գործընթացի բարելավմանը, որակի գնահատման հայեցակարգի կատարելագործում, կրթության որակի վարկանիշային վերահսկման կատարելագործում և այլն): Մշակվել է քոլեջի 2016-2021 թթ. -ի ԳԱՑ-երի ցուցակ ՌԾ-ի յուրաքանչյուր բաժնի համար, սակայն դրանք չեն կապակցվել նախատեսված գործողությունների հետ: Քոլեջի ստորաբաժանումներն ունեն 2016-2021 թթ. -ի ՌԾ-ներ, որոնք կառուցվածքային առումով նույնպիսին են, ինչ որ քոլեջի ՌԾ-ն: Ստորաբաժանումների համար կազմվում են ուստարվա աշխատանքային պլաններ, որոնք բխում են ստորաբաժանումների գործառնության շրջանակներից: Փորձագիտական այցից պարզվեց, որ գլխավորապես գործառնություն ունեն կարճաժամկետ պլանավորման աշխատանքային պլանները:

Ստորաբաժանումների ղեկավարները և տնօրենը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար հաշվետվություն են ներկայացնում կառավարման խորհրդին: Ներկայացված հաշվետվությունները գլխավորապես նկարագրական բնույթ են կրում տարբեր գործընթացների վերաբերյալ, նաև չի արտահայտվում դրանց և ՌԾ-ի կապը: Փորձագիտական այցից պարզվեց, որ կառավարման խորհուրդը հաշվետվությունները գնահատելիս հստակ մոտեցումներ չունի, սակայն որոշակիորեն հաշվի են առնում աշխատանքային պլանները: Միաժամանակ պարզվեց, որ համավարակի պայմաններով կամ ռազմական դրության պայմաններով պայմանավորված հատուկ որոշումներ չեն եղել, այդ թվում նաև՝ ՌԾ-ի իրականացմանն ուղղված:

ՌԾ-ի ավարտին Որակի հանձնաժողովի կողմից կազմվել է ՌԾ-ի հաշվետվություն, որը, սակայն, կրկին նկարագրական բնույթ է կրում, առկա չէ հստակ գնահատական, թե ՌԾ-ն որչափով է իրականացված: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ Որակի հանձնաժողովը առանձնացրել է հաշվետվությունների նկարագրական լինելու խնդիրը և այդ ուղղությամբ ձեռնարկում է քայլեր:



Մշակել են 2021-2026 թթ.-ի ՌԾ-ի նախագիծ, սակայն այստեղ նկատելի են նախորդ ՌԾ-ից կրկնվող խնդիրներ: Դեռևս առկա չեն իրականացման հստակ ժամանակացույց և նախատեսված գործողություններ<sup>4</sup>: Առկա է ԳԱՑ-երի ցուցակ:

Քոլեջը դեռևս 2014-2016 թթ.-ի համար ունեցել է հեռավար ուսուցման ՌԾ, որը մշակվել և իրականացվել է Գերմանական միջազգային համագործակցություն ընկերության «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» նախագծի շրջանակներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս փորձը մեծապես նպաստել է համավարակի պայմաններում հեռավար ուսուցման կազմակերպման գործընթացի սահուն և որոշակիորեն դյուրին իրականացմանը:

Նույն ծրագրի շրջանակներում 2018 թ.-ին մշակվել և ներդրվել է դուրս կրթության համակարգի ներդրման, հանրային իրազեկման և հաղորդակցության 2018-2019 թթ.-ի ՌԾ, ինչը նախատեսել է նաև ծրագրի իրականացման մշտադիտարկում:

Քոլեջը կարևորում է տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացները, գլխավորապես դեմոգրաֆիական փոփոխությունները: Փորձագիտական այցից պարզվեց, որ առանձին քննարկումներ են լինում գործատուների հետ, սակայն լայն շրջանակով համընդհանուր քննարկումներ չեն անցկացվում: Առանձին քննարկումների արդյունքներով և տարածաշրջանի հետագա զարգացման միտումներով պայմանավորված ներդրել են որոշ մասնագիտություններ (մասնավորաբար՝ գինեգործություն և հյուրերի արտադրություն, զբոսաշրջություն): Սակայն աշխատաշուկայի համընդհանուր ուսումնասիրություններ առկա չեն:

Հարցումներ են անցկացվում գործատուների, ուսանողների, դասախոսների շրջանում, սակայն այդ հարցումներին յուրաքանչյուր անգամ ներգրավվում են 20-ը: Միաժամանակ փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ հարցումների արդյունքները գլխավորապես չեն ազդել որոշումների կայացման վրա: Միայն առանձին որոշ տեխնիկական բնույթի հարցերի մասով են ազդեցություն ունեցել:

Ուսումնասիրում են ուսանողների առաջադիմությունը, այդ հիմքով անցկացնում են կրկնաստուգումներ:

Փորձագիտական այցից պարզվեց, որ շահակիցները և կառավարման մարմինները կարծում են, որ միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորումն իրագործելի չէ և նպատակահարմար են համարում ճկուն գործելակերպը, անկանխատեսելի են համարում նաև ազգային և միջազգային գործընկերների հետ համագործակցության հաստատման և շարունակականության հարցերը:

Ֆինանսական պլանավորումն իրականացվում է մեկ տարվա համար, ընդ որում գլխավորապես աշխատավարձի վճարման պլանավորում է կատարվում, ինչպես նաև արդեն գործող ծրագրերով կատարված պլանավորումների պարտականությունների շրջանակում: Ռեսուրսների համալրումը գլխավորապես պայմանավորված է տարբեր ծրագրերի ընձեռած հնարավորություններով:

Քոլեջի մի շարք փաստաթղթեր մշակվել են դեռևս 2011-2014 թթ.-ին, այնուհետև մի շարք քաղաքականություններ և ընթացակարգեր են մշակվել այդուհետ, տարբեր տարիների

<sup>4</sup> Նախադասությունը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

(հիմնականում՝ 2018-2020 թ.-ին): Փորձագիտական այցից պարզվեց, որ մի շարք փաստաթղթերի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափի ուսումնասիրմամբ և ինքնավերլուծության իրականացմամբ: Սակայն կան փաստաթղթեր, որոնք գործառնական կենդանություն չեն ստացել, մասնավորաբար Դասախոսական կազմի մասնագիտական առաջնության ապահովման ընթացակարգ փաստաթուղթը (որը չի պարունակում ընթացակարգային նկարագիր), Բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ փաստաթուղթը և այլն: Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ միայն սակավ փաստաթղթեր լրամշակվել կամ վերանայվել են իրավական անհրաժեշտությամբ պայմանավորված (մասնավորաբար՝ Քոլեջի կանոնադրությունը):

ՎՋՏՊԲ-ում իրականացվում են դասախոսի և նրա դասընթացի գնահատման, ինչպես նաև այլ հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում, իրականացվում են դասալսումներ: Գործընթացների արդյունավետության գնահատման հիմնական մեխանիզմը հաշվետվություններն են, որոնք նկարագրական են ըստ բովանդակության և դրանք մեծապես փոփոխություն չեն կրել, բացառությամբ այն դրույթի, որ փորձել են ներդնել SWOT վերլուծության բաղադրիչը: Այս կիրառվող մոտեցումների արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ դեռ չեն կիրառվում:

Քոլեջը հրապարակում է տնօրենի և ստորաբաժանումների հաշվետվությունները, Որակի հանձնախմբի հաշվետվությունը: Շահակիցներին տեղեկատվության հասանելիությունն ապահովվում է կայքի, ֆեյսբուքյան էջի միջոցով, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողները և դասախոսները գլխավորապես չեն ծանոթանում փաստաթղթերին, ուսանողները տարբեր գործընթացների վերաբերյալ իրազեկվում են դասավանդող դասախոսներից և կուրսղեկներից, իսկ դասախոսները՝ ամբիոնների վարիչներից կամ ղեկավար կազմից: Շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվություն չի հրապարակվում: Կայքում հրապարակել են 2018 թ.-ի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը: Տեղեկատվության հրապարակայնությունը ապահովող միջոցների գնահատման հստակ մեխանիզմներ առկա չեն:

**Դաստորություններ:** ՎՋՏՊԲ-ի համար հստակ սահմանված են կառավարման մարմինները՝ կոլեգիալ և միանձնյա, և նրանց գործառնության շրջանակները: Միաժամանակ սահմանված են վարչական ստորաբաժանումների գործառնության շրջանակներն ըստ համապատասխան փաստաթղթերի: Այս ամենը թույլ է տալիս ապահովել կանոնակարգված գործընթաց, ինչը դրական է:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև այն, որ մի շարք գործընթացների կարգավորման հետ կապված քոլեջը փորձել է խնդիրը լուծել աշխատանքային խմբերի ձևավորմամբ և նվիրյալ աշխատակիցների ներուժի կիրառմամբ: Սակայն այս մոդելի կիրառումը բավականին գործընթացների պարագայում և առանձին պատասխանատուների բացակայությունը հանգեցնում է նույն աշխատակցի խտացված գործառնությունների իրականացման և մի շարք տարբեր պատասխանատվությունների կրելու, ինչը կարող է հանգեցնել անարդյունավետության, հատկապես, որ աշխատանքներն իրականացվում են հասարակական

հիմունքներով: Չնայած փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի ջանքերը՝ ուղղված գործընթացների կարգավորմանը և գտնում է, որ այս մասով առանձին դեպքերում քոլեջը նաև գրանցել է հաջողություններ (մասնավորաբար՝ Որակի ապահովման հանձնաժողովի, Արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու աշխատանքային խումբ): Հարկ է նշել, որ ամբիոնների աշխատանքների արդյունավետ իրականացմանը կարող է խոչընդոտել առանձին տարածքի և տեխնիկական համապատասխան միջոցների բացակայությունը:

Դրական է այն, որ առկա են «ՎՁՏՊԲ-ի ներքին կարգապահական կանոններ» և «Էթիկայի կանոնները, սկզբունքները, նորմերը» փաստաթղթերը, ինչը որոշակիորեն հստակեցնում է աշխատակիցներին ներկայացվող պահանջները<sup>5</sup>:

Mulberry էլեկտրոնային համակարգը ներքին փաստաթղթաշրջանառության կառավարման լավ փորձ է եղել քոլեջի համար, ինչը կարևորում է փորձագիտական խումբը և գտնում է, որ նպաստավոր կարող էր լիներ դրա շարունակական գործածումը:

Քոլեջը խնդրահարույց է համարում ֆինանսական միջոցների սղությունը, սակայն չունի հստակ հաշվարկ քոլեջի ռազմավարական նպատակների իրականացման համար պահանջվող ֆինանսների վերաբերյալ, առանձին գործողությունների համար պահանջվող ֆինանսական միջոցներին հստակ անդրադարձ չկա: Սակայն փորձագիտական խումբը գնահատում է քոլեջի ջանքերը և ձեռքբերումները՝ ուղղված տարբեր ծրագրերի միջոցով քոլեջի ռեսուրսների համալրմանն ու հարստացմանը:

Քոլեջի կառավարման կոլեգիալ մարմնի կառուցվածքն այնպիսին է, որ հնարավորություն է ընձեռնում դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց հետ առնչություն ունեցող որոշումների կայացմանը, սակայն այդ հնարավորությունները լիարժեք չեն իրացվում: Ուսանողները նաև մոտիվացված չեն ներգրավվելու կրթական ծրագրերին և ուսումնական գործընթացին վերաբերող հարցերին: Կառավարման խորհրդի անդամների առավելապես պասիվ դիրքորոշումը և նախաձեռնողականության պակասը կարող է խոչընդոտել կառավարման կոլեգիալության սկզբունքի լիարժեք իրագործմանը: Միաժամանակ փորձագիտական խումբը գնահատում է, որ ղեկավար կազմը կարևորում է աշխատակիցների կարծիքները:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի՝ միջազգային ծրագրերի շրջանակներում տարբեր գործընթացների ՌԾ-ների մշակման փորձը: Միաժամանակ նշում է, որ քոլեջն ունի 2016-2021 թթ.-ի ՌԾ, որտեղ նշվում է քոլեջի առաքելությունը, նպատակները և խնդիրները, քոլեջը դրան համապատասխան մշակել է երկարաժամկետ պլան, որում, սակայն, գործողությունները հստակ, չափելի չեն, առկա չեն դրանց իրագործման աստիճանը բնորոշող ցուցիչներ, և պլանը գործառնական փաստաթղթի չի վերածվել: Կարևոր է, որ քոլեջը փորձել է նաև ստորաբաժանումների ՌԾ-ներ մշակել, ունեն 2016-2021 թթ.-ի ՌԾ-ներ, սակայն դրանք ևս գործառնություն և լիարժեք կենդանություն չեն ստացել: Ստորաբաժանումներն ունեն կարճաժամկետ աշխատանքային պլաններ, որոնք գլխավորապես պայմանավորված են նրանց աշխատակազմերից բխող գործառնության շրջանակներից և չի երևում դրանց փոխկապակցվածությունը ՌԾ-ի հետ և ՌԾ-ով նախատեսված արդյունքի աստիճանական ապահովումը: Փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում քոլեջի՝ երկարաժամկետ

<sup>5</sup> Նախադասությունը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

իրագործելի պլանավորման անհնարիության դիտարկումը, սա հաստատում է նաև այն հանգամանքը, որ քուլեջին լիարժեք կերպով չի հաջողվել գնահատել ռիսկերը, հնարավորությունները և կարողությունները: ՌԾ-ի իրականացման պլանի հետ կապված վերոնշյալ խնդիրները, թերևս, խոչընդոտում են նաև ՌԾ-ի մշտադիտարկման ապահովմանը, ուստի քուլեջին չի հաջողվել գնահատել, թե որքանով են հասանելի դարձել նպատակները: Սակայն այս ամենով հանդերձ, փորձագիտական խումբը նշում է, որ գնահատելի է քուլեջի փորձը ուղղված ռազմավարական կառավարման ուղղությամբ քայլերի ձեռնարկմանը, հաշվետվողականության մեխանիզմների բարելավմանը, և սա կարող է հետագայում նպաստել այդ ոլորտում համակարգված և փոխկապակցված գործընթացի ապահովման:

Չնայած ՌԾ-ի պլանում առկա չէ հստակ ֆինանսական պլանավորում, ինչը խոչընդոտում է տարեկան ֆինանսական պլանավորումը բխեցնել ռազմավարական ծրագրից, սակայն ֆինանսների բաշխումն իրականացնելիս քուլեջը հիմնականում առաջնորդվում է առաջնահերթություններով, միաժամանակ ֆինանսական ռեսուրսների սուղությամբ պայմանավորված ֆինանսները գլխավորապես ուղղվում է աշխատավարձի վճարման, և առկա են ռազմավարական նպատակներ, որոնց հնարավոր չի լինում հատկացնել ֆինանսական միջոցներ: Քուլեջը փորձում է տարբեր անհրաժեշտ ռեսուրսների համալրումը ապահովել միջազգային ծրագրերի և համագործակցությունների միջոցով, որոնք սակայն չեն արտահայտվում ՌԾ-ի պլանավորման մեջ:

Քուլեջը կարևորում է շահակիցների կարծիքները, տարածաշրջանի փոփոխություններն ու զարգացման միտումները, սակայն չի իրականացնում իր գործունեության վրա ազդող գործոնների համընդհանուր, բազմակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն, այլ միայն առանձին որոշ էլեմենտներ են կիրառվում և առանձին դեպքերում է, որ որոշումները հենված են ուսումնասիրությունների վրա: Միաժամանակ փորձագիտական խումբը կարևորում է քուլեջի ջանքերն այս ուղղությամբ, այդ թվում՝ ներդրված բազմաթիվ հարցումները, որոնք, թերևս, դեռ էական ազդեցություն չեն ունենում որոշումների կայացման հարցում: Մասնավորաբար փորձագիտական խումբը դրական է համարում ուսանողների առաջադիմության ուսումնասիրման հենքով կրկնաստուգումների անցկացման մոտեցումը, որի ազդեցությունը դեռևս ուսումնասիրման անհրաժեշտություն ունի:

Քուլեջի մի շարք փաստաթղթերի մշակման համար հիմք է հանդիսացել ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափի ուսումնասիրումը, այդ թվում՝ հավատարմագրման գործընթացին ընդառաջ: Սակայն փաստաթղթերի և դրանցով սահմանված մոտեցումների և քաղաքականությունների արդյունավետության գնահատում չի իրականացվում, ուստի և ձևավորված չէ քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարության իրականացման նկատմամբ որակի կառավարման սկզբունքի կիրառման մշակույթ ամբողջական շրջափուլով: Դեռևս միայն որոշակիորեն կիրառվում են պլանավորման և իրականացման էտապները:

Փորձագիտական խումբը դրական է համարում մասնագիտական կրթական ծրագրերի և որոշ այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմների բազմազանեցմանն ուղղված քուլեջի քայլերը, սակայն այդ մեխանիզմների, ինչպես նաև հավաքագրված տեղեկատվության վերլուծության ու կիրառման մեխանիզմների գնահատման

հստակ մոտեցումներ չունի քոլեջը: Այնուամենայնիվ, փորձառու աշխատակիցները, հենվելով փորձի վրա, կարողանում են որոշ մեխանիզմների բարելավմանն ուղղված քայլեր անել, մասնավորաբար՝ հարցարանների բարելավում, հաշվետվությունների ձևաչափերի մասնակի բարելավում:

Քոլեջը դեռևս չի ներդրել կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումների գնահատման հստակ մեխանիզմներ:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ քոլեջը դեռևս չի կարողանում լիարժեքորեն ապահովել անհրաժեշտ ռեսուրսներ ուղղված ռազմավարական նպատակների իրականացմանը, շահակիցները չեն դրսևորում համապատասխան մոտիվացվածություն մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը, առկա է խզում ռազմավարական պլանավորման և իրականացված գործընթացների միջև և հստակ չեն ՌԾ-ի մշտադիտարկման մեխանիզմները, առկա չեն քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների բազմակողմանի ուսումնասիրման մոտեցումներ, որակի կառավարման սկզբունքը դեռևս վարչարարության իրականացման մշակույթի չի վերածվել, առկա չեն գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը, ինչպես նաև կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին հրապարակումները գնահատող հստակ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՁՏՊՔ -ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

### III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

#### Փաստեր

ՎՁՏՊՔ գործող ՌԾ-ում որպես առաքելություն նշված է. «գիտելիքի որոնումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ բարձրորակ մասնագետների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում»:

Համաձայն ՎՁՏՊՔ կանոնադրության (03.02.2012թ.)՝ քոլեջի առաջին հիմնական նպատակն է. «Կրթական առաջավոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ դառնալ ՀՀ կրթական համակարգի զարգացման առավել մեծ ներուժ ունեցող լիարժեք կառույց՝ գերազանցության և տարածաշրջանային ռեսուրսային կենտրոն՝ ստանձնելով բարեփոխումներն

առաջնորդողի, տարածողի դերը»: Այս նպատակը քոլեջի 2016-2021թ.թ. ՌԾ-ում ամրագրված է որպես քոլեջի հեռանկարային ուղենիշ:

Համաձայն ՎՁՏՊՔ ԻՎ-ի՝ քոլեջը փորձում է առաքելության և ռազմավարական նպատակներին համահունչ՝ իրականացնել տարածաշրջանին անհրաժեշտ և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական հմտություններով և կարողություններով օժտված մրցունակ մասնագետների պատրաստման գործը: Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ կանոնադրությամբ նախատեսված և ՎՁՏՊՔ ՌԾ-ում պլանավորված գործունեության ընթացիկ վերահսկողության և իրականացման արդյունավետությունը համակողմանի և օբյեկտիվ կերպով գնահատելու համար հստակ ցուցիչներ սահմանված չեն:

Կանոնադրության համաձայն՝ ՎՁՏՊՔ-ն իրականացնում է միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում:

Քոլեջում իրականացվում են 5 մասնագիտություններով միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Զբոսաշրջություն», «Հաշվապահական հաշվառում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Իրավագիտություն», «Ֆինանսներ»: Նշված կրթական ծրագրերից չորսում իրականացվում է առկա ուսուցում՝ վճարովի և անվճար հիմունքներով: Հեռակա ուսուցում իրականացվում է միայն «Ֆինանսներ» մասնագիտությամբ:

ՎՁՏՊՔ-ն նաև իրականացնում է երեք մասնագիտություններով նախնական մասնագիտական կրթական ծրագրեր. «Խոհարարական գործ», «Փայտագործություն», «Գինեգործություն և հյուրերի արտադրություն»:

«Գինեգործություն և հյուրերի արտադրություն» արհեստագործական մասնագիտությամբ մշակվել և ներդրվել է դուրս կրթական ծրագիր, որի որոշ մոդուլներ իրականացվում են գործատուների մոտ՝ ԱՀՈԻ սկզբունքով:

Այցի ընթացքում պարզվեց, որ ՎՁՏՊՔ ուսանողների և շրջանավարտների մեծ մասը քոլեջը դիտարկում են որպես միջանկյալ օղակ՝ կրթությունը բուհում շարունակելու հեռանկարով: Այդ կարծիքի հետ հիմնականում համամիտ են նաև քոլեջի ՊԴ կազմի ներկայացուցիչները: Միաժամանակ հաճախ քոլեջում ձեռք բերված գիտելիքը առավելություն է դիտվում բուհում կրթությունը շարունակող ուսանողների կողմից, քանի որ իրենք արդեն գիտեն այն, ինչին մյուս ուսանողները դեռևս ծանոթանալու են:

Համաձայն ՎՁՏՊՔ անցկացրած հարցումների՝ 2020թ. շրջանավարտների 26,2%-ը կրթությունը շարունակելու է բուհում, 24,6%-ը գործազուրկ են, 31,1%-ը չեն աշխատում իրենց մասնագիտությամբ և միայն 18,1%-ն է աշխատում իր մասնագիտությամբ:

ՄԿԾ-ներն իրականացվում են սահմանված պետական կրթական չափորոշիչների շրջանակում: Կատարվում են միայն մոդուլների տեսական և գործնական պարապմունքների ժամաքանակների որոշ փոփոխություններ՝ չափորոշիչներով նախատեսված փոփոխությունների կատարման թույլատրելի սահմաններում: Առարկայական ուսումնական ծրագրի կառուցվածքը ներառում է տվյալ առարկայի նպատակը, խնդիրները և բովանդակությունը, համապատասխանում է մասնագիտությունների ուսումնական պլաններին և պետական կրթական չափորոշիչներին: Դասընթացի (մոդուլի) ծրագրերը կազմելիս քոլեջն առաջնորդվում է ՊԿԶ-ներով:

Հանրակրթական առարկաների ծրագրերի մշակումն իրականացվում է ավագ դպրոցների ծրագրերի հիման վրա: Դասախոսները կարող են իրենց հայեցողությամբ օգտագործել նաև ՀՀ ԿԳՄՄ կողմից երաշխավորված ծրագրերը:

Ընտրովի առարկաների ծրագրերը մշակելիս ՎՁՏՊՔ-ն հաշվի է առնում այն հանգամանքը, թե տվյալ առարկան որքանով է նպաստում ուսանողների հմտությունների և կարողությունների զարգացմանը: Նոր առարկայի (մոդուլի) ծրագիր կազմելու համար նախաձեռնող կողմերն են դասախոսը, ամբիոնը և ուսումնամեթոդական խորհուրդը: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողների և (կամ) գործատուների կողմից նմանատիպ նախաձեռնություններ չեն արձանագրվել:

ՄԿԾ-ներում առկա են ՊԿԶ-ներով սահմանված վերջնարդյունքների և շնորհվող որակավորումների մանրամասն նկարագրեր, որոնք հիմնականում համապատասխանում են ՈԱՇ-ի պահանջներին:

ՄԿԾ-ներում ներառված բոլոր առարկաների (մոդուլների) մշակման, վերանայման և հաստատման գործընթացն իրականացվում է համաձայն «Առարկաների (մոդուլների) ծրագրերի մշակման, վերանայման, գնահատման և հաստատման» կանոնակարգի:

Այցի ընթացքում պարզվեց, որ «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության որոշ մոդուլների ծրագրերում եղել են բովանդակային նմանություններ «Ձեռներցություն» մոդուլի հետ, որի պատճառով վերոնշյալ ծրագրերում կատարվել են ժամաքանակի փոփոխություններ: Նմանատիպ փոփոխություններ կատարվել են նաև «Զբոսաշրջություն» մասնագիտության մոդուլային ծրագրերում: Բացի այդ՝ «Զբոսաշրջություն» մասնագիտության որոշ մոդուլային ծրագրեր փորձել են հարմարեցնել աշխատաշուկայի և գործատուների պահանջներին: Այդ նպատակով կատարվել են նաև որոշ արդյունքների և թեմաների փոփոխություններ:

Այցի ընթացքում պարզվեց, որ աշխատաշուկայի և գործատուների պահանջների համակողմանի ուսումնասիրություն չի արվել: Հստակեցված չեն արտաքին շահակիցների ակնկալիքները: Փոփոխությունների համար հիմք են հանդիսացել գործընթացում ներգրավված անձանց ընդհանրական պատկերացումները և որոշ շահակիցների հետ ոչ ֆորմալ հանդիպումներում արտահայտված կարծիքները:

Ուսումնական ծրագրերը կազմվում են առարկան (մոդուլը) դասավանդող մասնագետների կողմից: Ծրագրերը կազմելիս դասախոսները առաջնորդվում են պետական կրթական չափորոշիչներով, տվյալ մասնագիտության ուսումնական պլանով, ՀՀ ԿԳՄՄ նախարարության որոշումներով և հրամաններով: Ըստ ՎՁՏՊՔ ԻՎ-ի՝ ՄԿԾ-ները կազմելիս հաշվի են առնվում նաև աշխատաշուկայի պահանջներն ու առանձնահատկությունները (ընտրովի առարկա, պահուստային ժամեր): Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ ՄԿԾ-ների մշակման և ներդրման գործընթացներին գործատուների ներգրավվածությունը թույլ է արտահայտված:

Կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության որակի ու արդյունավետության շարունակական բարձրացումը, ինչպես նաև ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստող քաղաքականություն վարելու անհրաժեշտությունն ամրագրված է քոլեջի ռազմավարական ծրագրում:

Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ քուլեջի մշակած ՄԿԾ-ների փաթեթները ներառում են ՄԿԾ-ների նպատակները, մեթոդաբանությունն ու ռեսուրսները և գնահատման մեթոդները, սակայն ուսումնասիրման համար նախատեսված գրականության ցանկ չի նախատեսված:

Ըստ ՎՁՏՊՔ ինքավերլուծության՝ ամբիոնի նիստում հավանության արժանացած կրթական ծրագիրն ուղարկվում է ուսումնամեթոդական և կառավարման խորհուրդ՝ քննարկման համար: Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ կառավարման խորհրդում կրթական ծրագրերի քննարկումների դեպքերը հատուկ են:

ՄԿԾ-ների համար քուլեջում առկա է ուսումնառության արդյունքների և մոդուլների քարտեզագրում, սակայն ուսումնառության արդյունքների համապատասխանության մեջ երբեմն հանդիպում են մոդուլների (առարկաների) չհիմնավորված քարտեզագրման դեպքեր: Մասնավորապես՝ հանրահաշիվն ընդգրկված է 0411 մասնագիտության ՈւԱ 2-ում, ֆիզկուլտուրան ընդգրկված է 0613 մասնագիտության ՈւԱ-ների մեջ, իսկ 0411 կամ 1015 մասնագիտությունների ՈւԱ-ներում այն բացակայում է:

ՎՁՏՊՔ-ում աշխատանքներ են տարվում դասավանդման և ուսումնառության ավանդական մեթոդները վերանայելու և նորարարական մոտեցումներ ներդնելու ուղղությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ դասավանդման մեթոդների ընտրությունն իրականացնում են մասնագիտական ամբիոնները՝ հաշվի առնելով տվյալ մոդուլի կամ առարկայի առանձնահատկությունները:

Վերջնարդյունքներով պայմանավորված դասավանդման մեթոդների ընտրության հստակ չափանիշներ սահմանված չեն: Ըստ ինքնավերլուծության՝ դասավանդման որակի գնահատման մեթոդներ նույնպես դեռևս բավարար չափով մշակված չեն, և պլանավորվում է առաջիկայում լրացնել այդ բացը:

Քուլեջում մշակված և ներդրված ՄԿԾ-ների և դրանց առանձին բաղադրիչ հանդիսացող առարկայական դասընթացների ծրագրերում ամրագրված է, որ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման համար նախատեսվում են սեմինար պարապմունքներ, դասախոսի ուղղորդմամբ՝ հանձնարարված գրականության շրջանակներում ինքնուրույն աշխատանքներ (թարգմանություններ, մշակումներ), իսկ գործնական, մասնագիտական հմտությունների ձեռքբերման համար նախատեսվում են գործարար խաղեր, խմբային հետազոտական աշխատանքներ, որոշ մասնագիտական կամ մասնագիտացման առարկաներից պարտադիր անհատական աշխատանքներ, պրակտիկաների կազմակերպում, ավարտական աշխատանքների և դիպլոմային նախագծումների նախապատրաստում և այլն: Ընդհանրական կարողությունների ձեռքբերման համար նախատեսվում են խմբային աշխատանքներ, մշակումներ և դրանց շնորհանդեսներ:

Ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի համար ամրագրված են դասավանդման և ուսումնառության մեթոդներ: Տեսական գիտելիքները ամրապնդելու, ուսանողների հմտությունները և կարողությունները զարգացնելու նպատակով գործնական և սեմինար պարապմունքների ընթացքում լայնորեն կիրառվում են թեստեր, գործարար խաղեր, իրավիճակային վերլուծություններ: Նախատեսվում է կարևորել և կիրառել հիմնախնդրային դասախոսությունների մեթոդը:



Փորձագիտական այցից, դասալսումներից և հանձնարարականների ուսումնասիրությունից պարզվեց, որ դասախոսները տարբեր մեթոդներ են գործածում դասավանդան գործընթացում, ինչը դրականորեն է ազդում և արտահայտվում է ուսանողների մոտիվացվածությամբ և դասապրոցեսում ներգրավվածությամբ: Սակայն դրա հետ մեկտեղ հանձնարարականները գլխավորապես ուղղված են գիտելիքի ձևավորմանը: Վերլուծությունների և ուսումնասիրությունների իրականացմանն ուղղված հանձնարարականները միայն առանձին դեպքերում են դրսևորվում:

Ըստ ՎՁՏՊՔ ինքնավերլուծության՝ կրթական ծրագրի համապատասխանությունը ՊԿԶ-ին վերահսկվում է ամբիոնի վարիչի կողմից, որոնց ստուգման արդյունքները քննարկվում են ամբիոնի նիստում, այցից պարզվեց, որ այդ քննարկումները տեղի են ունենում նաև Ուսումնական մասի ներգրավմամբ: Պարբերաբար իրականացվում է ծրագրերի արդյունավետության ներքին գնահատում: Գնահատման արդյունքները ներկայացվում են ամբիոնների և ուսումնամեթոդական խորհրդի նիստերի քննարկմանը: Փորձաքննության ընթացքում նկարագրված ընթացակարգով վերահսկողության իրականացումը հավաստող փաստեր չարձանագրվեցին:

Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ «Հաշվապահական հաշվառում» և «Իրավագիտություն» մասնագիտությունների պրակտիկաները կազմակերպվում են մարզի տարբեր պետական և մասնավոր կազմակերպություններում, որոնք ապահովված են համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով: Պարզվեց նաև, որ մարզում ՏՏ ոլորտի կազմակերպություններ գրեթե չկան: Այդ պատճառով «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության պրակտիկաները կազմակերպվում են ոչ մասնագիտական վայրերում, որոնք համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող աշխատակիցներ չունենալու պատճառով չեն կարող ապահովել պրակտիկայի արդյունավետությունը: Առաջացած բացը փորձում են լրացնել քուլեջի պրակտիկայի ղեկավարի հետ հաճախակի հանդիպումների միջոցով: «Զբոսաշրջություն» մասնագիտության պրակտիկան ուսանողների զգալի մասն անցկացնում է հյուրանոցներում ու հյուրատներում:

«Ֆինանսներ» մասնագիտությամբ իրականացվում է հեռակա ուսուցում, որի ընթացքում տեսական մասը կատարվում է մոդուլային ծրագրի 30%-ի չափով: Հեռակա ուսուցման արդյունավետության և այդ մասնագիտության շրջանավարտների որակավորման արժանահավատության վերաբերյալ ուսումնասիրություններ չեն արվել՝ հաշվի առնելով հեռակա ուսուցման առանձահատկությունները:

Ըստ ինքնավերլուծության՝ ուսանողների ընթացիկ, կիսամյակային և տարեկան առաջադիմությունների քանակական և որակական արդյունքներն ըստ խմբերի և կուրսերի հավաքագրվում ու վերլուծվում են ամբիոններում: Փաստաթղթերի փորձաքննությունից պարզ դարձավ, որ ամբիոններն իրականացնում են միայն տվյալների քանակական վերլուծություն: Այդ հիմքով որակական վերլուծություն և բարելավման առաջարկություններ առկա չեն:

2014 թ.-ից շրջանառության մեջ է դրված «Ուսանողների գիտելիքների գնահատման, հսկման և բողոքարկման համակարգի ընթացակարգ» փաստաթուղթը: Սույն փաստաթուղթը ներառում է սովորողների գիտելիքների ստուգման բոլոր ձևերը (ընթացիկ և միջանկյալ

ստուգումներ, կիսամյակային ստուգարքներ և քննություններ, պետական ամփոփիչ ատեստավորում), ինչպես նաև գնահատման, բողոքարկման, վերահանձնման գործընթացը:

Ըստ ինքնավերլուծության՝ ուսանողների գիտելիքի ստուգման ձևերի ընտրության հարցում ամբիոններին տրված է ակադեմիական ազատություն: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ ամբիոնները, ելնելով իրենց դասավանդած մոդուլների առանձնահատկություններից, ինքնուրույն են ընտրում գիտելիքի ստուգման եղանակը: Ըստ ինքնավերլուծության՝ կարողությունների գնահատումն իրականացնում են դասավանդողը, պրակտիկայի ղեկավարը, գործատուն: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ գործատուն գնահատման գործընթացին մասնակցում է միայն պրակտիկայի օրագրում ուսանողի բնութագիրը գրելով: Պրակտիկայի գնահատումը կատարվում է պրակտիկայի ղեկավարի կողմից՝ պրակտիկայի օրագրի և հաշվետվության հիման վրա՝ հաշվի առնելով ուսանողի մասին պրակտիկայի վայրի համապատասխան բնութագիրը: Պրակտիկայի գնահատման չափանիշներ և գնահատականի ձևավորման առանձին բաղադրիչներ սահմանված չեն:

ՎՁՏՊԳ նինքնավերլուծության համաձայն՝ գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած աշխատանքների արդյունքները, ընթացիկ և կիսամյակային ամփոփիչ ստուգումները, հետազոտական-ստեղծագործական աշխատանքը, ուսումնական ճամփորդությունները, հայրենագիտական արշավները, ստեղծագործական մրցույթներին, օլիմպիադաներին, մեդիա ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցությունը:

Ըստ ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է տարբեր մեթոդներով. դերային խաղ, բանավոր հարցում, գործնական առաջադրանք, հմտությունների թեստ, անհատական առաջադրանք, տեսանյութերի և շնորհանդեսների պատրաստում, ուսումնական հետազոտություններ:

Հարկ է նշել, որ քոլեջում իրականացվում են բազմաբովանդակ ՄԿԾ-ներ, ինչը ենթադրում է ուսումնառության արդյունքների գնահատման բազմազանություն: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ գնահատման գործող մեթոդները ոչ բոլոր ուսումնառության արդյունքների ստուգումն են երաշխավորում:

Քոլեջում գործածության մեջ է դրված «Ավարտական աշխատանքների գնահատման չափանիշներ» փաստաթուղթը, որում ամրագրված է յուրաքանչյուր չափանիշի կշիռը ընդհանուր 25 միավորանոց համակարգում: Իսկ չափանիշի գնահատման բաղադրիչներ կամ չափորոշիչներ սահմանված չեն:

2014 թ.-ին քոլեջում շրջանառության մեջ է դրվել ակադեմիական ազնվության կարգը: Ըստ այդ կարգի, ակադեմիական ազնվության խախտման դեպքում պատասխանատվություն նախատեսվում է միայն ուսանողների համար: Փորձաքննության ընթացքում պարզ դարձավ, որ դիպլոմային աշխատանքներին ներկայացվող պահանջներում ամրագրված են միայն դիպլոմային նախագծերի կատարման տեխնիկական պահանջները, իսկ բովանդակային պահանջները բացակայում են: Դիպլոմային աշխատանքները հաճախ ռեֆերատիվ բնույթ են կրում:

Փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ ուսանողների կատարած աշխատանքներում ինքնուրույնության չափաբաժինը շատ փոքր է, և գրեթե միշտ բացակայում են օգտագործված աղբյուրների հղումները: Քոլեջի կողմից ներկայացված դիպլոմային աշխատանքների ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց,

որ դրանց կատարման ընթացքում հիմնական շեշտադրումն արված է թեմայի տեսական մասին, երբեմն դրանք ընդամենը այս կամ այն մոդուլի տեսական նյութի շարադրանք են: Փորձաքննության ընթացքում նաև պարզվեց, որ քոլեջում ակադեմիական ազնվության խախտման դեպքեր չեն արձանագրվել: Փաստաթղթերի ուսումնասիրությունից ակնհայտ դարձավ, որ դա պայմանավորված է ակադեմիական ազնվության խախտումների բացահայտման և կանխարգելման գործուն մեխանիզմների բացակայությամբ:

2014 թ.-ին ՎՋՏՊՔ-ում շրջանառության մեջ է դրվել «Բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ» փաստաթուղթը, որում նկարագրված են բենչմարքինգի գործընթացի կազմակերպական հիմունքները: Սույն փաստաթղթում նշված է նաև, որ դրանում նկարագրված չեն այն գործընթացները, որոնք իրականացվում են քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից: Փորձաքննության ընթացքում կառուցվածքային ստորաբաժանումների կողմից սույն փաստաթղթով առաջնորդվելու օրինակներ չարձանագրվեցին: Քոլեջի ինքնավերլուծության, փաստաթղթերի ուսումնասիրության և այցի ընթացքում պարզվեց, որ տարբեր ծրագրերի շրջանակներում եղել են շփումներ ինչպես ՀՀ, այնպես էլ արտերկրի որոշ ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ, սակայն դրանք զուտ ճանաչողական բնույթ են կրել: Քոլեջի որոշ քայլեր պարունակում են բենչմարքինգի տարրեր, սակայն նշված փաստաթղթով նախանշված հստակ քաղաքականություն և գործընթացներ առկա չեն: Փորձաքննության ընթացքում պարզվեց նաև, որ ՄԿԾ-ների մասով ՀՀ ուսումնական հաստատությունների նույն մասնագիտությունների համեմատական վերլուծություն չի իրականացվել:

Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ ուսանողների և դասախոսների շարժունության ցուցանիշները զրոյական են: Ուսանողների և դասախոսների շարժունության ապահովման ուղղությամբ նպատակային միջոցառումներ չեն իրականացվել:

ՎՋՏՊՔ-ում 2011թ.-ից ի վեր ստեղծվել են տարբեր փաստաթղթեր, որոնք նախատեսված են կարգավորելու կրթական գործընթացները: Մասնավորապես՝ 2011թ.-ին «Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ», 2014թ.-ին՝ «Շահակիցների կարիքի և բավարարվածության գնահատման կարգ» և «Որակի ապահովման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության, հետադարձ կապի քաղաքականություն և ընթացակարգ», 2020թ.-ին՝ «Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և ընթացակարգ» և այլն: Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ չնայած այդ փաստաթղթերի որոշ մասում առկա են կարգավորման ենթակա գործընթացների մանրամասն նկարագրություններ, այդուհանդերձ, միշտ չէ, որ առաջնորդվում են այդ փաստաթղթերով: Մասնավորապես՝ շահակիցների կարիքների գնահատման կարգում նկարագրված են գնահատման փուլերը, ըստ այդմ նախատեսվում է. «շահակիցներից ստացված արդյունքների մշակում՝ ստացված տվյալների համակարգում և վերլուծություն, քոլեջի շահակիցների շրջանում տեղեկատվության ապահովում գնահատված կարիքների արդյունքների վերաբերյալ», սակայն փորձաքննության ընթացքում ստացված տվյալների վերլուծություն իրականացնելու փաստ չարձանագրվեց, շահակիցների շրջանում գնահատված կարիքների վերաբերյալ տեղեկատվություն նույնպես առկա չէր: 2020թ. ընդունված «Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականություն և ընթացակարգ»

փաստաթղթում նկարագրված են ընթացակարգի իրականացման ուղիները: Ընթացակարգը ենթադրում է առկա վիճակի գնահատում, վերանայման հանձնաժողովի ստեղծում, արձանագրությունների կազմում, ռեսուրսների արդյունավետության գնահատում, արդիականության վերլուծություն, արդիականացման հնարավորությունների ուսումնասիրություն, արդիական ռեսուրսների ընտրության չափանիշների մշակում ըստ մասնագիտությունների և այլն: Փորձաքննության ընթացքում նշված ընթացակարգի կիրառման օրինակներ չհայտնաբերվեցին:

Քուլեջում ավելացվել են մեթոդիստի և որակի ապահովման պատասխանատուի հաստիքները, որոնք նախատեսված են համակարգված գործընթացների միջոցով աջակցել կրթական չափորոշիչների պահպանման, կրթական ծրագրերի որակի ապահովման և շարունակական բարելավման աշխատանքներին:

Կիրառվում են դասալսումներ տնօրենի տեղակալների կողմից, իսկ ամբիոններում՝ փոխադարձ դասալսումներ: ՈՆԱՀ-ի կողմից իրականացվում են նաև մոդուլների արդյունքների հանձնման կրկնաստուգումներ: Դասալսումների արդյունքում վերհանվում են թերությունները, դրանք քննարկվում են ամբիոններում, դրական փորձն ու նոր մոտեցումները հանրայնացվում են քուլեջի մյուս դասախոսների շրջանում, կազմակերպվում են մեթոդական զեկուցումներ, սկսնակ դասախոսներին ցուցաբերվում է աջակցություն մատենավարության և դասապրոցեսի արդյունավետ իրականացման հարցերում: Մոդուլների արդյունքների կրկնաստուգման մեխանիզմի կիրառմամբ քուլեջը նպատակ ունի նպաստելու դասախոսների կողմից ուսանողների գնահատման գործընթացի օբյեկտիվության բարձրացմանը:

Համաձայն քուլեջի ինքնավերլուծության՝ ՄԿԾ-ների իրականացման և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկությունների հավաքումն ու մշակումը հիմնականում իրականացվում է գործատուների հետ հանդիպումների, պրակտիկաների ընթացքում գործնական գիտելիքների կիրառման, փորձառության շրջանակում նրանցից ստացվող հետադարձ կապի, շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ պարբերաբար անցկացվող հարցումների, ուսանողների հետ տնօրենի և ամբիոնների վարիչների հանդիպումների, սոցիալական ցանցերում ուսանողների և այլ շահակիցների՝ քուլեջի գործունեության վերաբերյալ մշտադիտարկման, ուսանողների հարցումների, շրջանավարտների ցանցից ստացվող տվյալների և այլ մեխանիզմներով: Այցի ընթացքում պարզվեց, որ նշված մեխանիզմների մի մասը կապված է ոչ ֆորմալ հարթակների հետ և որևէ փաստաթղթում ամրագրված չէ, կառավարման մարմիններին ներկայացված բովանդակային վերլուծություններ առկա չեն, իսկ առաջարկությունները հատուկենտ են:

Ըստ ՎՁՏՊՔ ինքնավերլուծության՝ գործատուների կողմից ուսանողների գիտելիքների գնահատման ամենամյա հարցումները, որոնք կազմակերպվում են ՈՆԱՀ-ի կողմից, բացահայտում են ուսուցման գործընթացում իրականացված աշխատանքների որակը, գործատուների պահանջները, որոնք հաշվի են առնվում ուսումնական ծրագրերում սահմանված կարգով փոփոխություններ անելիս: Հարցաթերթիկների ուսումնասիրությամբ պարզվեց, որ գործատուների շրջանում արված հարցումների ժամանակ բովանդակային առաջարկություններ չեն արվել, և հարցումների արդյունքում ՄԿԾ-ներում արված փոփոխություններ առկա չեն:

ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմ հանդիսացող հաշվետվությունների ձևաչափերում առկա չեն կատարված աշխատանքների գնահատականներ, վերլուծություններ և առաջարկություններ:

**Դաստողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՎՁՏՊՔ-ի կողմից իրականացվող ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ համահունչ են քոլեջի առաքելությանն ու ՈԱՇ-ին:

ՄԿԾ-ները մշակելիս քոլեջն առաջնորդվում է «Առարկաների (մոդուլների) ծրագրերի մշակման, վերանայման, գնահատման և հաստատման» կանոնակարգով և փորձում է հաշվի առնել տարածաշրջանային իրողությունները, սակայն համակողմանի ուսումնասիրություններ չի իրականացնում, այլ սահմանափակվում է միայն գործընթացին մասնակից որոշակի անձանց անհատական կարծիքներով: Չնայած ՎՁՏՊՔ-ն անցկացնում է որոշ հարցումներ, սակայն փորձագիտական խումբը կարծում է, որ հարցումների նեղ շրջանակը և հարցման մասնակիցների սակավությունը նույնպես չեն ապահովում շահակիցների ներգործուն մասնակցություն ՄԿԾ-ների մշակման և իրականացման գործընթացներում:

Մասնագիտությամբ աշխատող ՎՁՏՊՔ շրջանավարտների փոքր քանակը և նրանց հետ հետադարձ կապի թույլ մեխանիզմները հնարավորություն չեն տալիս պարզելու, թե որքանով են իրականացել մասնագիտական ոլորտում նրանց սպասումները, և ինչ փոփոխություններ է անհրաժեշտ կատարել ՄԿԾ-ներում:

Առաջանցիկ նպատակային ուսումնասիրությունների բացակայության և նեղ մասնագիտական առարկաների (մոդուլների) համար անհրաժեշտ որակավորում ունեցող մասնագետների սղության պատճառով քոլեջում իրականացվող կրթական ծրագրերի ցանկի փոփոխություններ կատարվում են միայն իրավիճակի թելադրանքով կամ խիստ անհրաժեշտությունից ելնելով, ինչը, կարծում ենք, խոչընդոտում է նաև նոր ՄԿԾ-ների ներդրման հստակ քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

ՎՁՏՊՔ-ն կարևորում է կրթական ծրագրերի վերջնարդյունքները և փորձում է ցուցաբերել ՄԿԾ-ների մշակման վերջնարդյունքահեն մոտեցում, ինչպես ծրագրի մակարդակով, այնպես էլ մոդուլի և առանձին դասընթացների: Ունի վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, դասախոսները ազատ են ընտրելու և բարելավելու դրանք: Քոլեջում կիրառվում են նաև նորարար մեթոդներ, ինչին նպաստել են ինչպես լավ փորձի տարածման, այնպես էլ դասախոս-ուսանող ամուր կապը: Սակայն ՄԿԾ-ներում հստակ տարանջատված չեն գիտելիք, կարողություն, հմտություն արդյունքները:

Ուսանողների կարողությունների գնահատումը վերապահվում է տարբեր սուբյեկտների. դասավանդող, պրակտիկայի ղեկավար և գործատու: Սակայն որոշ մասնագիտությունների ուղղությամբ գործատուների բացակայությունը կարող է խոչընդոտել ուսանողների պահանջվող կարողությունների ձևավորմանը:

ՎՁՏՊՔ-ն կարևորում է գնահատման բազմագործոնային համակարգի անհրաժեշտությունը և փորձում է ներդնել այն: Ողջունելի է, որ դրա որոշ տարբեր արդեն առկա են. ուսանողների ընթացիկ ակտիվություն և հաճախումներ, անհատական աշխատանքներ, եթե

այդպիսիք նախատեսված են մոդուլով, էլեկտրոնային նյութեր, շնորհանդեսներ: ՈՆԱՀ-ի կողմից իրականացվում են արդյունքների հանձնման կրկնաստուգումներ, ինչը կարող է նպաստել գնահատման օբյեկտիվության բարձրացմանը:

Քոլեջի որոշ մասնագիտությունների ուսանողներին տրվում են տարաբնույթ հանձնարարականներ, սակայն այդ փորձը չի կիրառվում բոլոր մասնագիտությունների դեպքում, և տրված հանձնարարականները ոչ միշտ են նպաստում անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձևավորմանը, հետևաբար դրանց միջոցով հնարավոր չէ գնահատել ուսանողի կարողունակությունը տվյալ մոդուլի կամ արդյունքի շրջանակներում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում մշակվել և ներդրվել է փաստաթուղթ, որի նպատակն է ակադեմիական ազնվության ապահովումը: Սակայն մտահոգիչ է կիրառման տեսանկյունից շոշափելի արդյունքների բացակայությունը:

Քոլեջում գիտակցում են հետագա զարգացման համար բենչմարքինգի և շարժունության կարևորությունը, սակայն վերլուծված չեն բենչմարքինգի և շարժունության ապահովման ասպարեզում քոլեջի հնարավորություններն ու հեռանկարները, մշակված չեն այնպիսի մեխանիզմներ, որոնք կնպաստեին այլ ուսումնական հաստատությունների հետ փորձի փոխանակման արդյունավետ աշխատանքներ իրականացնելուն:

Քոլեջում ՄԿԾ-ների մասով ՀՀ ուսումնական հաստատությունների նույն մասնագիտությունների համեմատական վերլուծություն չի իրականացվել, այդուհանդերձ, ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչներին համապատասխան կրթական ծրագրեր իրականացնող ՀՀ բոլոր ուսումնական հաստատությունները պետք է առաջնորդվեն ՊԿԶ-ներով, որոնք սահմանում են տվյալ մասնագիտության նկատմամբ հիմնական պահանջները, ուստի դա կարող է երաշխիք լինել, որ նույն մասնագիտությունների ՄԿԾ-ները բովանդակային առումով համահունչ լինեն միմյանց: Միաժամանակ փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի կողմից այնպիսի ծրագրերի իրականացումը, որոնց շրջանակում ուսումնասիրել են այլ քոլեջների որոշ փորձ (օրինակ՝ Գերմանիայի):

Մշակվել են կրթական գործընթացները կարգավորող բազմաթիվ փաստաթղթեր: Սակայն առկա են փաստաթղթեր, որոնց ներդրման արդյունքում կատարված փոփոխությունների մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների թերի կիրառումը, բովանդակային վերլուծությունների հիման վրա վերանայումների բացակայությունը խոչընդոտել են դրանց իրագործելիության իրատեսականությանը: Միաժամանակ մի շարք փաստաթղթեր, թեկուզ մասնակիորեն գործելով հանդերձ, նպաստել են կրթական ծրագրի իրականացման առանձին գործընթացների կանոնակարգման:

Դեռևս ՄԿԾ-ների համընդհանուր գնահատման և դրանց արդյունքներով պայանավորված՝ համակարգված գործընթաց չի իրականացվում, սակայն տարբեր միջոցներով ստացված տեղեկատվությունը և ազդակները առանձին դեպքերում ազդում են ԿԾ-ների իրականացման գործընթացի բարելավման վրա: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ կրթական գործընթացի կազմակերպման պատասխանատուները պարբերաբար ներկայացնում են կատարված աշխատանքների հաշվետվություններ, սակայն կարծում է, որ հաշվետվությունների ձևաչափերում գնահատականների, վերլուծությունների և առաջարկությունների ներառումը կարող էր հիմք հանդիսանալ խորքային ուսումնասիրությունների համար, ինչպես նաև նպաստել

թերությունների բացահայտմանը և, դրանով պայմանավորված, բարելավմանը միտված փոփոխությունների իրականացմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ քոլեջում առկա ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ համապատասխանում են ՎՁՏՊՔ առաքելությանը, ՈԱՇ-ի նկարագրիչներին, կազմված են ըստ պետական կրթական չափորոշիչների, քոլեջում գործում են գիտելիքի գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր, ՄԿԾ-ներում առկա են դասավանդման մեթոդների մանրամասն նկարագրություններ, առկա է ակադեմիական ազնվության կարգ, կատարվում են արտերկրի որոշ քոլեջների հետ շփման և համեմատության քայլեր, փորձ է արվում իրականացնել ՄԿԾ-ների մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականություն, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՁՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

#### IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

#### Փաստեր

ՎՁՏՊՔ-ում գործում է 2012 թվականին նախարարի հրամանով հաստատված ՀՀ նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը: Ընդունելությունն իրականացվում է նշված կարգի համաձայն. յուրաքանչյուր մասնագիտության համար հատկացվող տեղերի քանակը հաստատվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով: Քոլեջում առկա է 2014 թվականին հաստատված դիմորդների ընդունելության ընթացակարգ: Քոլեջում ոլորտային մասնագիտություններ չեն ուսուցանվում, այդ իսկ պատճառով ընդունելության քննություններ չեն կազմակերպվում: Ոչ ոլորտային մասնագիտությունների ընդունելությունն իրականացվում է մրցութային կարգով, ավարտական փաստաթղթի գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության համար մրցութային առարկաների գնահատականների հանրագումարի արդյունքում: Ընդունելության արդյունքները հրապարակվում են քոլեջի ֆեյսբուքյան էջում: Ինքնավերլուծության համաձայն՝ ընդունելության ժամանակ մասնագիտության հարցում չկողմնորոշված դիմորդի համար կարիերայի խորհրդատուներն անցկացնում են թեստեր, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ այն չի կրում համակարգված բնույթ (չկողմնորոշված դիմորդների մի մասի համար արվում է, ոմանց համար՝ ոչ, ոմանք չեն հասկանում նաև կիրառման անհրաժեշտությունը և նպատակաուղղվածությունը): Քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման տարբեր մեխանիզմներ: Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվում են քոլեջի դասախոսների շրջայց մարզի դպրոցներ, հիմնականում

ապրիլ-մայիս ամիսներին՝ ներկայացվում են քուլեջում ուսուցանվող մասնագիտությունները, քուլեջի հնարավորությունները: Կարիերայի խորհրդատուները նույնպես այցեր են կազմակերպում դպրոցներ, աշակերտների հետ անցկացնում մասնագիտական կողմնորոշման թեստեր: Դպրոցականների համար կազմակերպվում են ճանաչողական այցեր քուլեջ. նրանք ծանոթանում են քուլեջում առկա ռեսուրսներին, մասնագիտություններին: Կարիերայի կենտրոնը և ՈւԽ-ն միասին կազմակերպում են բաց դռների օրեր, ՈւԽ-ի անդամները ներկայացնում են մասնագիտությունները (տեսանյութերի միջոցով), հրավիրվում են շրջանավարտները, որոնք պատմում են իրենց ձեռքբերումների մասին:

Քուլեջն ունի կայքէջ, ֆեյսբուքյան էջ, որտեղ հրապարակվում են քուլեջային իրադարձությունները, գովազդվում մասնագիտությունները, ներկայացվում փաստաթղթային նորմատիվ ակտեր և այլն: Համավարակի պայմաններում ընդունելությունը կազմակերպվել է առցանց, ընդունելության հետ կապված հարցերին արձագանքում է քուլեջի անձնակազմը էլեկտրոնային հարթակում: Պահանջարկի դեպքում քուլեջում անցկացվում են նաև կարճաժամկետ դասընթացներ: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ կան ուսանողներ, որոնք մասնակցել են տարբեր կարճաժամկետ դասընթացների և գոհ են դրանցից:

Քուլեջի ուսանողների թիվը վերջին տարիներին հիմնականում կայուն է: Համաձայն ինքնավերլուծության՝ քուլեջից ազատվածների, հեռացվածների թիվը նվազման միտում ունի, սակայն քուլեջի կողմից չեն իրականացվում նշված հարցի շուրջ վերլուծություններ: Քուլեջում գործում է նաև վարձավճարների զեղչման համակարգ: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ քուլեջում ուսանողները հիմնականում քուլեջի մասին իմացել են իրենց ընկերներից, բաց դռների օրերի ժամանակ, նրանց ուղղորդել են ծնողները:

ՎՁՏՊՔ-ում գործում է ուսանողների «Կրթական կարիքների վերհանման քաղաքականություն» փաստաթուղթը: Քուլեջում անցկացվում են հարցումներ և՛ էլեկտրոնային տարբերակով, և՛ թղթային, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզ չդարձավ որևէ խնդիր, որը լուծվել է այս գործիքի միջոցով: Նշված հարցումները սկսել են կիրառվել առավել մեծ շրջանակ ընդգրկելով, այն ժամանակ, երբ քուլեջում սկսվել է հավատարմագրման գործընթացը: Քուլեջն ունի բողոք-առաջարկությունների արկղիկ, որը ինչպես պարզվեց, այցի ժամանակ բացվում է 2-3 ամիսը մեկ, սակայն չնշվեց ուսանողների կողմից հարցեր, որոնք բարձրաձայնվել են այս տարբերակով: Ուսանողների մի մասը իրենց հուզող հարցերը բարձրաձայնում են ՈւԽ-ի միջոցով: ՈւԽ-ի անդամներից ընդգրկվում են նաև քուլեջի կառավարման խորհրդում: Սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառավարման խորհրդում ընդգրկված ուսանողները պասիվ են և չեն ընկալում այս օղակը, որպես իրենց անհանգստացնող հարցերի բարձրաձայնման մարմին: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ ուսանողների մեծ մասը իրենց կրթական կարիքները բարձրաձայնում են կուրսղեկների միջոցով:

Համաձայն ինքնավերլուծության՝ լրացուցիչ պարապմունքները կազմակերպվում են ամբիոններում կազմված գրաֆիկների համաձայն, սակայն փորձագիտական այցի ժամանակ գրաֆիկների առկայության և կիրառման հանգամանքը չհաստատվեց: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ չպարզաբանված, դժվարհասկանալի նյութերը բացատրվում են ուսանողներին դասապրոցեսի ընթացքում նախքան նոր նյութին անցում կատարելը: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ տարվա ընթացքում անցկացվում են խորհրդատվություններ,



հատկապես ստուգարքներից և քննություններից առաջ, պարզաբանվում են հարցաշարերի առավել բարդ հարցերը: Խորհրդատվական պարապմունքներ կազմակերպվում են նաև պետական ամփոփիչ ատեստավորումից առաջ: Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջը սահմանել է ուսանողներին վարչական կազմի հավելյալ օժանդակման կարգ և ժամանակացույց: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առանց ժամանակացույցի ուսանողները ցանկացած պահի կարող են դիմել վարչական անձնակազմին: Ուսանողները դիմում են կուրսդեկներին, իրավախորհրդատուին, ուսմասվարին տարկետման իրավունքից օգտվելու, ուսման վարձի զեղչերի, կրթաթոշակ ստանալու, քննաշրջանի հետ կապված հարցերով: Քոլեջն ունի Կարիերայի կենտրոն: Ուստարվա ընթացքում անցակցվում են անհատական և խմբային խորհրդատվություններ, սեմինարներ, կազմակերպվում հանդիպումներ որոշ գործատուների հետ, կարիերայի խորհրդատուներն անցկացնում են մասնագիտական թեստեր:

ՎՋՏՊՔ-ն ունի շրջանավարտների վերաբերյալ տվյալների բազա, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմը պարբերական կիրառում չունի: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ Կարիերայի կենտրոնի կողմից որոշ շրջանավարտներ գրանցել են զբաղվածության կենտրոնում և նրանք աշխատանքի առաջարկ են ստացել:

Քոլեջում որպես հետազոտական աշխատանքներ կարելի է դիտել զբոսաշրջային փաթեթների կազմումը, գինեգործության մասնագիտության համար ուսանողների կատարած դիտարկումները: Դիպլոմային աշխատանքներ ներկայացվել են «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության համար, սակայն նշված աշխատանքները ընդհանուր առմամբ տեղեկատվության հավաքագրման են ուղղված և բացակայում է վերլուծական բաղադրիչը: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ դիպլոմային աշխատանքներ կներկայացվեն բոլոր մասնագիտությունների դեպքում՝ 2021-2022 ուստարվանից սկսած: Այցի ժամանակ պարզվեց, որ քոլեջում վերջերս իրականացվել է միջոլորտային նախագիծ («Նոր հնարավորությունների շուկա») «Հաշվապահական հաշվառում», «Փայտագործություն», «Զբոսաշրջություն» մասնագիտությունների շրջանակում: Փորձագիտական այցի ժամանակ նաև պարզ դարձավ, որ ուսանողների համար պրակտիկաների անցկացումը չի զուգակցվում վերլուծական աշխատանքների կատարմանը խթանելով և կապելով պրակտիկան հետազոտական ու վերլուծական աշխատանքների կատարմանը:

ՎՋՏՊՔ-ում կան ուսանողների իրավունքները ամրագրող կանոնակարգեր, փաստաթղթեր: Քոլեջում որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին գործում է ՈւԽ-ն, սակայն փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ ուսանողները ՈւԽ-ն որպես այդպիսի մարմին չեն ընկալում: Ուսանողները հիմնականում դիմում են ՈւԽ-ին կազմակերպչական հարցերով, դիմել են նաև քննության վերահանձնման համար, որպես միջոնորդ օղակ: ՈւԽ-ի միջոցով, ինչպես նշվեց այցի ժամանակ ուսանողների կողմից առաջարկվել է կազմակերպել շաբաթօրյակներ, արշավներ, կառուցել կամուրջ քոլեջի երկրորդ մասնաշենքի համար, բարձրացնել կրթաթոշակները, որոնց մի մասը բավարարվել է: Ուսանողների առաջարկությամբ քոլեջը ձեռք է բերել «մինիբուս», գինու արտադրություն իրականացնելու համար անհրաժեշտ սարքավորումներ, նոր խոհարարական սպասք: Քոլեջի ՈւԽ-ն չունի առանձին բյուջե և չի տրամադրվում ֆինանսական միջոց, ուսանողներն իրենք են միջոցներ

նախատեսում (հիմնականում միջոցառման ծախսերի հետ կապված), գերադասում են սահմանափակվել այնպիսի միջոցառումների կազմակերպմամբ, որոնց ծախսերը կարող են հոգալ ինքնուրույն: ՈւՄ-ի անդամներն ընտրվում են կուրսերում (2-3 հոգի՝ յուրաքանչյուր կուրսից) կուրսղեկի հետ միասին: ՈւՄ-ի առաջարկությամբ նրա անդամներից ընդգրկվում են քոլեջի կառավարման խորհրդում: Փորձագիտական այցից պարզվեց, որ ուսանողները իրենց իրավունքների պաշտպանության հարցում գերադասում են կուրսղեկի օղակը, և այդ հարցերն իրենց պատասխաններն են ստանում կուրսեղեկների միջոցով:

2020 թվականից քոլեջը ներդրել է «Ուսանողների առաջարկությունների, դիմում-բողոքների ներկայացման և դրանց քննարկման ընթացակարգ»-ը, սակայն ուսանողները դեռևս այս մեխանիզմը որպես այդպիսին չեն կիրառում, հարցերն իրենց լուծումն են ստանում իրավիճակային տարբերակով:

Քոլեջում ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման համար անցկացվում են հարցումներ, պարբերաբար կազմակերպվում քննարկումներ, այդուհանդերձ փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման մեխանիզմները ոչ միշտ են հիմք հանդիսանում փոփոխությունների իրականացման և գործընթացների լավարկման համար:

**Դասողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում գործում են դիմորդների հավաքագրման տարբեր մեխանիզմներ, սակայն ՄՈՒՀ-ում չեն իրականացվել կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատումներ: Կարևոր է նշել, որ դիմորդների հավաքագրմանն ուղղված միջոցառումները բավականին ակտիվ կերպով և համակարգված են ընթանում: Նկատելի է ուսանող-կուրսղեկ ամուր կապը, կան առանձին օղակներ, որոնց միջոցով ուսանողը իր կարիքների մասին կարող է բարձրաձայնել, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ նշված օղակները ուսանողի կողմից որպես այդպիսին չեն դիտարկվում, ինչն էլ խոչընդոտում, որը ուսանողները իրենց համապատասխան կարիքները չեն վերհանում այս օղակների միջոցով: Այդուհանդերձ, փորձագիտական խումբն արձանագրում է, որ ուսանողների խնդիրներն անպատասխան չեն մնում, և քոլեջն արձագանքում է դրանց՝ տալով համապատասխան լուծումներ:

Դրական է համարվում, որ պարբերաբար անցկացվում են հարցումներ, սակայն դրանք գործնականում կիրառելի չեն, որը կարող է խոչընդոտել ուսանողների բոլոր կրթական կարիքների վերհանմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները, գործիքները վերանայման և գնահատման կարիք ունեն: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում անցկացվում են խորհրդատվական պարապմունքներ, սակայն խորհրդատվական պարապմունքների և լրացուցիչ պարապմունքների համար առկա ժամանակացույցը ընդհանուր առմամբ չի կիրառվում, այդուհանդերձ փորձագիտական այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումներն էլ ցույց են տվել, որ ուսանողները ստանում են անհրաժեշտ աջակցություն: Հարկ է նշել, որ այս պարապմունքների կանոնակարգումը կնպաստի լրացուցիչ պարապմունքների մասին իրազեկվածության բարձրացմանը և ուսանողների կրթական կարիքների բավարարմանը: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ուսանողները ցանկացած հարցով, ցանկացած

պահի կարող են դիմել վարչական անձնակազմին, սակայն այս գործընթացը կանոնակարգված բնույթ չունի: Քոլեջի Կարիերայի կենտրոնն իրականացնում է աշխատանքներ, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ կենտրոնի և գործատուների կապը համակարգված չէ, ունի մասնակի բնույթ: Շրջանավարտների հետ հետադարձ կապի մեխանիզմները ևս վերանայման և հստակ պլանավորման կարիք ունեն: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտություն կա վերանայելու Կարիերայի կենտրոնի գործունեությունը՝ ուղղված գործատուների կողմից ներկացավող պահանջների վերհանմանը, դրանց կիրառմանը, գործատուներին ընդգրկել քոլեջի կառավարման գործընթացում, սատարել շրջանավարտների մասնագիտական աճին:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև հանձնարարակներում վերլուծական բաղադրիչի ներդրումը բոլոր կրթական ծրագրերի մասով՝ նպաստելու ուսանողների վերլուծական-քննադատողական մտածողության ձևավորմանը: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈւՀ-ում գործում է ՈւԽ, սակայն այն չի ծառայում որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին: Քոլեջն անհրաժեշտություն ունի նաև գնահատելու ուսանողներին մատուցված ծառայությունները գործընթացների շարունակական բարելավումն ապահովելու նպատակով:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քոլեջում առկա են ուսանողների ընդունելության և հավաքագրման մեխանիզմներ, սովորողներն ունեն հնարավորություն բարձրաձայնելու իրենց կրթական կարիքների մասին, գործում է ուսանող-կուրսղեկ ամուր կապը, քոլեջը ձգտում է ներդնել ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, կարևորում է ուսանողների իրավունքների իրացումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՁՏՊՔ-ն համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

#### V. ՊՐՈՑԵՍՈՐԱԴԱՍՍԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

#### Փաստեր

Ըստ ՌԾ-ի՝ ՎՁՏՊՔ-ն իր առջև նպատակ է դրել ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:

Փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և այցի ընթացքում պարզվեց, որ ՎՁՏՊՔ-ում առկա են մի շարք փաստաթղթեր, որոնցում ամրագրված են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության հիմնարար սկզբունքները: Քոլեջն առաջնորդվում է ՎՁՏՊՔ կանոնադրությամբ, որում ընդհանրական անդրադարձ կա

աշխատողների իրավունքներին և պարտականություններին: 2011թ. -ին քուլեջի կողմից մշակված «Ներքին կարգապահական կանոններ»-ում նույնպես ամրագրված են գործատուի և աշխատողների իրավունքներն ու պարտականությունները: ՊԴ կազմի ընտրության ժամանակ ՎՁՏՊՔ-ն հաշվի է առնում նաև ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված մասնագիտության կրթական չափորոշիչներում նկարագրված դասավանդողներին ներկայացվող պահանջները: Բացի կրթական չափորոշիչի պահանջներից՝ քուլեջում մշակվել է «Դասախոսի պաշտոնի նկարագիր», որում նշված են դասախոսի կոմպետենցիաները: 2018թ. -ից քուլեջի պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է մրցույթային սկզբունքով, սակայն, քուլեջի ղեկավարությունը գտնում է, որ ուսանողների սակավությամբ պայմանավորված ժամաքանակի սղությունը և ցածր վարձատրությունը երբեմն խոչընդոտում են անհրաժեշտ որակավորումներ ունեցող մասնագետների ներգրավմանը ուսումնական գործընթացում: Առկա խնդիրը լուծելու համար քուլեջը փորձում է ներգրավել համատեղությամբ աշխատող մասնագետներ (2 մասնագետ) այլ ուսումնական հաստատություններից կամ գործատուների շրջանից: Ըստ ՎՁՏՊՔ ինքնավերլուծության՝ գործատուների շրջանում դժվար է հետաքրքրություն առաջացնել քուլեջի գործընթացների նկատմամբ և որպես դասախոս նրանց ներգրավել դասապրոցեսում:

Ըստ ՎՁՏՊՔ ինքնավերլուծության՝ քուլեջում դասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականության իրականացման շրջանակներում առաջնորդվում են «Քուլեջի ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման, նրանց խրախուսման կամ պատասխանատվության ենթարկելու կարգ», (որը ուսումնական հաստատությունների համար մանրամասն մշակված, տվյալ խնդիրը կանոնակարգող օրինակելի փաստաթուղթ է), ինչպես նաև քուլեջի կողմից մշակված «Դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգ» փաստաթղթերով: Սույն փաստաթղթերի կիրարկմամբ ՎՁՏՊՔ-ն նախատեսում է իրականացնել ՊԴ կազմի պարբերաբար գնահատման ու կրթության որակի շարունակական բարձրացումը: Փորձաքննությամբ և փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ ՊԴ կազմի գնահատման գործընթացներում ՎՁՏՊՔ-ն մասնակիորեն է առաջնորդվում վերոհիշյալ փաստաթղթերով: «Դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգ»-ում ձևակերպված է գնահատման նպատակը, սակայն գնահատման չափանիշները հստակ չափելի չեն: Գործնականում ՎՁՏՊՔ ՊԴ կազմի գնահատումը հիմնականում իրականացվում է դասալսումների և հարցումների արդյունքների հիման վրա: Դասալսումների համար հատկացվում է համապատասխան ժամաքանակ և սահմանվում է ժամանակացույց: Դասալսումներն իրականացնում են ամբիոնի վարիչները: Կիրառվում են դասալսումներ տեղակալների կողմից, իսկ ամբիոններում՝ փոխադարձ դասալսումներ, որոնք իրականացվում են ըստ յուրաքանչյուր կիսամյակի կտրվածքով սահմանված ժամանակացույցի, կիրառվում են նաև ուսանողների գիտելիքի ստուգման կրկնաստուգումների մոտեցումը: Դասալսումների հիմնական նպատակը դասի կազմակերպման մեթոդին ծանոթանալն է: Հարկ է նշել, որ դասալսումների արդյունավետությունը գնահատելու համար մշակված չեն հստակ պահանջներ և ընթացակարգեր: Առկա են դասալսումների արձանագրություններ, սակայն արձանագրություններում անդրադարձ չկա սահմանված կարգում ամրագրված բոլոր չափանիշներին: Դասալսումների արդյունքների հիման վրա կայացված որոշումներ ու փոփոխություններ արձանագրված չեն: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ

դասախոսական կազմի հետ մշտական աշխատանքներ են տարվում ամբիոնների վարիչների և ուսումնական մասի կողմից:

ՎՋՏՊՔ դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակները գնահատելիս կարևորվում է նաև ուսանողների կարծիքը: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողները բարձր են գնահատում դասախոսների կատարած աշխատանքը և քոլեջում ստացած գիտելիքները: Ուսանողների շրջանում անցկացվում են հարցումներ դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման նպատակով: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ նման գնահատումները ավելի շուտ ֆորմալ բնույթ են կրում, հարցումների վերլուծությունների հիման վրա կարիքների վերհանման օրինակներ և այդ ուղղությամբ իրականացված գործընթացներ առկա չեն: ՊԴ մասնագիտական ու մանկավարժական որակները բարելավելու ուղղությամբ կատարված քայլեր չեն արձանագրվել: Ըստ հարցումների՝ ուսանողների 60%-ից ավելին գոհ է դասախոսի աշխատանքից, սակայն չկա վերլուծություն, թե որքանով են եղած մեխանիզմները թույլ տալիս օբյեկտիվ գնահատել ՊԴ կազմը:

ՎՋՏՊՔ-ում դասախոսների աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է հիմնականում քննությունների ընթացքում ուսանողների ցուցաբերած առաջադիմության արդյունքների քանակական վերլուծությամբ: Հստակեցված չէ, թե քննությունների ինչպիսի արդյունքն են համարում դասախոսի լավ աշխատանք:

Ըստ ինքնավերլուծության՝ դասավանդման որակի գնահատման արդյունքների վերլուծությունն ու օգտագործումը իրականացնում են ամբիոնների վարիչները, ՈԱ պատասխանատուն և ուսումնական գծով փոխտնօրենը: Վերջիններիս կողմից արվում են առաջարկություններ և երաշխավորություններ: Փորձաքննության ժամանակ գնահատման արդյունքում արված առաջարկությունների ու երաշխավորությունների վերաբերյալ փաստեր չարձանագրվեցին:

Ըստ ՎՋՏՊՔ ինքնավերլուծության՝ դասավանդման որակը գնահատվում է նաև արտաքին շահակիցների կողմից: Գնահատումն իրականացվում է ուսանողների և շրջանավարտների ցուցաբերած տեսական գիտելիքներից և գործնական հմտություններից գործատուների բավարարվածության վերաբերյալ արված հարցումների միջոցով: Հարցման մասնակիցների քանակը մոտ երկու տասնյակ է, որոնք հիմնականում գործատուներ են: Դասախոսների աշխատանքի գնահատման քաղաքականության մեջ նշված է ոչ միայն խրախուսման, այլ նաև տույժերի մասին. փորձաքննության ընթացքում գնահատման արդյունքներով պայմանավորված տույժերի կիրառման դեպքեր չարձանագրվեցին: Քոլեջում աշխատակիցների և դասախոսական կազմի մոտիվացիայի բարձրացման նպատակով հիմնականում կիրառվում են խրախուսման այն մեխանիզմները, որոնք լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջում:

ՎՋՏՊՔ 2016-2021թթ. ՌԾ-ում նախատեսված է աշխատակիցների նյութական իրավիճակի բարելավում՝ կիրառելով աշխատանքի վարձատրության վարկանիշային խթանիչ համակարգ, ինչպես նաև աշխատանքի վարձատրության համակարգի կատարելագործում՝ իրականացնելով նյութական խթանման տարբերակված քաղաքականություն և ձևավորելով կադրերի որակավորման բարձրացման համար շահագրգռող համակարգ: 2021թ. -ին ավարտվում է ՌԾ գործողության ժամկետը, սակայն այս ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել:

ՎՁՏՊՔ-ում կարևորվում է սկսնակ դասախոսների հետ կատարվող աշխատանքը: Առկա է սկսնակ դասախոսներին ներկայացվող պահանջները սահմանող փաստաթուղթ, որով առաջնորդվում են ամբիոնների վարիչները սկսնակ դասախոսների հետ տարվող աշխատանքների պլանավորման և իրականացման ժամանակ: Դասախոսների մասնագիտական առաջընթացի այլ մեխանիզմ առկա չէ:

ՎՁՏՊՔ ՊԴ կազմի ավելի քան 92%-ը հիմնական աշխատողներ են: Քոլեջում դասավանդող անձնակազմի 98%-ն ունի տվյալ առարկայի մասնագիտական կամ հարակից բարձրագույն կրթություն: Կան նաև համատեղությամբ աշխատող դասախոսներ: Դուրս կրթության իրականացման շրջանակներում դասավանդման գործընթացում ներգրավված է 2 գործատու դասախոս: Դասավանդողների մեջ կան նաև քոլեջի նախկին շրջանավարտներ: Վերջին տարիներին նկատելի են դասախոսական կազմի երիտասարդացման միտումներ:

ՎՁՏՊՔ ԻՎ-ում որպես ռիսկ ներկայացված են լավագույն կադրերի հնարավոր հոսունությունը և ուսանողների թվի նվազման պատճառով որոշ մասնագիտությունների գծով դասախոսների ծանրաբեռնվածության կրճատումը: Փորձաքննությամբ պարզվեց, որ նշվածները քոլեջի համար այնպիսի մարտահրավերներն են, որոնք կարող են վճռորոշ նշանակություն ունենալ կադրերի ռեգերվի բացակայության պարագայում: Մասնավորապես՝ քոլեջը նախկինում ունեցել է նման խնդիր, երբ մեկ մասնագետի հեռանալուց հետո, լավ կահավորված մեքենաշինական լաբորատորիա ունենալով հանդերձ, համապատասխան մասնագետ չունենալու պատճառով ստիպված են եղել փակել տվյալ մասնագիտությունը:

ՎՁՏՊՔ որոշ դասախոսներ դասավանդում են նեղ մասնագիտական մի քանի տարաբնույթ առարկաներ: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ քոլեջում եղել է դեպք, երբ դասավանդման որակի հետ կապված խնդիրներ են բացահայտել, սակայն այլընտրանքի բացակայության պատճառով չեն կարողացել ռացիոնալ լուծում տալ, ստիպված են եղել դասավանդողի մասնագիտական որակների զարգացման ուղղությամբ քայլեր ձեռնարկել, որոնք նպատակային մասնագիտական վերապատրաստումների բացակայության պատճառով, այնուամենայնիվ, ցանկալի արդյունք չեն տվել: Քոլեջում որոշ մասնագիտությունների գծով առկա չեն նաև նույն մասնագիտական առարկան դասավանդող մեկից ավելի դասախոսներ: Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ այդ դասախոսների ժամանակավոր բացակայության դեպքերում ստիպված են փոփոխություններ անել դասացուցակում:

2014թ.-ից քոլեջում շրջանառության մեջ են դրվել «Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման ընթացակարգ» և «Երիտասարդ դասախոսների հետազոտական գործունեության խրախուսման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթղթերը: Առաջինն իրենից ներկայացնում է ընդհանրական դրույթների և պահանջների նկարագրություն: Այն ենթադրում է կից գործիքակազմի ստեղծում, որի միջոցով նախատեսվում է ուսումնասիրել առաջընթացի պահանջարկը և լուծել դրանով պայմանավորված խնդիրները: Սակայն նշված չեն այն հստակ քայլերն ու գործողությունները, որոնց իրականացմամբ քոլեջը կարող է հասնել իր կողմից սահմանված նպատակին, այն է՝ ապահովել դասախոսական կազմի շարունակական մասնագիտական կատարելագործման և առաջընթացի համար բարենպաստ աշխատանքային միջավայր: Փորձաքննության ընթացքում երկրորդ փաստաթղթի կիրառման դրսևորումներ չհայտնաբերվեցին: Այն չի պարունակում ընթացակարգային դրույթներ:

ՎՁՏՊՔ-ում գործում է ուսումնաօժանդակ աշխատակազմի գործառույթները կարգավորող փաստաթուղթ, որով սահմանվում են աշխատակիցների կոմպետենցիաներն ու նրանց կողմից կատարվող աշխատանքների շրջանակը:

Ըստ ՎՁՏՊՔ ինքնավերլուծության՝ քոլեջում իրականացվող գործընթացներն ընթանում են ավելի լայնածավալ հունով, քան քոլեջի ենթակառուցվածքների թիվն ավելացնելու հնարավորությունը: Այս կարիքի բավարարման նպատակով քոլեջում ստեղծվել են տարբեր խորհրդատվական մարմիններ և աշխատանքային խմբեր (տեղեկատվության և վերլուծության աշխատանքային խումբ, քոլեջի ուսանողների և աշխատողների անվտանգ միջավայրի ապահովման հարցերով զբաղվող աշխատանքային խումբ, ՈՆԱՀ մշտադիտարկման և վերլուծության աշխատանքային խումբ, արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու աշխատանքային խումբ և այլն), որոնք գործում են որակի ապահովման հանձնախմբին կից և օժանդակում են առկա ենթակառուցվածքների աշխատանքներին կամ իրականացնում են այն ենթակառուցվածքների գործառույթներով պայմանավորված գործունեությունը, որոնք քոլեջում առկա չեն: Նույն անձինք ընդգրկված են մի քանի աշխատանքային խմբերում և իրականացնում են տարաբնույթ գործառույթներ: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ առկա է նաև հետազոտական աշխատանքների համակարգողի, ինչպես նաև ամբիոններում լաբորանտների անհրաժեշտության խնդիր:

**Դաստողություններ:** Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջի համար լուրջ մարտահրավեր է նեղ մասնագիտական մոդուլների ուսումնառության նյութի արդիականությունն ապահովելու խնդիրը: Այն հատկապես նկատելի է «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության պարագայում՝ պայմանավորված մարզում այդ ոլորտի որակյալ մասնագետների պակասով և SS ոլորտի առանձնահատկություններով: Մարզում այդ և այլ մասնագիտությունների գծով մասնագետների պակասի և սուղ ֆինանսական միջոցների պատճառով քոլեջի ղեկավարությունը զրկված է որակյալ կադրերի ընտրության հնարավորությունից: Ընտրության սահմանափակ հնարավորությունների պայմաններում առանձնապես կարևոր է կարիքների վերհանումը և քոլեջում առկա ներուժի մասնագիտական որակների շարունակական բարելավմանը միտված քաղաքականության իրագործումը:

Իրականացվող մշտադիտարկումների, ներքին և արտաքին շահակիցների շրջանում կատարված հարցումների միջոցով, այնուամենայնիվ, հնարավոր է եղել բացահայտել որոշ կարիքներ, որոնց բավարարման համար անհրաժեշտ է պարբերաբար անցկացնել դասախոսական կազմի մասնագիտական հմտությունների կատարելագործման ու թարմացման թիրախային վերապատրաստումներ: Քոլեջում մասնագիտական վերապատրաստումների հստակ պլանավորման և գործատուների հետ նաև այս առումով համագործակցության բացակայությունը վտանգում են մատուցված կրթական ծառայությունների որակն ու արդիականությունը: Արդյունքում խախտվում է «կրթություն-աշխատաշուկայի կարիքներ» կապը, ինչը կարևոր է դասախոսների մասնագիտական որակների պարբերաբար բարձրացման և աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագետների պատրաստման համար: Նեղ

մասնագիտական վերապատրաստումների հնարավորության բացակայությունը թույլ չի տալիս առկա առանց այդ էլ փոքրաթիվ կադրային բազայով ապահովել ՄԿԾ-ների արդյունավետ իրականացում, լրացուցիչ ռիսկեր է առաջացնում որոշ մասնագիտությունների շարունակականության համար և խոչընդոտում է քոլեջի զարգացմանը: Այս առումով փորձագիտական խումբը կարևորում է լրացուցիչ այլընտրանքային մեխանիզմների ներդրումը, որը հնարավորություն կտա պրակտիկ ոլորտի մասնագետներին ներգրավել դասավանդման գործընթացում: Մասնագիտական վերապատրաստումների հստակ պլանավորումը և գործատուների հետ այս առումով համագործակցության ստեղծումը կնպաստեն դասախոսների մասնագիտական որակների պարբերաբար լավացմանը, իսկ գործատուների հետ համագործակցության ընդլայնումը կնպաստի աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մասնագետների պատրաստմանը:

Միևնույն ժամանակ մտահոգիչ է այն փաստը, որ կադրային ռեզերվի բացակայության պայմաններում, դասախոսի ժամանակավոր բացակայության դեպքում, կամ դասախոսի թափուր հաստիք առաջանալիս, մինչև տվյալ դասախոսի վերադարձը կամ նոր մասնագետի ներգրավումը, խախտվում է քոլեջի աշխատանքային ռիթմը, նվազում է դասավանդման արդյունավետությունը: Բացի այդ՝ նման իրավիճակներն իրենց մեջ պարունակում են նաև չարդարացված ռիսկեր (օրինակ՝ դասացուցակի հաճախակի փոփոխություն, օրվա կտրվածքով նույն խմբում ընդամենը մեկ կամ երկու դասախոսի մուտք), ինչը կարող է վնասել ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությանը:

Մարզի կտրվածքով որոշ մասնագիտությունների գծով համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող կադրերի սակավության պայմաններում մեկ կամ երկու մասնագետի առկայությամբ պայմանավորված որևէ մասնագիտության պլանավորումն ու իրականացումը նույնպես իր մեջ լուրջ ռիսկ է պարունակում: Այս պարագայում երաշխավորված չէ տվյալ մասնագիտության շարունակականությունը, և կարող է մասնագիտության փակման պատճառ դառնալ, որի նախադեպը քոլեջում առկա է:

Քոլեջում գործատու դասախոսների թվի մեծացումը կնպաստի աշխատաշուկայի կարիքների ներառմանը ՄԿԾ-ներում և ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների զարգացմանը, ինչպես նաև քոլեջի դասախոսների հետ փորձի փոխանակմանը: Ողջունելի է այն փաստը, որ քոլեջը փորձում է իր շրջանավարտներին աշխատանքի ընդունել քոլեջում՝ դրանով նպաստելով պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացմանն ու կադրային խնդիրների լուծմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում փոխադարձ դասալսումների և մեթոդական զեկուցումների պլանավորումն ու իրականացումը, ինչը կարող է նպաստել քոլեջի դասախոսների շրջանում փորձի փոխանակմանը: Այս մշակույթի տարածումը, բոլոր դասախոսների շրջանում նպատակային դասալսումների իրականացումը, առկա մեխանիզմների կատարելագործումը, ինչպես նաև դասախոսների գնահատման համար իրականացվող հարցումների արդյունքների վերլուծությունը թույլ կտան բացահայտել դասավանդման գործընթացում առկա խնդիրները և ըստ բացահայտված կարիքների ու խնդիրների պլանավորել դասախոսների կատարելագործման աշխատանքները: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում նաև այն հանգամանքը, որ նույնիսկ դասախոսների գնահատման արդյունքում



դասավանդման որակի վեր հանված խնդիրների պարագայում քուլեջի ղեկավարությունը չունի ռացիոնալ լուծում տալու հնարավորություն, քանի որ մարդկային ռեսուրսների սակավության պատճառով կաշկանդված է այլընտրանքի բացակայությամբ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քուլեջի կողմից ներդրված ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգումը՝ կրկնաստուգման մեխանիզմի կիրառմամբ, ինչը նպաստում է գնահատման օբյեկտիվության բարձրացմանը, միաժամանակ կարող է նպաստել դասախոսների դասավանդման գործընթացի բարելավմանը: Սակայն մտահոգիչ է այն փաստը, որ դասախոսի աշխատանքի արդյունավետության գնահատման ցուցիչ համարելով քննությունների ընթացքում ուսանողների ցուցաբերած առաջադիմության արդյունքների քանակական վերլուծությունը, այնուամենայնիվ, կրկնաստուգման կամ քննությունների վերահսկման այլ մեխանիզմներ չի կիրառվում, ինչը կարող է հանգեցնել ոչ օբյեկտիվ կերպով բարձր գնահատականների նշանակման:

Դրական է նաև, որ ՎՁՏՊՔ-ն ունի քուլեջի ապագայով մտահոգ պատասխանատու աշխատակիցների կազմ, որոնք ընդհանուր առմամբ ձգտում են իրականացնել քուլեջի ռազմավարական նպատակները և հաղթահարել քուլեջի առջև ծառայած խնդիրները:

Միաժամանակ փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն փաստը, որ քուլեջի ոչ բոլոր ռազմավարական ուղղություններով նախանշված նպատակների համար են առկա համապատասխան ենթակառուցվածքներ կամ պատասխանատուներ: Կոնկրետ պատասխանատվության բացակայությունը կարող է խոչընդոտել ՌԾ նպատակների արդյունավետ իրականացմանը: Փորձագիտական խումբը, գնահատելով որոշ աշխատանքային խմբերի արձանագրած դրական արդյունքները, այնուամենայնիվ, գտնում է, որ հասարակական հիմունքներով աշխատանքների իրականացման ձևաչափը, հատկապես, երբ մարդկային ռեսուրսների սղության պատճառով նույն անձինք ընդգրկված են տարաբնույթ աշխատանքային խմբերում, արդյունավետության առումով խոցելի է, քանի որ այդ աշխատանքների իրականացման համար նրանցից լրացուցիչ կոմպետենցիաներ ու ջանքեր է պահանջվում, ինչը խոչընդոտում է ՌԾ-ով նախանշված որոշ ուղղություններում նպատակների արդյունավետ իրականացմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ ՎՁՏՊՔ-ում դեռևս չեն գործում դասախոսների նյութական խրախուսման իրենց կողմից ներդրված մեխանիզմները, խնդրի լուծման համար ստեղծված չեն այլընտրանքային լրացուցիչ մեխանիզմներ, աշխատակիցների մասնագիտական վերապատրաստումները կրում են իրավիճակային բնույթ, չի իրականացվում ՊԴ կազմի մասնագիտական որակների բարձրացման հստակ պլանավորում, արդյունավետ չեն գործում պրակտիկ ոլորտի մասնագետներին դասավանդման գործընթացում ներգրավելու մեխանիզմները, ստեղծված չէ քուլեջի կարիքներին համապատասխան կադրերի ռեզերվ, ՌԾ նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ոչ բոլոր ենթակառուցվածքներն են քուլեջում առկա, ներդրված չեն ՊԴ կազմի կայունության ապահովման բավարար մեխանիզմներ և կադրային խնդիրների լուծման հրատապ քայլեր չիրականացնելու դեպքում կարող է վտանգվել որոշ մասնագիտությունների շարունակականությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՁՏՊՔ-ն չի բավարարում չափանիշ 5-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

## VI. ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

**ԶԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

### Փաստեր

ՄՈՒՀ-ն իր 2016-2021թթ. Ռազմավարական ծրագրով որպես նպատակ սահմանել է հետազոտությունների իրականացումը տարածաշրջանում և գործատուների հետ համագործակցության ապահովումը: ՄՈՒՀ-ն ունի «Հետազոտության ոլորտի ռազմավարություն 2016-2021թթ.», «Հետազոտական աշխատանքների վավերացման մեխանիզմներ» փաստաթղթերը, որտեղ սահմանվել են քոլեջի հետազոտական նպատակը, խնդիրները, գործողությունները: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ քոլեջը հստակ չի սահմանել, թե ինչ նկատի ունի հետազոտություն ասելով, առանձնացված և հստակ սահմանված չեն հետազոտական նպատակին հասնելու հաջորդական քայլերը: «Հետազոտության ոլորտի ռազմավարություն 2016-2021թթ.» փաստաթուղթը տրված է հինգ տարվա կտրվածքով, սակայն գործողությունները նկարագրողական բնույթ ունեն և ժամանակացույցը տարանջատված չէ՝ ըստ առանձին տարիների: Բացակայում են տվյալ փաստաթղթի ստուգման և գնահատման մեխանիզմները:

Դասախոսական կազմի հետազոտական և գիտամեթոդական գործունեության (նկատի է առնվում գլխավորապես դասախոսների կողմից սեփական դասավանդման փորձի հիման վրա դասավանդման մեթոդիկաների ոլորտում գիտամեթոդական հոդվածների, ուսումնամեթոդական աշխատանքների, ձեռնարկների և այլնի տպագրումը) իրականացման քաղաքականություն, ընթացակարգեր չկան, միաժամանակ առկա չեն դասախոսներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու համար խրախուսման մեխանիզմներ: ՎՁՏՊՔ-ում չկան մեխանիզմներ, որ կապահովեին դասախոսի առաջընթացը հետազոտական արդյունքների հիման վրա:

Ինքնավերլուծությունում նշվում է, որ ՎՁՏՊՔ-ի կանոնադրության և ռազմավարական նպատակների համաձայն՝ մշակվում և իրականացվում են ստեղծագործական, հետազոտական, փորձարարական աշխատանքներ՝ (դիպլոմային աշխատանքներ, ռեֆերատներ, նախագծային աշխատանքներ, ստենդներ, պաստառներ, մակետներ, բուկլետներ և այլն) գրեթե բոլոր մասնագիտությունների շրջանակներում: Սակայն փորձագիտական այցից պարզվեց, որ ավարտական հետազոտական դիպլոմային աշխատանքներ գրվում են ոչ բոլոր մասնագիտություններից, որոշ մասնագիտություններ ավարտվում են քննական ատեստավորմամբ, որտեղ բացակայում է վերլուծական բաղադրիչը: Պրակտիկայի հաշվետվությունները հիմնականում չեն պարունակում վերլուծական տարր: Հաշվետվությունները և պրակտիկայի օրագրերը կանոնակարգված և հստակ ձևաչափ չունեն՝

ըստ հետազոտական, վերլուծական բաղադրիչի պահանջի<sup>6</sup>: ՄՈՒՀ-ը չունի պրակտիկայի ծրագիր՝ ուղղված հետազոտական, վերլուծական բաղադրիչի հստակ պահանջներին<sup>7</sup>: Փորձագիտական խմբի կողմից դիպլոմային աշխատանքների ուսումնասիրումը ցույց տվեց, որ դրանք գլխավորապես զերծ են հետազոտական և ստեղծագործական բաղադրիչից: Որոշակի փորձարարական և հետազոտական միջոցառումներ իրականացվում է «Զբոսաշրջություն» մասնագիտության շրջանակներում ավարտական զբոսաշրջության փաթեթների կազմման և պրակտիկայի ընթացքում ուսանողների ինքնուրույն աշխատանքների միջոցով:

Ըստ ինքնավերլուծության և քուլեջում առկա փաստաթղթերի՝ քուլեջում որպես հետազոտական գործունեություն դիտարկվում են ըստ նախօրոք սահմանված գրաֆիկի, կատարվող փոխադարձ դասալսումները, (դասալսումների գրաֆիկ և դասի վերլուծություն), մեթոդական զեկուցումները (զեկուցումների գրաֆիկ և գնահատման թերթիկ), որոնց միջոցով բացահայտվում են նորագույն մեթոդները, թերությունները և շտկվում դրանք: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քուլեջի կողմից սեմինարներ են կազմակերպվում, եղած լավագույն փորձը տարածվում է դասախոսների և ուսանողների շրջանում:

Սակայն ամբիոններում բացակայում էին հետազոտական նախագծերը, որտեղ կարող էին ընդգրկվել քուլեջի դասախոսները: Դասախոսները չեն զբաղվում հետազոտություններով, չունեն տպագրված հոդվածներ և մեթոդական աշխատանքներ:

Քուլեջը չի համագործակցում գործատուների հետ վերջիններիս ռեսուրսների հետազոտական նպատակներով օգտագործման տեսանկյունից, սակայն ՄԿԾ-ների փոփոխության և ներդրման հետ կապված գործատուների շրջանում ոլորտային ուսումնասիրություններ /հարցումներ/ են արված:

Քուլեջի կողմից ուսումնասիրված չէ ՀՀ մյուս քուլեջների և միջազգային միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող գործունեությունը՝ միտված ուսանողների մոտ ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Միաժամանակ առկա չէ դասախոսների կողմից իրենց դասավանդած մոդուլների ազգային և միջազգային փորձի ուսումնասիրման ձևավորված մոտեցում և այդ գործունեությունը խրախուսող և խթանող մեխանիզմներ:

Ինքնավերլուծությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում որակի ներքին ապահովման հանձնախմբի կողմից ուսանողների, դասախոսական կազմի և գործատուների շրջանում անցկացվում են հարցումներ, որոնք միտում ունեն հետազոտելու նրանց բավարարվածության աստիճանը հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցումից:

Հետազոտական աշխատանքների արդյունավետ իրականացման համար քուլեջում առկա են մի շարք ռեսուրսներ, բայց հետազոտական աշխատանքներ կազմակերպելու նպատակով նախահաշիվներում որպես առանձին բաժին նախատեսված չէ, քանի որ քուլեջի բյուջեն բավականին սուղ է և բավարարում է ամենաանհրաժեշտ ոլորտներին հատկացվելիք ծախսերին:

<sup>6</sup> Նախադասությունը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

<sup>7</sup> Նախադասությունը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

ՄՈԻՀ-ն ունի երիտասարդ դասախոսների գործունեության խրախուսման քաղաքականություն և ընթացակարգեր:

Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական խմբի ուսումնասիրության ՎՁՏՊՔ-ն դեռևս չունի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականություն և միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգեր:

Քոլեջում գործում է հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելու մեխանիզմներից քոլեջի կողմից իրականացվող պրակտիկաները: Հարկ է նշել, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողների կողմից մշակվել են զբոսաշրջային փաթեթներ, որոնց մի մասը նաև փորձարկվել է ուսումնառության գործընթացում: ՎՁՏՊՔ-ում իրականացվել է «Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում» ուսումնական փորձարարական ծրագիրը, որը որպես առանձին մոդուլ ներդրվել բոլոր մասնագիտությունների գծով: «Գինեգործություն և հյուրերի արտադրություն» մասնագիտության շրջանակներում մշակվել և բարեհաջող իրականացվել է նաև դուրյալ կարճաժամկետ ծրագիրը, որը հնարավորություն է տալիս ուսանողներին իրենց ստացած գիտելիքները օգտագործել աշխատանքում: Տպագրվել է «Տակառագործություն» ուսումնասովանողական ձեռնարկը, որը հետազոտական աշխատանքի արդյունք է, որտեղ նաև կատարված հետազոտություններին իրենց մասնակցությունն են ցուցաբերել քոլեջի 10 ուսանող, սակայն ձեռնարկում մասնակից ուսանողները ներկայացված չեն որպես համահեղինակներ:

**Դասողություններ:** Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը կարևորում է հետազոտական աշխատանքների իրականացումը, ինչը ամրագրել է ՌԾ-ով: Սակայն հետազոտությունների հստակ պլանավորման բացակայությունը խոչընդոտում է գործընթացների համակարգված իրագործմանն ու նպատակների իրագործելիությանը:

ՄՈԻՀ-ի «Հետազոտության ոլորտի 2016-2021թթ. ռազմավարությունը» մոտենում է իր ժամանակացույցային ավատին, սակայն քոլեջը հետազոտական նոր ռազմավարություն դեռևս չունի, չի գնահատել իրականացված գործընթացների արդյունավետությունը, ինչը կարող է խոչընդոտել գործընթացների հետագա պլանավորմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է դասախոսների հետազոտական, գիտամեթոդական ուսումնասիրությունների իրականացումը, այդ թվում իրենց կողմից դասավանդվող մոդուլների շրջանակում դասավանդվող բովանդականության, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ազգային և միջազգային փորձի ուսումնասիրումը և մտահոգիչ է համարում այս ուղղությամբ հետազոտական արդյունքների բացակայությունը, առավել՝ ևս դրանք խթանող և խրախուսող մեխանիզմների բացակայությունը, ինչը կարող է խոչընդոտել դասավանդման գործընթացի կատարելագործմանը, ուսանողների վերլուծական կարողությունների ձևավորման ապահովմանը և դասախոսների ինքնակատարելագործման մոտիվացվածությանը: Այս ամենով հանդերձ փորձագիտական խմբի կողմից գնահատելի է քոլեջում լավ փորձի վեր հանման և տարածման ձևավորված մշակույթը, սա դասախոսների համար մոտիվացիայի աղբյուր է նաև, միաժամանակ համարում ենք, որ դրանց արդյունքները կարող են նաև վերածվել արտոնված հետազոտական արդյունքների: Փորձագիտական խումբը

նան դրական է համարում դասախոսների կողմից ուսումնառության ձեռնարկի («Տակառագործություն») մշակման փորձը, ինչը կարող է շարունակականության մեկնարկ լինել:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ չնայած ռեսուրսային բազա (լաբորատորիա, արհեստանոց, ջերմոց և այլն) ունենալուն՝ քոլեջի ուսանողներն ու դասախոսական անձնակազմն ունեն բյուջետային լուրջ սահմանափակումներ հետազոտական հումք և նյութ ձեռք բերելու համար, որը ուղղակի կերպով խոչընդոտում է հետազոտական աշխատանքների պլանավորմանն ու իրականացմանը:

Որպես դասախոսների և ուսանողների կողմից հետազոտությունների իրականացման կարևոր հնարավորություն փորձագիտական խումբը դիտում է գործատուների ռեսուրսային բազան և համապատասխան համագործակցության ձևավորումը, ինչը դեռևս չի դիտարկվել քոլեջի կողմից: Մինչդեռ սա կարող է նպաստել հետազոտական գործունեության զարգացմանը և հետազոտական նախագծերի ձևավորմանը:

Քոլեջում առկա երիտասարդ դասախոսների գործունեության խրախուսման քաղաքականության և ընթացակարգերի համաձայն երիտասարդ դասախոսները մոտիվացվում են ոչ նյութական միջոցներով՝ պատվոգիր, հոդվածի տպագրություն, սակայն բացակայում են ֆինանսական շահադրժման ընթացակարգերը և գործիքները: Այս հանգամանքը բավարար պայման չի դարձել, որ երիտասարդ մասնագետները զբաղվեն հետազոտական գործունեությամբ:

ՎՁՏԲ-ի կողմից միջազգային փորձի ուսումնասիրությունների բացակայությունը խոչընդոտում է քոլեջում միջազգային փորձի միջոցով նորարարության տարածմանը:

Ուսանողների համար հետազոտական, վերլուծական աշխատանք կատարելու հնարավորությունը տարբեր մասնագիտությունների պարագայում տարբեր կերպ է դրսևորվում՝ դիպլոմային աշխատանք, պրակտիկա, ինքնուրույն աշխատանք, զբոսաշրջային փաթեթներ: Սակայն դրանց նկատմամբ ներկայացվող հստակ պահանջների (այդ թվում՝ վերլուծական բաղադրիչի նկատմամբ պահանջի) բացակայությունը չի երաշխավորում ուսանողների վերլուծական կարողությունների ձևավորումը և զարգացումը, ինչպես նաև հետազոտական վերլուծական արդյունքների ապահովումը: Սա է փաստում այն հանգամանքը, որ վերոնշյալ աշխատանքները հաճախ զերծ են վերլուծական բաղադրիչից: Միաժամանակ փորձագիտական խումբը կարևորում և գնահատում է առաձին ղեպքերում լավ փորձի առկայությունը (զբոսաշրջային փաթեթներ, դիպլոմային աշխատանքների, պրակտիկայի արդյունք), ինչը կարող է հիմք հանդիսանալ ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորման համար, որոնց ներդրումը կերաշխավորի ուսանողների մոտ վերլուծական կարողությունների ձևավորումը, ինչպես նաև կնպաստի նրանց՝ հետազոտական, վերլուծական աշխատանքներում ներգրավմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ քոլեջում հստակեցված չեն հետազոտական ուղղությունները, հետազոտության երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորում առկա չէ, թույլ են ուսումնառության և հետազոտական աշխատանքների փոխկապակցման մեխանիզմները, միջազգային փորձի ուսումնասիրման և հետազոտական գործունեության իրականացման խրախուսման և իրականացման մեխանիզմներ ներդրված չեն և առկա չեն հետազոտական նկատելի արդյունքներ՝ փորձագիտական խումբը եզրակացնում է, որ ՎՁՏՊԲ-ն չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՁՏԲ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

## VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

### Փաստեր

Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական այցի արդյունքների՝ քոլեջը, հետամուտ լինելով ռազմավարական պլանի խնդիրներին ու նպատակներին, կրթական ծրագրերի իրականացման և վերջնարդյունքների ձևավորման համար ստեղծում է որակյալ ենթակառուցվածքներ, բարելավում դրանք և հարստացնում նյութատեխնիկական բազան: Քոլեջը իր ռազմավարությամբ իրականացնում է ռեսուրսների արդիականացման քաղաքականություն, կարևորում է ենթակառուցվածքի արդյունավետ և նպատակային օգտագործումը:

ՄՈՒՀ-ը իր 2016-2021թթ. ՌԾ-ում որպես քոլեջի զարգացման գերական ուղղություն առանձնացրել է ուսումնառության համար նպաստավոր ենթակառուցվածքների ապահովումը:

Քոլեջն ունի ուսումնական հաստատության շենք՝ 950մ<sup>2</sup> և լաբորատոր մասնաշենք՝ 523,3մ<sup>2</sup> տարածքով՝ տեղակայված Եղեգնաձոր քաղաքում: Ուսուցման գործընթացը կազմակերպվում է երկու մասնաշենքում, որտեղ կան 12 լսարան, 3 համակարգչային կենտրոն, 2 մասնագիտական կաբինետ, 2 արհեստանոց և 5 լաբորատորիա, միջոցառումների և քննարկումների դահլիճ, գրադարան, փորձարարական լսարան, ակվապոնիկ ջերմոց: Ընդգրկված լինելով Եվրոպական միության բյուջետային աջակցության ծրագրում՝ 2007-2011 թթ. ընթացքում հիմնանորոգվել են ուսումնական հաստատության շենքը և լաբորատոր մասնաշենքը: Փոխվել են բոլոր պատուհանները, դռները, հատակը, սանհանգույցները, տեղադրվել է ջեռուցման լոկալ համակարգը, կատարվել է պատերի և առաստաղի ներկում, տանիքի հիմնանորոգում: Քոլեջի գույքը ամբողջությամբ փոխարինվել է նորով, ստացել է լաբորատորիաներ և արհեստանոցներ՝ նորագույն սարքավորումներով հագեցած: Շենքերը վերանորոգված, կահավորված և տեխնիկապես հագեցված են, որոնք առավել բարենպաստ պայմաններ են ստեղծում ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

2009թ. և 2011թ. հիմնվել է ինտերակտիվ ուսուցման 2 լսարան՝ անհրաժեշտ էլեկտրոնային սարքավորումներով /smart-գրատախտակ, պրոյեկտոր, համակարգիչներ/, որտեղ կազմակերպվում են դասեր, դասախոսություններ, հանդիպումներ, սեմինարներ, միջոցառումներ:

Քոլեջում կա 3 համակարգչային լսարան՝ ապահովված ժամանակակից տեխնիկայով և ինտերնետ կապով, որոնք օգտագործվում են ուսումնառության ընթացքում ուսանողներին գիտելիքների հաղորդման և տեղեկատվական համակարգչային ռեսուրսների կիրառման հմտությունների ձևավորման նպատակով:

2007թ.-ին «Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ»-ի ֆինանսական օժանդակությամբ հիմնվել և հետագայում (2009 և 2020թթ.) վերազինվել է «Խոհարարական գործ»

մասնագիտության համար նախատեսված արդի պահանջներին համապատասխանող մասնագիտական կաբինետը՝ ուսումնական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով:

2010թ.-ին Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ վերազինվել և համալրվել է «Փայտագործություն» մասնագիտության համար նախատեսված փայտամշակման արհեստանոցը, այն 2012 թվականին համալրվել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից:

Նույն ծրագրի ֆինանսական աջակցությամբ համալրվել են ևս 2 լաբորատորիաներ՝ քիմիայի և գինեգործության:

Վերոնշյալ ծրագրի ֆինանսական աջակցությամբ 2010թ-ին հիմնվել է տրանսպորտային տեխնիկական միջոցների ուսուցման լաբորատորիան, որտեղ առկա ժամանակակից սարքավորումները հնարավորություն են տալիս դասընթացների գործնական պարապմունքները անցկացնելու համար:

2009 թվականին Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ հիմնվել է գինեգործության և գարեջրի լաբորատորիան: 2017թ. քոլեջի հովանավոր «Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ»-ի ֆինանսական աջակցությամբ քոլեջում հիմնվել է գինեգործություն և հյութերի արտադրություն մասնագիտության կաբինետը և 2021թ-ին GIZ-ի աջակցությամբ համալրվել է գինեգործական սարքավորումներով: Փոքրածավալ գինու արտադրամասում գինեգործություն մասնագիտության համար նախատեսված անհրաժեշտ բոլոր սարքավորումները և պայմանները հնարավորություն են տալիս մասնագիտական դասերը և գինու պատրաստման ողջ գործընթացը կազմակերպելու համար: Ուսանողների ուժերով (Գերմանիայի Դաշնության ներկայացուցիչ-մասնագետի օժանդակությամբ) գինու փոքրածավալ արտադրության հիմքը դրվեց, որին անդրադարձել է նաև ՀՀ կառավարության լրատվական բաժինը՝ «Հրապարակում» հաղորդման շրջանակներում և ներկայացրել է քոլեջում ներդրված դուրս փորձարարական ծրագրի հաջողությունները: 2017թ. «Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ»-ի օժանդակությամբ Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջում գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիան, որտեղ օգտագործվում են ժամանակակից ծրագրեր և սարքավորումներ՝ եռաչափ տպիչ, CNC փորագրող հաստոց, համակարգիչներ և այլ սարքեր:

Դրամաշնորհային ծրագրերի ֆինանսական աջակցությամբ քոլեջում ստեղծվել են կրթական ծրագրերին և մասնագիտությունների արդի պահանջներին համապատասխանող լաբորատորիաներ՝ քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության:

Քոլեջում իրականացվող կարճաժամկետ դասընթացները ապահովում են լրացուցիչ եկամուտներ /2020թ. ծառայությունների մատուցումից հաշվետու ժամանակաշրջանի փաստացի ցուցանիշ 5774.8 հազար դրամ/: Կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու համար 2007թ.-ին «Անուշավան Աբրահամյան կրթական հիմնադրամ»-ի ֆինանսական աջակցությամբ ստեղծվել է կարի արհեստանոց, որը 2012թ-ին համալրվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Վերջինիս ֆինանսական աջակցությամբ 2009թ. ստեղծվել է նաև մարզասրահ՝ ժամանակակից մարզագույքով:

Քոլեջում հիմնված ձեռներեցության լսարանը 2020թ.-ին վերակազմավորվել է փորձարարական լսարանի՝ աշխատանքի վրա կրթություն իրականացնելու նպատակով ԱՀՈԻ ծրագրի շրջանակներում:

Յուրաքանչյուր տարի քոլեջի բյուջեից որոշակի գումար է հատկացվում շենքերի պահպանման ծախսերը հոգալու համար և նյութատեխնիկական հագեցվածությունը բարելավելու նպատակով:

Ըստ քոլեջի կողմից ներկայացված 2016-2029թթ. ծախսերի կատարողականի՝ «Այլ ծախսեր» հոդվածով ավելացել են 4845.0-5232.4 հազար դրամ, իսկ 2020թ.՝ կտրուկ կրճատվել 37.6 տոկոս՝ կազմելով 3263.0 հազար դրամ:

Ըստ ինքնավերլուծության՝ ՎՁՊՏՔ-ի ռեսուրսների բաշխումը կանոնակարգվում է կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրերով, «Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ ՊՈԱԿ-ի ռեսուրսների ժամանակին բաշխելու մեխանիզմներ և ընթացակարգեր» փաստաթղթով, որը ներառում է պլանավորման, իրականացման և արդյունավետության գնահատման գործընթացները: Քոլեջի ծախսերը պլանավորվում են՝ հիմք ընդունելով ֆինանսական կարողությունները: Համապատասխան միջոցներով և սարքավորումներով ապահովման կամ թարմացման անհրաժեշտությունը հիմնականում որոշվում է ստորաբաժանումների կողմից ներկայացվող պահանջագրերով:

Քոլեջում կրթական գործընթացի իրականացման համար նախատեսված նյութական, աշխատանքային և այլ անհրաժեշտ ռեսուրսների պլանավորումը, ձեռքբերումը, համալրումը և կատարելագործումը իրականացվում է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի: Ռեսուրսների ժամանակային բաշխումը նախատեսվում է իրականացվում է տարեկան կտրվածքով: ՎՁՊՏՔ-ի բյուջեն ձևավորվում է բյուջետային և արտաբյուջետային դրամական հոսքերից, քանի որ հանդիսանում է պետական ոչ առևտրային կազմակերպություն: ՎՁՊՏՔ-ի բյուջեն կազմված է եկամուտների և ծախսերի հոդվածներից:

Ըստ ինքնավերլուծության և փորձագիտական խմբի կողմից փաստաթղթերի ուսումնասիրության ծախսերի դինամիկական տարիների կտրվածքով նույնպես ունի աճման միտում՝ եկամուտներին համապատասխան: Մեկ ուսանողի հաշվով ընթացիկ տարվա ծախսերը նույնպես տարեցտարի աճել են, 2016թ-ի համեմատ 2020թ-ի մեկ ուսանողի հաշվով ծախսը աճել է 25 տոկոսով: 2020թ. մեկ ուսանողի հաշվով կատարվող ծախսի մեծ մասը բաժին է ընկնում ուսումնական ոլորտին 58%՝ դասախոսների վարձատրությանն ուղղվող միջոցներին: Մեծ տեսակարար կշիռ ունեն ուսումնաօժանդակ ծախսերը՝ 28%, որում ներառված են վերանորոգման, ջեռուցման և սպասարկման այլ ծախսերը:

ՎՁՊՏՔ-ում տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարումն իրականացվում է՝ համաձայն «ՎՁՊՏՔ ՊՈԱԿ-ի տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգ և մեխանիզմներ» փաստաթղթի: Տվյալ փաստաթղթով կանոնակարգվում են փաստաթղթերի հետ տարվող աշխատանքի կազմակերպումը՝ ստացումը, գրանցումը, հաշվառումը, մշակումը, փոխանցումը, վերահսկումը, պահպանումը, համակարգումը, փաստաթղթերի նախապատրաստումը արխիվ հանձնելուն, ոչնչացումը: Քոլեջում գործում է Mulberry արտաքին փաստաթղթաշրջանառության համակարգը,



որը դեռևս 2014-2015թթ. ներդրվել և կիրառվել նաև ներքին փաստաթղթաշրջանառության նպատակով:

Քուլեջում առկա է արխիվ, որը պատասխանատու է փաստաթղթերի առանձին տեսակների արխիվացման համար: Յուրաքանչյուր գործ ունի իր պահման ժամկետը, որը ավարտվելուց հետո գործը հանձնվում է արխիվ:

ՎՁՏԲ-ի գործընթացների թափանցիկությունը, տեղեկատվության տարածումը և շահակիցների իրազեկությունը ապահովվում է քուլեջի պաշտոնական կայքի միջոցով:

Քուլեջում առկա են նյութական ռեսուրսներ, որոնք գտնվում են ժամանակավոր պարապուրդի մեջ: Ներկայումս կիրառելի չեն ակվապոնիկ ջերմատունը, կարի արհեստանոցը, որոշ լաբորատորիաներ: Ակվապոնիկ ջերմատունը չի օգտագործվում, քանի որ քուլեջը դեռևս չունի համապատասխան լիցենզիա տվյալ մասնագիտությունը բացելու համար, ջերմատունը նոր է հիմնվել: Կարի արհեստանոցը նախատեսված է եղել կարճաժամկետ ծրագրերի իրականացման համար, քուլեջը իրականացրել է դրանք, ավարտել, սակայն մոտ հեռանկարում դեռևս նման ծրագրեր պլանավորված չեն: Մեքենաների սպասարկման, վերազինման և վերանորոգման լաբորատորիան չի օգտագործվում տվյալ մասնագիտությամբ ուսանողների շրջանակում քիչ պահանջարկով պայմանավորված, քանի որ ինչպես պարզվեց փորձագիտական այցի ընթացքում, երիտասարդները ավելի նպատակահարմար են գտնում մի քանի ամիսների ընթացքում ստանալ այդ ոլորտի գիտելիքներն ու հմտությունները մասնավոր գործատուների մոտ:

Քուլեջի ստորաբաժանումների ուսումնասիրությունից պարզվեց, որ քուլեջը չունի բուժկետ, սպորտային դահլիճ, ճաշարան:

2015թ. ՎՁՏՊԲ-ում գործում է քաղաքացիական պաշտպանության շտաբ, որն իրականացնում է ուսանողների և աշխատակիցների անվտանգ միջավայրի ապահովում, պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում: Այս աշխատանքային խումբը ձևավորվում է տնօրենի կողմից, տարեկան աշխատանքների պլաններին կից ներկայացնում է հաշվետվություն: 2020-2021թթ. այս խմբի աշխատանքային խմբի աշխատանքային ծրագրում ներառված է նաև վարակիչ հիվանդությունների թեմայով զրույց, որը գերարդիական է այսօր: Քուլեջում կազմակերպվում են քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ, մշակվում, հաստատվում և գործողության մեջ է դրվում ՔՊ-ի պլանը, որի հիման վրա իրականացվում են ընթացիկ աշխատանքները:

Քուլեջի լաբորատորիաներում պահպանված էին անվտանգության պայմանները: Քուլեջում՝ բոլոր հարկերում, տեղադրված են տեսախցիկներ: Քուլեջի առաջին հարկը հարմարեցված է հատուկ կարիք ունեցող շահակիցների համար: Մուտքն ունի թեքահարթակ՝ հարմարեցված կրթության հատուկ կարիք ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ ապահովող պայմաններին:

Փորձագիտական խումբը պարզեց, որ ուսանողները պրակտիկայի ընթացքում կարողանում են որոշակիորեն օգտագործել գործատուների ռեսուրսային ներուժը՝ հաշվապահական համակարգչային ծրագրերը, սարքավորումների արտադրական հզորությունը, կազմակերպության արտադրական տարածքը:

Քուլեջն ունի արդեն ձևավորված պայմանագրային հարաբերություններ տարածաշրջանի մի շարք մասնավոր և պետական կառույցների հետ, ինչպիսիք են՝ Եղեգնաձորի

քաղաքային մարզադպրոցը, Վայոց Ձորի մարզային գրադարանը, Եղեգնաձորի բժշկական կենտրոնը: Իր որոշակի մասնագիտական ռեսուրսային բացը փորձում է լուծել գործընկեր կազմակերպությունների ռեսուրսային բազայի օգտագործման միջոցով:

Քոլեջում ներքին շահակիցներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներն են դասավանդողների և ուսանողների շրջանում ռեսուրսների բավարարվածության վերաբերյալ անցկացվող հարցումները, վերլուծությունների և քննարկումների կազմակերպմամբ կարիքների բացահայտումը: Հարցումները անանուն են: Քոլեջում որակի ներքին ապահովման հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր տարի անց են կացվում հարցումներ ուսանողների և դասավանդողների շրջանում ուսումնական տարածքների, ռեսուրսների և օժանդակ ծառայությունների բավարարվածության գնահատման նպատակով պատահական ընտրության մեթոդով, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու առկա կարիքները (այս տարվա անցկացված հարցումների համաձայն՝ հարցման մասնակիցների 9 տոկոսը գնահատել է բավարար, 25 տոկոսը՝ լավ, 66 տոկոսը՝ գերազանց):

**Դասողություններ:** Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ը իր 2016-2021թթ. ՌԾ-ում որպես քոլեջի զարգացման գերակա ուղղություն առանձնացրել է ուսումնառության համար նպաստավոր ենթակառուցվածքների ապահովումը: Փորձագիտական այցից, ինքնավերլուծությունից և նյութատեխնիկական բազայի դիտարկումից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր: Ինտերակտիվ ուսուցման լսարանի առկայությունը ևս նպաստում է դասապրոցեսի ավելի արդյունավետ կազմակերպմանը և ուսումնական գործընթացի բարելավմանը: Այդուհանդերձ, ունենալով չկիրառվող մեծ նյութատեխնիկական բազա՝ նպատակահարմար կլինի իրականացնել կարճաժամկետ ծրագրեր, դրանք օգտագործելով և քոլեջի լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելով: Քոլեջն անհրաժեշտություն ունի նաև էլեկտրոնային և տպագիր մասնագիտական գրականության համալրման ուղղությամբ աշխատանքներ իրականացնելու:

Ուսումնասիրելով ՎՁՏԲ-ի 2018-2020թթ. բյուջեի ծախսային հոդվածները՝ պարզ դարձավ, որ յուրաքանչյուր տարի քոլեջը ֆինանսական միջոցներ (կազմելով 2018-2020թթ. գործառնական ծախսերի համապատասխանաբար 7.6, 6.7, 3.9%) է հատկացնում նյութատեխնիկական բազայի վերանորոգման և վերազինման նպատակով, որն երաշխիքներ է ստեղծում բարենպաստ ուսումնական միջավայր ստեղծելու համար: Սակայն տարեցտարի այդ ֆոնդի կրճատումը կլիտչընդոտի նյութատեխնիկական բազայի արդիականացումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ չնայած այն փաստին, որ քոլեջը չունի բուժկետ, ճաշարան, սպորտային դահլիճ, որոշակի միջոցառումներ են ձեռնարկված այդ բացը լրացնելու նպատակով, քանի որ ՎՁՏՊԲ-ն համագործակցում է տարածքային գրադարանի, սպորտ-դպրոցի, պոլիկլինիկայի հետ: Ուսանողներն ու դասախոսները հնարավորություն ունեն օգտվելու այս ենթակառուցվածքներից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկել հատուկ կարիքներ ունեցող ունեցող ուսանողների համար առաջին մասնաշենքի առաջին հարկում

թեքահարթակ ստեղծելով, սակայն, այդուհանդերձ, շենքում ազատ տեղաշարժման խնդիր դեռևս առկա է:

Անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով քուլեջում ներդրվել է մուտքի և ներքին տեսահսկման համակարգ, որի առկայությունը ապահովում է հսկողությունը և կարգապահությունը քուլեջում:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ գործատուների հետ պայմանագրային հարաբերությունների հիման վրա քուլեջը կարողանում է մասամբ օգտագործել գործատուների ռեսուրսային ներուժը, որը հնարավորություն է տալիս լրացնել քուլեջի ռեսուրսային բազայի բացերը, բարձրացնում է պրակտիկայի արդյունավետությունը, սակայն անհրաժեշտություն կա նաև պրակտիկաների վերահսկման մեխանիզմների կիրառման՝ գնահատման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Փորձագիտական խումբն արձանագրում է, որ ՎՁՏԲ-ն ունի ռեսուրսների բաշխման մեխանիզմ, որի հիմքում ընկած է տարեկան բյուջեի նախահաշվի կազմումն ու բյուջեի կատարման վերահսկողությունը: Այդուհանդերձ, բյուջեի ծախսերում առանձնացված չեն քուլեջի ռազմավարական նպատակների իրականացման համար նախատեսված առանձին հոդվածները, ինչը հնարավորություն կտար ռեսուրսների պլանավորման, վերահսկման և արդյունավետության գնահատման համար:

Քուլեջն ապահովում է ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվության տրամադրման և տարածման թափանցիկության օրենքով սահմանված ընթացակարգը, դրա մասին է վկայում շահակիցների բավարարվածության բարձր աստիճանը ստացված տեղեկատվությունից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քուլեջում ներդրված են ռեսուրսներից բավարարվածության որոշ մեխանիզմներ, սակայն դրանք ևս բարելավման կարիք ունեն՝ հնարավորություն տալով ներգրավելու շահակիցների առավել լայն շրջանակ: Հարցումների արդյունքների վերլուծությունը թույլ կտա վեր հանելու առկա խնդիրները և հստակեցնելու ռեսուրսների պլանավորման հետագա գործընթացները:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ ՎՁՏՊԲ-ն քայլեր է իրականացնում ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ միջավայր ձևավորելու ուղղությամբ, պայմաններ է ստեղծում անվտանգ միջավայր ապահովելու համար, կանոնակարգել է փաստաթղթավորման գործընթացները, ներդրել է ռեսուրսներից բավարարվածության մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՁՏՊԲ-ն բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՁՏԲ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համախառնախանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

## VIII. ՀԱՍԱՐԳԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:**

### Փաստեր

ՎՋՏՊՔ-ը 2016-2021թթ. ՌԾ-ում որպես քուլեջի զարգացման գերակա ուղղություն սահմանված «Որակի մշակույթի տարածմանը նպաստող միջավայրի ձևավորում» նպատակի իրականացման համար առանձնացրել է խնդիրներ, այդ թվում նպաստել քուլեջի հասարակական պատասխանատվությունն իրականացնող մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը: ՄՈՒՀ-ը վերը նշված ռազմավարական նպատակին հասնելու համար պլանավորել է բարձրացնել քուլեջի գործունեության թափանցիկությունը՝ ներդնելով ՄՈՒՀ-ի կողմից շնորհվող որակավորումների, հետազոտական աշխատանքների և մշակույթի, մատուցվող ծառայությունների վերաբերյալ հաշվետվողականության մեխանիզմներ:

ՎՋՏՊՔ հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Կրթության մասին», «ՀՀ նախնական և միջին մասնագիտական կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին օրենքներով, ՀՀ Կառավարության որոշումներով, ինչպես նաև ՎՋՏՊՔ կանոնադրությամբ:

ՎՋՏՊՔ-ն տարվա ընթացքում, օրենքով սահմանված կարգով, հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, Պետեկամուտների կոմիտեին, Ազգային վիճակագրական կոմիտեին և այլ պետական գերատեսչությունների: Հաշվետվություններ են ներկայացվում նաև «Անուշավան և Օֆիկ Աբրահամյաններ կրթական հիմնադրամին, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և այլն:

ՎՋՏՊՔ կառավարման բարձրագույն մարմինը խորհուրդն է, որը, համաձայն ՎՋՏՊՔ կանոնադրության, լսում և գնահատում է ՎՋՏՊՔ տարեկան գործունեության մասին տնօրենի հաշվետվությունը: ՎՋՏՊՔ կառավարման խորհրդի նիստին տնօրենը ներկայացնում է հաշվետվություն անցած տարվա գործունեության մասին, ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը և այլ փաստաթղթեր: ՎՋՏՊՔ գործունեության հիմնական հաշվետու փաստաթուղթը տարեկան հաշվետվությունն է, որն արտացոլում է ՎՋՏՊՔ գործունեության գրեթե բոլոր բնագավառներն ու հիմնախնդիրները: Երկրորդ կարևորագույն փաստաթուղթը ֆինանսական հաշվետվություններն են: ՎՋՏՊՔ խորհրդի հերթական նիստից առաջ ամբիոններում քննարկվում են արված աշխատանքները, վեր են հանվում խնդիրները, որոնք համակարգվում են և ներկայացվում ուսումնամեթոդական խորհրդի քննարկմանը, որից հետո խնդիրները և կազմված հաշվետվությունները քննարկվում են տնօրինական կամ Կառավարման խորհուրդներում: Այդուհանդերձ, այդ հաշվետվությունները հիմնականում նկարագրողական են՝ միտված իրականացված գործողությունների ներկայացմանը: Հաշվետվությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ առկա չեն:

ՎՋՏՊՔ ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելիության կառուցակարգերը ամրագրված են «Նախնական և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ

օրենքում: Քոլեջում գործում է «Քոլեջի գործունեության թափանցիկության ապահովման մեխանիզմներ» փաստաթուղթը:

Քոլեջը իր գործունեության արդյունքների, տարբեր ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ հրապարակումն իրականացնում է նաև քոլեջի կայքէջի միջոցով: Քոլեջն իր գործունեության լուսաբանումն իրականացնում է նաև սոցիալական տարբեր հարթակներում (ֆեյսբուք, ինստագրամ): Քոլեջի պաշտոնական կայքում (<http://www.vayocdzorcollege.info>) տեղադրված են քոլեջի և առանձին ստորաբաժանումների ՌԾ-ն, կանոնադրությունը, գործատուների, ուսանողների և միջազգային կառույցների հետ պայմանագրերը, գործընկեր բուհերի ցանկը: Տեղադրված են 2015-2020թթ. քոլեջի տարեկան հաշվետվությունները, 2018-2020թթ. ուսումնական տարիների արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ կատարված աշխատանքների տարեկան հաշվետվությունները: Էջն ունի նաև «Կարոնակարգեր, ընթացակարգեր և աշխատակարգեր» բաժին, որտեղ ներկայացված են քոլեջի ստորաբաժանումների կանոնակարգերը, ընթացակարգերն ու քաղաքականությունները, ինչպես նաև դրանց կատարման ժամանակացույցերը:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այդուհանդերձ տարաբնույթ տեխնիկական խնդիրներով պայմանավորված՝ քոլեջի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերն ամբողջությամբ չեն լուսաբանում քոլեջի գործունեությունը, առկա է հեռադարձ կապի խնդիր, հաղորդագրություններին ուշ են պատասխանում, հրապարակվում են հիմնականում քոլեջի ժամանցային հետաքրքրությունները:

Ուսումնական տարվա ընթացքում մի քանի անգամ կազմակերպվում են արտաքին և ներքին շահակիցների հետ բաց քննարկում-հանդիպումներ: ՄՈՒՀ-ում կազմակերպվում են բաց դռների օրեր՝ ներկայացնելով քոլեջի գործունեության արդյունքները, ՄՈՒՀ-ում առկա մասնագիտությունները: Պարբերաբար անցկացվում են հարցումներ որակի և կարիերայի կենտրոնների կողմից շահակիցներին տեղեկատվություն տրամադրելու և կարիքների վերհանման նպատակով:

ՎՁՏՊՔ կարևորում է հասարակության հետ կապերի զարգացումը, որն ամրագրված է Որակի ներքին ապահովման հանձնախմբի կողմից կազմված «Ընթացակարգ հասարակության հետ հետադարձ կապի» և «Քաղաքականություն հասարակության հետ հետադարձ կապի» փաստաթղթերում:

Հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման նպատակով քոլեջի կողմից իրականացվում են տարբեր մասնագիտությունների գծով լրացուցիչ կրթական դասընթացներ և խորհրդատվական ծառայություններ: ՎՁՏՊՔ-ն համագործակցում է Microsoft Innovation Center Armenia կազմակերպության հետ, որի միջոցով կամակերպության կողմից իրականացվում են դասընթացներ համակարգչային ծրագրավորման JavaScript լեզվի ուսուցման, կայքի ստեղծման և այլ հմտություններ ուսուցանելու նպատակով: 2017 թվականից քոլեջում գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիան, որտեղ սովորողները ստանում են գիտելիքներ և կարողություններ ծրագրավորման, ռոբոտաշինության, 3D մոդելավորման տպագրության, շաղափային լազերային փորագրության մասին:

Ուսանողներից շատերն ընդգրկված են հասարակական կազմակերպություններում և կատարում են կամավորական աշխատանքներ՝ սկսած համայնքին վերաբերող աշխատանքներից

մինչև մշակութային և քաղաքացիական ոլորտներին վերաբերող հարցերը: Հասարակայնության հետ կապերի ձևավորման և զարգացման համար Կարիերայի կենտրոնի խորհրդատուների կողմից յուրաքանչյուր շաբաթ կազմակերպվում են այցեր քոլեջ՝ այդ տարվա դպրոցների շրջանավարտներին և ծնողներին մասնագիտական կողմնորոշման շրջանակներում տրամադրելու տեղեկատվություն քոլեջի կրթական ծրագրերի, հնարավորությունների, գործունեության վերաբերյալ:

**Դաստողություններ:** Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՎՁՏՊԲ-ում առկա են հաշվետվողականության մեխանիզմներ, ինչը թույլ է տալիս ապահովել հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների համար: Կարևոր է քոլեջի կողմից կանոնավոր կերպով ըստ աստիճանակարգության հաշվետվությունների առկայությունը: Այդուհանդերձ, անհրաժեշտություն կա այդ հաշվետվությունները դարձնել առավել վերլուծական, դրանցում ներառել չափելի ցուցիչներ, ինչը թույլ կտա վեր հանել քոլեջում ընթացող գործընթացների առկա խնդիրները, գնահատել առկա վիճակը և որոշումներ կայացնելիս հենվել հավաստի տվյալների վրա:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև, որ քոլեջը փորձում է ապահովել ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ տեղադրելով փաստաթղթային հենքը իր պաշտոնական կայքում և լուսաբանելով իր գործունեությունը սոցիալական տարբեր հարթակներում: Այս գործիքների առավել համակարգված կիրառումը և շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմների ակտիվացումը հնարավորություն կտա շահակիցների առավել լայն շրջանակ ներգրավել քոլեջի գործընթացներում, ապահովել ընթացող բոլոր գործընթացների մասին իրազեկվածության բարձրացումը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև գործատուների հետ հետադարձ կապի մեխանիզմների առկայությունը, ինչը հնարավորություն է տալիս նրանց ներգրավել նաև ուսումնառության գործընթացներում (գործնական աշխատանքների և պրակտիկաների իրականացում, ներգրավում դասավանդման գործընթացում):

Փորձագիտական խմբի կողմից դրական գնահատված հանգամանք է նաև տարիներ շարունակ քոլեջի կողմից հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչը հանարավորություն է տալիս նաև տեղեկատվություն տրամադրել քոլեջի մասին արտաքին շահակիցներին, քոլեջում կուտակված փորձառությունն կիրառելի դարձնել տարբեր սեմինարների, քննարկումների կազմակերպման միջոցով:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ, քոլեջը քայլեր է ձեռնարկում իր գործընթացների թափանցիկությունը ներքին և արտաքին շահակիցների համար ապահովելու ուղղությամբ, գործում են շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման և հասարակությանը գիտելիքներ փոխանցելու որոշ մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՁՏՊԲ-ը բավարարում է չափանիշ 8-ի պահանջները:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՁՏՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

#### IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

**ԶԱՓԱՆԻՇ:** Արտաքին կապերի միջոցով ՄՌԻՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

#### Փաստեր

Միջազգային համագործակցության ընդլայնումը ՎՁՏՊՔ 2016-2021թթ. ՌԾ-ում ամրագրված է որպես զարգացման չորս գերակա ուղղություններից մեկը: Այդ ուղղությամբ դրված է մեկ ընդհանրական խնդիր՝ խթանել ՎՁՏՊՔ-ում միջազգային կրթական և այլ համագործակցային ծրագրերի ավելացմանը և երկու ենթանպատակ՝ միջազգային ծրագրերին մասնակցության ընդլայնում և ուսանողների ու դասախոսների շարժունության մեծացում:

Փորձաքննության արդյունքում պարզ դարձավ, որ նշված նպատակներին հասնելու ուղիներ, գործողությունների ծրագրեր, կատարման ընթացքի վերահսկման համար անհրաժեշտ միջանկյալ արդյունքներ կամ գնահատման ցուցիչներ մշակված չեն: ՌԾ-ին կից ժամանակացույցում կատարման ժամկետ սահմանված է 2016-2021թթ.: Ռազմավարական այս ուղղությամբ տարվող գործողությունների տարեկան պլանավորում չի կատարվում:

Փորձի փոխանակման, զարգացման և միջազգայնացման գործընթացները կանոնակարգելու նպատակով ՎՁՏՊՔ-ում շրջանառության մեջ են դրվել մի շարք փաստաթղթեր: Մասնավորապես՝ 2014 թ.-ին ներդրվել է «Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները» փաստաթուղթը, որում ամրագրված են նաև միջազգային շեշտադրմամբ կոնկրետ արդյունքներ՝ օտարալեզու կրթական ծրագրերի և մոդուլների ներդրում, տպագրված հրապարակումներ օտարալեզու պարբերականներում, ակադեմիական շարժունություն և այլն: 2020 թ.-ին մշակել և ներդրել են «Արտաքին կապերի և միջազգայնացման հայեցակարգ» փաստաթուղթը, որում նախատեսված արդյունքները նույնն են, ինչ և նախորդ փաստաթղթում: Վեց տարվա ընթացքում տեսանելի արդյունքներ չեն արձանագրվել: Ձախողման պատճառների վերլուծություն արված չէ: Առկա է նաև առանձին «Արտաքին կապերի և միջազգայնացման ՌԾ» 2016-2021թթ.: Այն քոլեջի ՌԾ-ի համապատասխան բաժնի հետ նույնական փաստաթուղթ է, որում ամրագրված են սկզբնական նպատակները և ակնկալվող արդյունքները: Բոլոր գործողությունների համար նշված է ՌԾ-ի ամբողջ ժամանակահատվածը: Իրագործման ընթացքի վերահսկման ու գնահատման ցուցիչներ սահմանված չեն: Քոլեջում մշակված և հաստատված է «ՎՁՏՊՔ ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորությունն ապահովող ուղղությունները» փաստաթուղթը: Փաստաթղթում ներկայացված են տեղական և միջազգային կազմակերպությունների հետ շփումների և կապերի հաստատման մոտեցումներն ու ենթադրյալ ձևաչափերը:

Փորձաքննությամբ պարզվեց, որ ուսումնասիրված ու բացահայտված չեն արտաքին կապերի ու միջազգայնացման ապահովման ոլորտում քոլեջի հնարավորությունները, առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները: Քոլեջի պաշտոնական կայքի օտարալեզու տարբերակներ մշակված չեն:

Դեռևս 2014թ. քոլեջը խնդիր է դրել ստեղծել արտաքին կապերի զարգացմամբ և միջազգայնացման խնդիրներով զբաղվող առանձին ենթակառուցվածք, սակայն փորձաքննության ընթացքում պարզվեց, որ դեռևս խնդիրը լուծված չէ: Միջազգայնացման հարցերով զբաղվում է քոլեջի տնօրենը: Փորձ է արվում ենթակառուցվածքի գործառույթներն իրականացնել կարիերայի ստորաբաժանման և համապատասխան աշխատանքային խմբի միջոցով: Ամեն տարի քոլեջի տնօրենն ստեղծում է արտաքին կապերի զարգացմամբ և միջազգայնացման խնդիրներով զբաղվող աշխատանքային խումբ, որի աշխատանքները համակարգում է ինքը: Աշխատանքային խումբն առաջնորդվում է տնօրենի կողմից հաստատված «Արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու աշխատանքային խմբի նպատակներն ու գործառույթները» փաստաթղթով և ամենամյա կտրվածքով ներկայացնում է հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից ու փորձագիտական այցից պարզվեց, որ կարիերայի ստորաբաժանումն իր գործառույթների շրջանակում իրականացնում է աշխատանքներ արտաքին շահակիցների հետ: Ի թիվս այլ աշխատանքների՝ վերջինս իրականացնում է սոցիալական գործընկերների՝ (գործատուներ, արհմիություններ, աշխատանքային հաջողություններ ունեցող շրջանավարտներ) ներգրավում ուսանողների կարիերայի խորհրդատվության կազմակերպման աշխատանքներում: Ըստ կարիերայի ստորաբաժանման հաշվետվությունների, պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ինչպես միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցիչների, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների, գործատուների ու սոցիալական ընկերությունների հետ: Ուսանողների մասնագիտական կողմնորոշման ու կարողությունների զարգացման համար քոլեջը հատկապես կարևորում է համագործակցությունը «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն»-ի և «Զբաղվածության տարածքային կենտրոն»-ի հետ՝ զբաղվածության պետական ծրագրերին մասնակցելու ու շրջանավարտների համար թափուր աշխատատեղեր բացահայտելու նպատակով:

Փորձաքննությամբ հաստատվեց, որ քոլեջում առկա են տեղական ու միջազգային մակարդակում համագործակցության մի շարք հաջողված օրինակներ: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվեց, որ տարբեր ծրագրերի շրջանակներում ՎՁՊՏԲ-ն կնքել է համագործակցության պայմանագրեր և հուշագրեր ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մի շարք կազմակերպությունների («Մեյվ դը չիլդրեն» Հայաստանյան գրասենյակ, Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (UNDP), «Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն» (GIZ) և այլն) հետ: Այդ պայմանագրերի հիման վրա առկա են ինչպես մեկնագամյա, այնպես էլ նպատակային շարունակական համագործակցության օրինակներ: 2020թ. ՎՁՏՊԲ-ն ՀՀԿԳՄՍ նախարարության և եվրոպական կրթական հիմնադրամի («European Training Foundation») կողմից ընտրվել է «Գերազանցության ցանց»-ի անդամ: «European Training Foundation»-ի աջակցությամբ ձեռնամուխ է եղել ԱՀՈ (Աշխատանքի վրա հիմնված ուսուցում) հայեցակարգի մշակման և գերազանցության կենտրոնի վերափոխման գործընթացներին: «Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում իրականացվել է «Ծրագրավորման հիմունքներ սկսնակների համար JavaScript-ով»



ծրագրավորման դասընթացը, որի արդյունքում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ՄԿԾ-ում ավելացվել է նոր մոդուլ:

2011թ.-ից քոլեջը համագործակցում է ՈԱԱԿ-ի հետ, ինչի արդյունքում հիմնվել է «Որակի ներքին ապահովման կենտրոն», իրականացվել է նախնական ինքնավերլուծություն, աշխատանքներ են տարվում քոլեջում որակի ներքին ապահովման մշակույթն արմատավորելու ուղղությամբ:

Քոլեջն արդյունավետորեն համագործակցում է նաև «Անուշավան և Օֆիկ Աբրահամյան» բարեգործական կրթական հիմնադրամի հետ, որի շրջանակներում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև քոլեջի որոշ կաբինետներ համալրվել են նոր սարքերով ու սարքավորումներով: ԱՕԱ հիմնադրամի աջակցությամբ քոլեջում հիմնադրվել են «Արմաթ» լաբորատորիան և գինու արտադրության փոքրածավալ արտադրամասը:

ՎՋՏՊՔ-ն ակտիվորեն մասնակցում է նաև «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի կողմից իրականացվող մի շարք ծրագրերի: «Մասնագիտական կրթություն և ուսուցում-համագործակցություն» ծրագրի շրջանակներում ստորագրվել են համագործակցության մասին հուշագրեր Լեհաստանի ՄԿՈԻ ոլորտը ներկայացնող հաստատությունների հետ: Քոլեջը հյուրընկալել է Լեհաստանից եկած ուսանողների, սակայն փոխադարձ այցը չի կայացել ֆինանսական խնդիրների պատճառով:

Ըստ ՎՋՏՊՔ ինքնավերլուծության՝ 2018թ. քոլեջը մասնակցել է Աղվերանում տեղի ունեցած «Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈԻ) համագործակցություն» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատաժողովին, որի արդյունքում մշակվել են գործարարների հետ համագործակցության հեռանկարներ: Փորձաքննության ընթացքում այդ ծրագրի շրջանակներում մշակված հիմքերով քոլեջում արված փոփոխություններ կամ նոր նախաձեռնություններ չարձանագրվեցին:

ՎՋՏՊՔ-ն նախատեսում է տեղական մակարդակում փորձի փոխանակման նպատակով օգտագործել նաև ՀՀ տարածաշրջանային քոլեջների միասնական հարթակը:

Մարզի զարգացման ծրագրերում ընդգրկվելու, արդյունավետ աշխատանք կատարելու նպատակով քոլեջը ձգտում է ընդլայնել և խորացնել կապերը տեղական իշխանությունների և ինքնակառավարման մարմինների հետ:

Փորձաքննության ընթացքում պարզվեց, որ մարզի գործատուների հետ համագործակցության պայմանագրերի հիման վրա «Գինեգործություն և հյուրերի արտադրություն» նախնական մասնագիտական կրթական ծրագիրը քոլեջն իրականացնում է դուրս ծրագրով: Որոշ մոդուլների ուսուցումն իրականացվում է գործատուների մոտ՝ օգտագործելով նրանց ռեսուրսները: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քոլեջում կարևորում են ուսումնական պլանով սահմանված դասաժամերի մի մասի անցկացումը գործատուների մոտ: Քոլեջը, որպես գործատուների հետ արդյունավետ համագործակցության ճանապարհ՝ դիտարկում է դուրս համակարգի ձևավորումն ու զարգացումը:

Համաձայն ՎՋՏՊՔ ԻՎ-ի՝ միջազգայնացման հետ կապված հիմնական խոչընդոտներից մեկը ներքին շահակիցների օտար լեզվի իմացության ցածր մակարդակն է: Փորձ է արվում խնդիրը լուծել դասախոսական կազմի և աշխատակիցների համար անգլերեն և ռուսաց լեզուների դասընթացներ կազմակերպելով: Փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ ամենամյա

կտրվածքով առկա է այդ դասընթացների կազմակերպման ժամանակացույց և մասնակիցների որոշակի քանակ, սակայն քուէջը համարում է, որ ՊԴ կազմի և աշխատակիցների օտար լեզվի իմացության բավարար մակարդակ դեռևս հնարավոր չի եղել ապահովել: Հարկ է նշել, որ օտար լեզվի իմացության վերաբերյալ հարցումների արդյունքներով արձանագրվել են ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության բավականին բարձր ցուցանիշներ (ուսանողների ավելի քան 95%, աշխատակիցների շուրջ 60%): Առկա հակասությունը ուշադրության չի արժանացել և քննարկման թեմա չի դարձել: ՎՋՏՊՔ-ում պարբերաբար աշխատել են նաև «Խաղաղության կորպուս»-ի կամավորները, ովքեր անգլերենի զարգացման դասընթացներ են անցկացրել ուսանողների և դասախոսների շրջանում:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ քուէջի ուսանողներն ու դասախոսները մասնագիտական գրականության ուսումնասիրման ժամանակ նույնպես բախվում են խնդիրների և դժվարությունների՝ պայմանավորված օտար լեզվի տիրապետման ոչ բավարար մակարդակով: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ փոխանակման միջազգային ծրագրերին կամ օտար լեզվով կազմակերպվող դասընթացներին քուէջի ուսանողների և աշխատակիցների մասնակցության ցուցանիշները ցածր են, ինչը, ըստ քուէջի՝ պայմանավորված է մասնագիտական օտար լեզվին տիրապետող դասախոսների և ուսանողների սակավությամբ:

**Դասողություններ:** Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քուէջի զարգացման ռազմավարական ուղղություն է սահմանվել արտաքին կապերի ու միջազգայնացման ապահովումը: Մտահոգիչ է, սակայն, որ ուսումնասիրված չեն արտաքին կապերի ու միջազգային համագործակցության ոլորտում առկա հնարավորությունները: Համագործակցությունների արդյունքում քուէջն ակնկալում է ներդրումներ, սակայն հստակեցված չեն քուէջի առաջարկները, որոնք համագործակցությունը կդարձնեն երկուստեք շահավետ, սակայն այս հանգամանքը կարող է խոչընդոտել քուէջի կարիքների և ՌԾ նպատակների անհրաժեշտությամբ պայմանավորված համագործակցության ինստիտուցիոնալացված շրջանակի հաստատմանն ու դրանց շառնակակալության երաշխիքներին:

Միջազգայնացման գործընթացներով զբաղվող կառույցի բացակայության պայմաններում, այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները համակարգված բնույթ չեն կրում: Ոչ ինստիտուցիոնալ մակարդակում ձևավորված համագործակցություններն ու կատարվող գործողությունների իրավիճակային բնույթ ունենալը կարող են բացասաբար անդրադառնալ իրականացվող գործընթացների արդյունավետության վրա: Տարերայնությունը կարող է վտանգել արդեն իսկ գործող կապերի շարունակականությունը: Միաժամանակ, փորձագիտական խումբը նկատում և դրական է գնահատում համագործակցության տարբեր շրջանակներով պայմանավորված քուէջի ինչպես ռեսուրսների համալրումը, այնպես էլ քուէջի զարգացմանը միտված արդյունքները:

Փորձագիտական խումբը դրական է համարում ՎՋՏՊՔ քայլերը, որոնք միտված են դուալ կրթական համակարգի կիրառմամբ գործատուների և նրանց ռեսուրսային բազայի ներգրավմանը կրթական գործընթացներում: Սակայն մտահոգիչ է այն փաստը, որ գործատուների ներգրավման հնարավորությունների ուսումնասիրություններ չեն արվել. մասնավորապես՝ քուէջի մնացած

կրթական ծրագրերում դուրսը համակարգի ներդրման նպատակահարմարության տեսանկյունից: Մտահոգիչ է նաև, որ տարբեր հարթակներում քուլեջի ներկայացուցիչների մասնակցության արդյունքում ձեռք բերված դրական փորձը ոչ միշտ է տեղայնացվում ու կիրառվում ՎՁՏՊՔ-ում: Փորձագիտական խումբը կարծում է, որ սահմանափակ մարդկային ու ֆինանսական ռեսուրսների պարագայում գործատուների ռեսուրսների (և՛ մարդկային, և՛ նյութական) փոխշահավետ և նպատակային օգտագործումը կարող է համագործակցության նպաստավոր միջավայր ստեղծել: Արտաքին կապերի և միջազգայնացման ենթակառուցվածքի բացակայությունը խոչընդոտում է նաև գործատուների հետ համակարգված, նպատակային ծրագրերի պլանավորմանն ու իրականացմանը: Արդյունքում՝ քուլեջը լիարժեք չի օգտագործում գործատուների ներուժը իր առջև ծառայած խնդիրների լուծման և կրթական գործընթացների բարելավման նպատակով: Համագործակցության ներուժի վերլուծման, գնահատման, երբեմն նաև իրականացման արդյունքների մասին փաստերի բացակայությունը նույնպես չի նպաստում արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների ինստիտուցիոնալ մակարդակով իրականացմանն ու տարածմանը քուլեջում:

Մտահոգիչ է ՎՁՏՊՔ դասախոսական անձնակազմի և ուսանողների օտար լեզվի (մասնավորապես՝ անգլերենի) տիրապետման ոչ բավարար մակարդակը միջազգայնացման գործընթացներին նպաստելու համար: Հատկապես մտահոգիչ է դասախոսական կազմի մասնագիտական անգլերենի իմացության մակարդակը, ինչը խոչընդոտում է տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում արդի գրականությունից օգտվելու հնարավորությունը: Մինևույն ժամանակ, դա խոչընդոտում է քուլեջի ուսանողների և դասախոսների՝ ակադեմիական շարժունության միջազգային ծրագրերում մասնակցությանն ու ներգրավվածությանը, ինչն էլ հանգեցնում է ուսումնական այլ հաստատությունների հետ փորձի փոխանակման պակասի: Մտահոգիչ է նաև, որ ներքին շահակիցների շրջանում օտար լեզվի (անգլերենի) իմացության ոչ բավարար մակարդակը վերհանված խնդիր է քուլեջի կողմից, սակայն այս ուղղությամբ քուլեջում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը ցածր է:

Ունենալով խիստ սահմանափակ մարդկային ռեսուրսներ և աշխատաշուկա՝ դեկավարության հետևողական ջանքերի, անձնակազմի անձնական նվիրվածության և տարածաշրջանում միակ ՄՈՒԻ-ը լինելու մենաշնորհի շնորհիվ քուլեջը պարբերաբար ընդգրկվել է տարբեր տեղական և միջազգային ծրագրերում, ինչի արդյունքում կարողացել է հնարավորինս բարելավել ռեսուրսային բազան և հիմնականում իրականացնել իր առաքելությունը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ ՎՁՏՊՔ-ն հետևողականորեն քայլեր է ձեռնարկում արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ, մշակել և փորձում է իրականացնել արտաքին կապերը և միջազգայնացումը խրախուսող քաղաքականություն, աշխատում է փաստաթղթավորել և կանոնակարգել այդ ուղղությամբ քուլեջի գործունեությունը, իրականացնում է ՀՀ և արտերկրի որոշ քուլեջների հետ շփման, համեմատության և փորձի փոխանակման գործընթացներ, միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի բացակայությունը փորձում է լրացնել համապատասխան աշխատանքային խմբի միջոցով, քայլեր է ձեռնարկում ընդլայնելու և խորացնելու գործատուների հետ համագործակցության շրջանակները (մասնավորապես դուրսը կրթական համակարգի շրջանակներում), առկա են մի

շարք միջազգային կառույցների հետ աշխատելու հաջողված փորձեր, կնքված և գործող հուշագրեր ու պայմանագրեր, միջազգայնացման արդյունավետության բարձրացման նպատակով հնարավորություն է ստեղծում բարելավելու ներքին շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՁՏՊՔ-ն բավարարում է չափանիշ 9-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը ՎՁՏՊՔ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

#### X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

#### Փաստեր

Քոլեջը դեռևս 2011 թ.-ին ներդրել է ՎՁՏՊՔ-ի որակի ապահովման ընթացակարգ և Որակի ապահովման ենթակառուցվածքի կանոնակարգ փաստաթղթերը, ըստ առաջինի նկարագրվում են որակի ապահովման գործընթացները, հստակեցվում են որակի կառավարման սուբյեկտների պարտականությունները, իսկ ըստ երկրորդի՝ առանձնացվում և հստակեցվում է ենթակառուցվածքի գործառնության շրջանակը: 2014 թ.-ին ներդրվել է Որակի ապահովման քաղաքականություն և ռազմավարություն փաստաթուղթը, այստեղ նշվում են որակի ապահովման քաղաքականության խնդիրները, որակի ապահովման սկզբունքները, որոշակիացվում է որակի ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքը, ընդ որում որակի ապահովման հանձնաժողովը նույնացվում է կենտրոնի հետ, միաժամանակ առանձնացվում են մշտադիտարկման և գնահատման գործիքները, որակի ապահովման գործընթացներն ու որակի ապահովման գործիքները:

Առկա է 07.07.2016 թ.-ին հաստատված 2016-2021 թթ.-ի Որակի ապահովման բաժնի ռազմավարական ծրագիրը, որում ներկայացված նպատակները, խնդիրները և պլանը նույնն է, ինչ որ նույն ժամանակում հաստատված ՎՁՏՊՔ-ի ռազմավարական ծրագիրը: Մի շարք խնդիրներ ուղղված են տարբեր գործընթացների որակի կատարելագործմանն ու բարելավմանը, սակայն հստակ պլանավորված չէ խնդիրների իրագործման ուղին:

2018 թ.-ին հաստատվել է ՎՁՏՊՔ-ի որակի ապահովման ձեռնարկը, որտեղ կրկին ներկայացվում է որակի ապահովման քաղաքականությունը, որակի ապահովման համակարգը, անդրադարձ է կատարվում քոլեջի բոլոր գործընթացներին ըստ ռազմավարական ծրագրի:

ՎՁՏՊՔ-ում որպես ՈԱ գործընթացները կառավարող և իրականացնող մարմին համարվում է ՈՆԱՀ-ը, որը ղեկավարվում է ուսումնական աշխատանքների գծով տեղակալի կողմից: Այն ունի վերահսկման և վերանայման, մշտադիտարկման և վերլուծության, ինչպես նաև տեխնիկական, տեղեկատվական աշխատանքային խմբեր, որոնք իրականացնում են իրենց համապատասխան գործառնությունները: Մասնավորաբար՝ վերահսկման-վերանայման աշխատանքային խումբը մշակում է որակի ապահովման քաղաքականություն, ընթացակարգեր,

իրականացնում է որակի ապահովման վերահսկման-վերանայման գործընթացներ, մշտադիտարկման-վերլուծական աշխատանքային խումբը պլանավորում և հարցումների միջոցով իրականացնում է ներքին շահակիցների կարիքի վերհանման, նրանց բավարարվածության գնահատման գործընթացը, տեխնիկական աշխատանքային խումբը նախապատրաստում է հարցաթերթիկները և իրականացնում հարցումները, տեղեկատվական աշխատանքային խումբը ապահովում է տեղեկատվության հասանելիությունը, համակարգում հետազոտական տվյալները, նպաստում ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացի արդյունավետ կառավարմանը: Հանձնախումբը և աշխատանքային խմբերի աշխատանքն իրականացվում է հասարակական հիմունքներով: Քոլեջում վերջերս որակի ապահովման պատասխանատուի հաստիքն է ներդրվել:

Որակի ապահովման հանձնաժողովը կրթության որակի ներքին ապահովման համակարգում ղեկավարում և վերահսկում է կրթության որակի ապահովման գործընթացում ներգրավված ստորաբաժանումների ներդաշնակ փոխգործակցությունը, ապահովում է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացի կառավարումը: Հանձնաժողովում ներգրավված են վարչական, դասախոսական և ուսանողական ներկայացուցիչներ: Հանձնաժողովի գործառույթները սահմանված են ըստ Որակի ապահովման ընթացակարգ փաստաթղթի:

Քոլեջի ռազմավարական պլանում և տարեկան ֆինանսական պլաններում որակի ապահովման գործընթացների համար հատկացված ֆինանսական միջոցներ առկա չեն: Որակի ապահովման բաժնի համար դեռևս հատկացված առանձին տարածք առկա չէ: Քոլեջը որոշակի ծախսեր է իրականացնում հարցումների գործընթացի կազմակերպման համար: Հարցումները մեծապես իրականացվում են թղթային տարբերակով:

Հանձնաժողովում և հանձնաժողովի աշխատանքային խմբերում ներգրավված աշխատակիցները ձգտում են զարգացնել իրենց գիտելիքները՝ ուղղված որակի ապահովման գործընթացների իրականացմանը: Փորձագիտական այցից պարզվեց, որ աշխատակիցները վերապատրաստումների կարիք ունեն:

Առկա է ներքին և արտաքին շահակիցների ներգրավման քաղաքականություն՝ ներդրված 2014 թ.-ին: ՎՁՏՊԲ-ում ՈՆԱՀ-ի կողմից անցկացվում են հարցումներ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, գործատուների շրջանում՝ կարիքի վերհանման, քոլեջում իրականացվող գործընթացների որակի գնահատման նպատակներով: Յուրաքանչյուր անգամ հարցումներին ներգրավվել է 20 մասնակից: Հարցումների անցկացման գործընթացում փորձում են ներգրավել ուսանողների՝ տեխնիկական հարցերում աջակցելու համար: Դասախոսներն ու ուսանողները ներգրավված են նաև խորհուրդներում և տարբեր հանձնախմբերում ու աշխատանքային խմբերում: Գործատուների հետ որոշ առանձին քննարկումներ են անցկացվում: Փորձագիտական այցից պարզվեց, որ ուսանողները, գործատուները, գլխավորապես իրազեկ չեն քոլեջի որակի ապահովման գործընթացներից, շրջանավարտները ներգրավված չեն այդ գործընթացներում: Առկա է անկախ հանձնախումբ, որի անդամները ծնողներ են, նրանք ընդգրկվում են քոլեջի որոշ գործընթացներում: Քոլեջում խնդիրների վեր հանման նպատակով առկա է նաև արկղիկ:

Ինքնավերլուծությունն իրականացնող հանձնախումբում ընդգրկված են միայն վարչական աշխատակիցներ և դասախոսներ, աշխատանքային խմբերում՝ նաև ուսանողներ<sup>8</sup>:

Ամբիոններում կազմակերպում են առարկաների դրվածքների ուսումնասիրություն և լավագույն փորձի լուսաբանում, կազմակերպում են սեմինարներ: Անցկացնում են դասալուսմներ, որի միջոցով փորձում են վեր հանել մասնագիտական պատրաստվածության, կիրառվող մեթոդների հետ կապված խնդիրները:

Որակի ներքին ապահովման համակարգը ներկայացված է ինչպես 2014 թ.-ին ներդրվել է Որակի ապահովման քաղաքականություն և ռազմավարություն փաստաթղթում, այնպես էլ 2018 թ.-ին հաստատված Որակի ապահովման ձեռնարկում: 2020 թ.-ին ներդրվել է Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն, ընթացակարգ փաստաթուղթը, որը դեռևս չի կիրառվել:

Բացակայում է որակի ապահովման մեխանիզմների և ընթացակարգերի ներդրմանն ուղղված բենչմարքինգ: Որակի ապահովման համակարգի արդյունավետությունը պայմանավորեցվում է քուլեջի բոլոր գործընթացների արդյունավետությամբ: Քուլեջում չի իրականացվել որակի ներքին ապահովման համակարգի արդյունավետության հանընդհանուր ուսումնասիրություն և վերլուծություն:

Առկա են Որակի ապահովման հանձնաժողովի աշխատանքային պլաններ և հաշվետվություններ, վերջիններս որոշակի բարելավման են ենթարկել, այդ թվում նաև՝ քուլեջի հաշվետվությունը: Որակի ապահովման հանձնաժողովի կողմից ձեռնարկվել, ուսումնասիրվել և կազմվել է քուլեջի ՌԾ-ի հաշվետվություն: Հաշվետվությունների համար ներդրել են SWOT վերլուծության բաղադրիչ, սակայն, ընդհանուր առմամբ դեռևս նկարագրական բնույթ են կրում: Միաժամանակ փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզվեց, որ գործընթացների արդյունավետության բարձրացման միտումով ձևավորել են որակի ապահովման հանձնախմբի համապատասխան աշխատանքային խմբեր: Նաև՝ անհրաժեշտություն են տեսել հաստիքով աշխատակցի:

Քուլեջում դեռևս 2016 թ.-ին ինքնավերլուծության պիլոտային իրականացման փորձառություն է եղել երկու չափանիշի շրջանակում, որից հետո այդ 2017 թ.-ին գործընթացը շարունակել են՝ իրականացնելով ինքնավերլուծություն ըստ 10 չափանիշների: Փորձագիտական այցից պարզվեց, որ ինքնավերլուծության իրականացման այդ ներքին փորձի արդյունքում որոշակիորեն վերանայել են հարցարանները, ներդրել են նոր հարցարաններ՝ պայմանավորված նոր ուսումնասիրությունների անհրաժեշտությամբ:

Չնայած այդ փորձառությանը, ներկայիս ինքնավերլուծության ուսումնասիրումը ցույց տվեց, որ առկա է որոշ չափորոշիչների թյուրըմբռնում: Միաժամանակ հաճախ առկա է խզում ըստ չափորոշիչների ինքնավերլուծության և համապատասխան չափանիշի SWOT վերլուծության միջև:

Ընթացիկ հաշվետվությունները, մեծապես նկարագրական լինելով, նաև չեն պարունակում ըստ ինքնավերլուծության պահանջվող տեղեկատվություն: Փորձագիտական այցից պարզվեց, որ հավատարմագրման գործընթացով պայմանավորված ինքնավերլուծություն

<sup>8</sup> Նախադասությունը վերաձևակերպվել է հաստատության դիտարկումների հիման վրա:

իրականացնելիս բավականին ջանքեր են պահանջվել՝ հավաքագրելու պահանջվող տեղեկատվությունը:

Միաժամանակ, ինքնավերլուծությունը մեծապես բաղկացած է ընդհանուր եզրահանգումներից, որոնք հաստատում են չափորոշի շրջանակում ներկայացվող պահանջները, սակայն առկա չեն բավարար հիմքեր, տեղեկատվություն և վերլուծություն նման եզրահանգման համար:

Իրականացված հարցումների արդյունքները վերլուծվում են, քննարկվում ամբիոններում, խորհուրդներում, հաշվետվությունները քննարկվում են կառավարման խորհրդում: Հաշվետվությունները (այդ թվում՝ ՌԾ-ի) հրապարակվում են քոլեջի պաշտոնական կայքում:

**Դաստորություններ:** ՎՁՏՊԲ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն, մշակել է տարբեր ընթացակարգեր: Քոլեջի ՌԾ-ն մի շարք խնդիրներ է ներառում՝ ուղղված որակի ապահովման գործընթացներին և այդ գործընթացների կատարելագործմանը: Չնայած այդ փաստաթղթերում առկա չէ մանրամասն ընթացակարգային դրույթների նկարագիր, սակայն փորձագիտական խումբը կարևորում է ներդրված փաստաթղթերը և համարում է, որ դրանք բավականին հետաքրքիր և հաջող մեկնարկ են՝ ուղղված որակի ապահովման գործընթացների ներդրմանն ու կարգավորմանը: Միաժամանակ փորձագիտական խմբի կողմից գնահատելի է քոլեջի կողմից մեծ ուշադրության հատկացումը և ջանքերի ներդրումը՝ ուղղված որակի ապահովման գործընթացներին:

Փորձագիտական խումբը տեղին չի համարում նույն բովանդակությամբ, տարբեր անվանումներով փաստաթղթերի միաժամանակ հաստատումը (Որակի ապահովման բաժնի ռազմավարական ծրագիր, ՎՁՏՊԲ-ի ռազմավարական ծրագիր), միաժամանակ համարում է, որ հարկավոր է ուշադրություն դարձնել տարբեր գործընթացների հստակ և իրագործելի պլանավորման ապահովմանը, քանի որ հակառակը կարող է խոչընդոտել նպատակների իրագործմանը: Միաժամանակ խնդրահարույց է համարում այն, որ տարբեր ժամանակահատվածներում նույն միևնույն գործընթացի կարգավորմանն ուղղված տարբեր փաստաթղթերի պարագայում չի արտահայտվում դրանց հաջորդաբար բարելավման մասը, այլ շարունակում են գոյություն ունենալ և գործել զուգահեռաբար:

Փորձագիտական խմբի կողմից նկատելի է քոլեջի կողմից որակի ապահովման գործընթացների կարևորումը, ինչի մասին են վկայում բավականին մարդկային ռեսուրսների ներգրավումը համապատասխան գործընթացներում՝ հանձնախմբերի և աշխատանքային խմբերի միջոցով: Ֆինանսական ռեսուրսների սղությունը նկատի ունենալով՝ քոլեջը ընտրել է որակի ապահովման նման մոտեցում: Փորձագիտական խմբի կողմից նկատելի են արդյունքները և համարում է, որ դրանում անհերքելի կարևորություն ունի քոլեջի նկատմամբ նվիրական աշխատանքը առանձին անձանց պարագայում: Սակայն, ընդհանուր առմամբ, հասարակական հիմունքներով աշխատանքի արդյունավետությունը, որը նաև խրախուսման մեխանիզմներ չունի, կարող է վտանգված լինել: Այս տեսանկյունից, փորձագիտական խումբը կարևորում է նաև համապատասխան հաստիքի ներդրումը: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը նաև ուշադրություն պետք է դարձնի որակի ապահովման հանձնախմբում և աշխատանքային խմբերում ներգրավված աշխատակիցների որակի ապահովման գործընթացների

իրականացմանն ուղղված կոմպետենցիաների կատարելագործմանը, ինչը կնպաստի որակի մշակույթի տարածման և որակի ապահովման գործընթացների առավել արդյունավետ իրագործմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտություն կա ուշադրություն դարձնելու հարցումների և ուսումնասիրությունների իրականացման արժանահավատությանը, մեթոդաբանությանը, միաժամանակ կատարելագործելու անցկացման և վերլուծման միջոցները:

Փորձագիտական խմբի կողմից նկատելի է և դրական է համարվում այն, որ որակի ապահովման հանձնախումբը կարողացել է ազդեցություն ունենալ հաշվետվողականության մեխանիզմների բարելավման հարցում և շարունակական է դիտում այս հարցը: Սակայն դեռևս տեսանելի չեն հարցումների արդյունքների ազդեցությունը գործընթացների վրա:

Փորձագիտական խումբը կարևորում է ամբիոններում իրականացվող լավ փորձի վերհանման, ինչպես նաև դասավանդման որակի բարձրացմանն ուղղված որոշ միջոցառումների և մեխանիզմների առկայությունն ու գործածումը, սակայն գործընթացների կառավարման հետ կապված դեռևս լիարժեքորեն չի գործում որակի կառավարման ՊԻԳԴ շրջափուլը: Քուլեջին հաջողվել է որոշակիորեն ապահովել դասախոսների և վարչական աշխատակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում, սակայն ուսանողների և արտաքին շահակիցների ներգրավվածությունը բավական թույլ է արտահայտված և այս առումով փորձագիտական խումբը կարևորում է նրանց շարունակական ակտիվ ներգրավմանն ուղղված հստակ մեխանիզմների մշակումն ու ներդրումը:

Քուլեջը կարևորել է որակի ապահովման համակարգի ներդրումը և այս հարցին անդրադարձել է դեռևս 2014 թ.-ից, միաժամանակ կարողացել են ժամանակի ընթացքում այն առավել հարմարեցնել քուլեջի յուրահատկություններին՝ միտում ունենալով բարձրացնել արդյունավետությունը, այս տեսանկյունից մեծ կարևորություն է ունեցել ինքնավերլուծության իրականացման փորձը և դրա կարևորության գիտակցումը: Գնահատելով և կարևորելով այս ամենը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ կարևոր կլինի համեմատական վերլուծության իրականացումը, ազգային և միջազգային փորձի ուսումնասիրումը, ինչպես նաև որակի ապահովման համակարգի արդյունավետության գնահատման գործընթացների իրականացումը, ինչը հստակ երաշխիք կդառնա համակարգի կատարելագործման հարցում:

Փորձագիտական խումբը կարևորում է որակի ապահովման գործընթացներին ուղղված կարողությունների զարգացումը նաև այն առումով, որ դա կնպաստի ինքնավերլուծության առավել արդյունավետ իրականացման: Փորձագիտական խումբը նշում է, որ որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացները դեռևս դժվարությամբ է տրվում քուլեջին, ինչը պայմանավորված է նաև ընթացիկ գնահատումների գլխավորապես նկարագրական բնույթով և սակավ տեղեկատվական լինելով:

Դրական են քուլեջի ջանքերը՝ ուղղված քուլեջի գործունեության թափանցիկության ապահովմանը, սակայն հաշվետվությունները դեռևս թույլ չեն տալիս լիարժեք պատկերացում կազմել քուլեջում ընթացող գործընթացների որակի մասին:

**Եզրակացություն:** Հաշվի առնելով, որ ՎՁՏՊԲ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն, որոշ ընթացակարգեր և որակի ապահովման համակարգ, կարևորում է



որակի ապահովման գործընթացները և ձգտում է տրամադրել որոշ ռեսուրսներ, կարողացել է որակի ապահովման գործընթացներում որոշակիորեն ներգրավել ներքին շահակիցներին և կարևորում է գործատուների ներգրավվածությունը դրանցում, առկա է որակի ապահովման համակարգի գոնե լոկալ բարելավման փորձ, քայլեր է ձեռնարկել՝ բարելավելու հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ապահովման գործընթացները, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎՋՏՊԲ-ն բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին:

**Եզրահանգում:** Փորձագիտական խումբը ՎՋՏՊԲ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԶԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում և վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմ	Չի բավարարում
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

---

Արմենուհի Սարգսյան  
Փորձագիտական խմբի ղեկավար

30 դեկտեմբերի 2021 թ.

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

**Արմենուհի Սարգսյան՝** 2006 թ. ավարտել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանակավարժական ինստիտուտը՝ «Մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2011 թ. շնորհվել է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2007-2011 թթ. եղել է ԳՊՄԻ-ի «Մաթ. անալիզ և դիֆ. հավասարումներ» ամբիոնի դասախոս, 2011-2014 թթ.՝ նույն ամբիոնի ասիստենտ, 2014-2017 թթ.՝ «Բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ, 2017 թվականից առ այսօր՝ «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնի դոցենտ: 2012-2016 թթ. եղել է ԳՊՄԻ-ի Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ: 2017-2018 թթ. եղել է ՇՊՀ-ի Որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն, իսկ 2018 թվականից Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրենն է: Մի շարք գիտական նախագծերում հանդես է եկել որպես ավագ գիտական աշխատող կամ ղեկավար: 2017 և 2019 թթ. դասախոսությամբ հանդես է եկել Անգլիայի Քիլի համալսարանում, Erasmus + շարժունության ծրագրի շրջանակներում: 2018 թվականից ՇՊՀ-ի Գիտական տեղեկագիր հանդեսի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է, մինչ այդ (հիմնման պահից) հանդիսացել է պատասխանատու քարտուղարը: 1 ուսումնամեթոդական ձեռնարկի և 60-ից ավել գիտական հոդվածների հեղինակ և համահեղինակ է:

**Աշոտ Ավետիսյան՝** 1989 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը: 1989-1991 թթ. սովորել է ԽՍՀՄ ԳԱ Սիբիրյան բաժանմունքի ասպիրանտուրայում: 1991-1996 թթ. աշխատել է Վայոց Ձորի մարզի Թառաթումբի ութամյա դպրոցում՝ որպես փոխտնօրեն, 1996-1998 թթ. Վայոց Ձորի մարզի Քարազիլի միջնակարգ դպրոցում՝ որպես փոխտնօրեն: 2001-ից մինչ այժմ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի պրակտիկայի բաժնի վարիչն է և որակի կառավարման հանձնաժողովի նախագահը: Բարձրագույն մաթեմատիկայի դասախոս է: Երկու գիտական հոդվածների հեղինակ է: Համահեղինակել է ձեռնարկներ և ուղեցույցներ:

**Աննա Պարսյան՝** 2007 թ. ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարման ֆակուլտետը: 2016-2020թթ. հանդիսացել է Հայաստանի ազգային ազրարային համալսարանի Ագրոբիզնեսի կառավարման և կազմակերպման ամբիոնի հայցորդ: 2020 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2014թ.-ից մինչ այժմ «Արտադրության կազմակերպում» և «Կառավարում» առարկաների դասախոս է ՀԱԱՀ Ագրոբիզնեսի կառավարման ամբիոնում: Աշխատել է նաև մասնավոր ոլորտի մի քանի կազմակերպություններում՝ որպես հաշվապահ: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների: 8 գիտական հոդվածների հեղինակ է:

**Լիդա Գրիգորյան՝** 2018-2021 թթ. սովորել է ՀՀ Արարատի պետական քոլեջում «Ֆինանսներ» մասնագիտությամբ: 2021 թվականին ընդունվել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան՝ «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին, ինչպես նաև առարկայական օլիմպիադաներին և արժանացել խրախուսական մրցանակների:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

18.10.2021 թ. - 21.10.2021 թ.

	17.10.2021 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Մեկնում Երևանից Եդեգնաձոր	12:00	14:00	120 րոպե
2	Ռեսուրսների դիտարկում	16:00	17:30	90 րոպե

	18.10.2021 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում ՎՋՏՊՔ տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:40	11:40	60 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծության խմբի անդամների հետ	12:00	12:40	40 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում շրջանավարտների հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում գործատուների հետ	15:30	16:30	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:40	18:00	80 րոպե

	19.10.2021 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում ամբիոնների վարիչների, կրթական ծրագրերի պատասխանատուների և մեթոդիստի հետ	10:40	11:40	60 րոպե
3	Դասալսումներ	11:50	12:50	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
5	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 հոգի) հետ	14:10	15:10	60 րոպե
6	Հանդիպում ուսանողների (10-12 հոգի) հետ	15:20	16:20	60 րոպե
7	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ /Ուսումնական մասի վարիչ, կարիերայի	16:40	17:50	70 րոպե

	կենտրոնի ղեկավար, գրադարանավար, իրավախորհրդատու, հաշվապահ, գնումների համակարգող, կադրերի բաժնի տեսուչ/			
8	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:00	19:00	60 րոպե

	20.10.2021թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1	Հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Զբոսաշրջություն», «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրերի պատասխանատուների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Զբոսաշրջություն», «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրերի դասախոսների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Զբոսաշրջություն», «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրերի ուսանողների հետ	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5	Հանդիպում ուսանողական խորհրդի անդամների հետ	14:20	15:00	40 րոպե
6	Բաց հանդիպում	15:10	16:20	70 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	19:00	150 րոպե

	<b>21.10.2021 թ.</b>	<i>Մեկնարկ</i>	<i>Ավարտ</i>	<i>Տևողություն</i>
1	Հանդիպում Որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ	09:30	10:30	60 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի քննարկում	10:50	12:50	120 րոպե
3	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	14:00	60 րոպե
4	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:10	16:10	120 րոպե
5	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:20	17:20	60 րոպե
6	Հանդիպում ՎՋՏՊՔ ղեկավար կազմի հետ	17:30	18:00	30 րոպե
7	Վերադարձ Եղեգնաձորից Երևան	19:00	21:00	120 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	2016-2021 թթ.-ի ՌԾ կատարման ժամանակացույց և ԳԱԱՑ-եր	1
2.	Որակի ապահովման բաժնի ռազմավարական ծրագիր	1
3.	Որակի ապահովման բաժնի 2016-2021թթ. ժամանակացույց	1
4.	Գրադարանի ռազմավարական ծրագիր և 2016-2021թթ. ժամանակացույց	1
5.	ԱՀՈՒ հիմնախնդիրների վերլուծության հիմքեր	1
6.	2011-2016թթ. ռազմավարական ծրագիր	1
7.	Հետազոտության ոլորտի ռազմավարությունը 2016-2021թթ.	1
8.	Հեռավար ուսուցման ռազմավարական ծրագիր 2014-2016 թթ.	1
9.	Հարցաթերթիկների համեմատական վերլուծություն	1
10.	Աշխատաշուկայի վերլուծություն	1
11.	Գործատուների կողմից ուսանողների գիտելիքների գնահատման ամենամյա հարցումներ և վերլուծություն	1
12.	2015-2020 թթ. Զարգացման ծրագրի հաշվետվություններ	1
13.	Վերից վար հաշվետվողականության օրինակներ /վերջին 5 տարիների համար/	1
14.	Ամբիոնների, ստորաբաժանումների տարեկան պլաններ	2
15.	Ամբիոնների հաշվետվություններ	2
16.	Նիստերի արձանագրություններ /վերջին երեք տարիների համար/	2
17.	Դասացուցակներ /2021-2022 ուսումնական տարվա համար/	3
18.	Մատյաններ /յուրաքանչյուր կուրսից՝ մեկական/	3
19.	Ավարտական աշխատանքներ / վերջին երեք տարվա համար՝ յուրաքանչյուր կրթական ծրագրի համար երկուական/	3
20.	Դասալսումների մատյաններ / ամբիոններից մեկական/	3
21.	Դասախոսների պորտֆոլիոներ, դասախոսի պլաններ /յուրաքանչյուր ամբիոնից՝ հինգական/	3
22.	Պրակտիկաների լրացրած օրագրեր/ ընտրված 3 կրթական ծրագրերի համար՝ 4-ական/	3
23.	Ուսումնական խորհրդատուների կազմ, խորհրդատվության թեմաներ և հաշվետվություններ	3
24.	Տնօրինական խորհրդի ձևավորման կանոնակարգ	2
25.	Տնօրինական խորհրդի կողմից ներկայացված առաջարկություններ	2
26.	Ամբիոնի նիստերի արձանագրություններ, որտեղ քննարկվել և լուծվել են ուսանողների կողմից բարձրացված հարցեր	2
27.	Մշտադիտարկումների իրականացման ժամանակացույց և վերլուծությունների հիմքեր	2
28.	ՈՆԱՀ-ի վերլուծություն	2
29.	Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների համակողմանի ուսումնասիրություն	2
30.	Ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրություն	2

31.	Կայքում և սոցիալական ցանցերում հրապարակված տեղեկությունների արդյունավետության և վարկանիշի վերլուծություն	2
32.	Վերջին 3 տարիների ընթացքում որևէ նոր առարկայի կամ մոդուլի ծրագիր, որը նախաձեռնվել է քոլեջի կողմից	3
33.	Դասավանդման մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով յուրաքանչյուր կրթական ծրագրով սովորողների և աշխատակիցների շրջանում իրականացված հարցումներ	3
34.	Պրակտիկայի վայրերի ցանկ՝ ըստ մասնագիտությունների	3
35.	Մոդուլի գնահատման սանդղակներ	3
36.	Պրակտիկայի օրագիր և հաշվետվություն	3
37.	Ավարտական աշխատանքների գնահատման չափանիշներ	3
38.	Բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ	3
39.	Արտաքին կապերի և միջազգայնացման հայեցակարգ	3
40.	Եվրոպական երկրների ՄԿՈԻ հաստատությունների լավագույն փորձի ուսումնասիրման հիմքեր	3
41.	Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ, մոտեցումներ, սկզբունքներ, գործընթացի նկարագիր, վերանայման հիմքեր	3
42.	Գործատուների, պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների և այլ շահագրգիռ կողմերի առաջարկություններ, քննարկումների հիմքեր, արդյունքներ	3
43.	Մշտադիտարկման վերլուծություն և դրա արդյունքում կազմված բարելավված ծրագիր	3
44.	Ուսումնամեթոդական խորհրդի արձանագրություններ	3
45.	Կառավարման խորհրդի արձանագրություններ	3
46.	Կառավարման խորհրդում ընդգրկված ուսանողների կողմից արված առաջարկությունների հիմքեր	4
47.	Ուսանողական խորհրդի կողմից բարձրաձայված խնդիրների հիմքեր	4
48.	Կարիերայի կենտրոնի կողմից անցկացված անհատական և խմբային խորհրդատվությունների, քննարկումների հիմքեր	4
49.	Կարիերայի կենտրոնի խորհրդատուների կողմից անցկացված մասնագիտական թեստերի օրինակներ	4
50.	Քոլեջի ղեկավար և մանկավարժական աշխատողների գնահատման, նրանց խրախուսման կամ պատասխանատվության ենթարկելու կարգ և համապատասխան հիմքեր	5
51.	Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման ընթացակարգի կիրառման հիմքեր	5
52.	Դասախոսական կազմի ռեզերվ	5
53.	Մրցույթի արձանագրություն, որում երևում է, որ թեկնածուն / թեկնածուները/ չեն ընտրվել	5
54.	Դասախոսի և նրա վարած դասընթացի գնահատման ընթացակարգ և կիրառման հիմքեր	5




55.	Դասախոսական կազմի պարբերական գնահատման ընթացակարգով նախատեսված գնահատման լրացված սանդղակներ, աղյուսակներ կամ ձևաթղթեր վերջին երեք տարիների համար	5
56.	Ուսանողների կողմից դասավանդողերի գնահատման լրացված հարցաթերթիկներ	5
57.	Վերապատրաստումների փաթեթներ	5
58.	Մեթոդական զեկուցումներ	5
59.	Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական լրացված օրինակներ	5
60.	Ուսուցման կարճաժամկետ /լրացուցիչ ուսուցում/ ծրագրերի, մասնագիտությունների, հետազոտական և վերլուծական աշխատանքների արդյունքների հիման վրա նոր մասնագիտությունների ներդրման արդյունքում ընդլայնված մասնագիտությունների ցանկ	6
61.	ՎՁՏՊՔ և «Բիզնես կրթություն և համագործակցություն» հիմնադրամի հետ՝ «Մասնագիտական կրթություն և ուսուցում (ՄԿՈԻ) համագործակցությունը Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում կատարված հետազոտություններ և վերլուծություններ	6
62.	Երիտասարդ դասախոսների գործունեության խրախուսման քաղաքականություն և ընթացակարգեր, կիրառման հիմքեր	6
63.	Բյուջեի կատարման կառավարման և մշտադիտարկման նպատակով եռամսյակային կտրվածքով լիազոր մարմնին ներկայացված հաշվետվությունների օրինակներ	7
64.	Ռեսուրսների պլանավորման, իրականացման և արդյունավետության գնահատման հիմքեր	7
65.	Կրթական ծրագրերի և դրանց համապատասխան շնորհվող որակավորումների մասին տեղեկատվության արդյունավետության գնահատման հիմքեր	7
66.	Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների և աշխատողների անվտանգ միջավայրի ապահովման հարցերով զբաղվող աշխատանքային խմբի գործունեության աշխատանքային պլան, հաշվետվություն, վերլուծություններ	7
67.	Անուշավան և Օֆիկ Աբրահամյաններ կրթական հիմնադրամին, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացվախ հաշվետվություններ	8
68.	Մասնագիտական և հասարակական միջոցառումների օրակարգեր, արդյունքներ	8
69.	Հասարակական ծրագրերում քոլեջի ներգրավման հիմքեր	8
70.	Քոլեջի մասնագետների ուժերով ստեղծված կայքերի գործունեության հիմքեր և արդյունքներ	8
71.	«Արմաթ» ինժեներական լաբորատորիայի գործունեության հիմքեր, վերլուծություններ	8
72.	Քոլեջի համակարգչային կենտրոնում կազմակերպված սեմինարների սեմինարների, հանդիպումների, բանավեճերի հիմքեր	8

73.	Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների շրջանակներում կազմակերպված բաց դռների օրերի, ցուցադրությունների և առցանց հանդիպումների հիմքեր	8
74.	Առարկաների դրվածքների օրինակներ	10
75.	Որակի ներքին ապահովման համակարգի գնահատման վերլուծություններ	10

#### ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. ստորաբաժանումներ,
3. համակարգչային լսարաններ,
4. «Արմաթ» ինժեներական լաբորատորիա,
5. խոհարարական լաբորատորիա,
6. փայտամշակման կենտրոն,
7. գինեգործության լաբորատորիա,
8. ջերմոց,
9. անատոմիայի և առաջին օգնության կաբինետ,
10. կարի արտադրամաս-լսարան,
11. մեքենաշինության և տրանսպորտի շահագործման լսարան,
12. գրադարան:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



## ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

**ԱՀՈՒ-** աշխատանքի վրա հիմնված ուսուցում

**ԳԱԱՑ-** գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ

**ԿԳՄՄ նախարարություն-** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

**ՄԿԾ-** մասնագիտության կրթական ծրագիր

**ՄԿՈՒ-** Մասնագիտական կրթություն և ուսուցում

**ՄՈՒՀ-** մասնագիտական ուսումնական հաստատություն

**ՈԱ-** որակի ապահովում

**ՈԱԱԿ -** Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

**ՈԱՇ-** որակավորումների ազգային շրջանակ

**ՌԾ-** ռազմավարական ծրագիր

**ՎՁՏՊՔ-** Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ

**ՈՒԽ-** ուսանողական խորհուրդ

**ՈՒՕ կազմ-** ուսումնաօժանդակ կազմ